



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

**CENTER FOR THE STUDY
OF NATIONALITIES PROBLEM AND GENOCIDE**

**SERIES
"THE UNCEASING TOLL"**

Volume 3

THE ARMENIAN GENOCIDE

CAUSES AND LESSONS

**Dedicated to
the 80th Anniversary
of the Armenian Genocide**

YEREVAN - 1995

**ЦЕНТР ИЗУЧЕНИЯ
НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА И ГЕНОЦИДА**

**СЕРИЯ
"НЕСМОЛКАЕМАЯ КОЛОКОЛЬНЯ"**

Выпуск 3

**ГЕНОЦИД АРМЯН
ПРИЧИНЫ И УРОКИ**

Посвящается
80-летию
Геноцида Армян

ЕРЕВАН - 1995

**ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ
ԵՎ ԳԵՆՈՑԻԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**"ԱՆԼՈՒՆԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ"
ՄԱՏԵՆԱՇԱՐ**

Մաս 3

**ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ԴԱՄԵՐ

Նվիրվում է
Հայոց Ցեղասպանության
80-ամյակին

ԵՐԵՎԱՆ - 1995

Գրախոսներ՝ Երևանի Պետական համալսարանի
հայոց Պատմության,
համաշխարհային Պատմության,
միջազգային դիվանագիտության
Պատմության և տեսության ամբիոն-
ներ

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆ


**ՊԱՆԹՈՒԻՐՔԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐՈՒՄ**

*Ազգային հարցի և գեոցիոգի ուսումնասիրման
կենտրոնը "Անլուելի զանգակատուն" մատենաշարով
ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում հայոց
ցեղասպանության Պատմությանն առնչվող գիտական
ուսումնասիրությունների շարքի երրորդ ժողովածուն:
Ջետեղված հոդվածները ընթերցվել են կենտրոնի
կազմակերպած գիտաժողովում: Հոդվածներում
քննարկվում են երիտթուրքերի ազգային քաղաքակա-
նության, բոլշևիկների ցեղասպանության նկատմամբ
ունեցած դիրքորոշման, եղեռնից փրկված հայ գաղ-
թականության տեղաբաշխման և հայոց ցեղասպա-
նության հետ առնչվող այլ հիմնահարցեր:*

*Նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն
շրջանների համար:*

© Ազգային հարցի և Գեոցիոգի ուսումնասիրման կենտրոն, 1995թ.

ԵՊՀ Գրադարան



SU0214078

Օսմանյան կայսրության 20-րդ դարի առաջին կեսի պատ-
մության մեջ Իթթիհադ վե Թերաքքի («Միություն և առաջադի-
մություն») կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներն
ուսանձնահատուկ տեղ են գրավում: Նրանցում վերջնականա-
պես ընդունվեց կուսակցության ծրագիրը, ճշտվեցին կառուց-
վածքային հարցերը, պանթուրքիստները կարևոր դիրքեր զբա-
ղեցրին Իթթիհադի ղեկավարությունում և նրանց ճնշման տակ
տեղի ունեցավ իր անկենսունակությունը դրսևորած օսմանիզմի
փոխարինումը պանթուրքիզմի գաղափարախոսությամբ: Այս-
պես կոչված «Սալոնիկի գործընկերներ» խմբավորումը կարողա-
ցավ ամրապնդել իր ղեկավար դիրքերը կուսակցությունում, ինչը
հետագայում թույլ տվեց ամբողջ իշխանությունը կենտրոնացնել
Թալեաթ-Ընվեր-Ջեմալ եռապետության ձեռքում:

Գիտական շրջանառության մեջ Իթթիհադի համագումար-
ների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների բացակայու-
թյան պատճառն այն է, որ 1918 թ. դոկտոր Նազրմի կողմից թաքց-
վել է կուսակցության արխիվը: Հարկավոր է նաև հաշվի առնել,
որ «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը ընդ-
օրինակել էր մասոնական օթյակների գաղտնապահության մե-
թոդները, և նրանց օրինակով կուսակցության ոչ բոլոր որոշում-
ներն էին արձանագրվում: Ծատ դեպքերում կենտրոնական կո-
միտեի կողմից ընդունված որոշումները բանավոր հաղորդվում
էին կուսակցության մասնաճյուղերին ի կատարումն:

Այդ պատճառով համագումարներում տեղի ունեցած պայ-
քարի և ընդունված որոշումների մասին կարող ենք դատել ար-
խիվային սակավաթիվ նյութերի և կուսակցության անդամների

¹ Orhan Koloğlu. İttihatçılar ve masonlar. İstanbul 1992. s. 293.

² А. Г. Авакян, Масонство в рядах Иттихад ве Теракки, Вестник
общественных наук, Ер., 1994, N5 (588).

հուշագրությունների հիման վրա: Նրանցում պահպանվել են մի շարք որոշումների կետեր և շրջաբերականներ:

Առհասարակ, «Միություն և առաջադիմությունը» հեռու էր կուսակցություն լինելուց: Դա ավելի շուտ շարժում էր, որը սկզբնական շրջանում փորձում էր իր շուրջը համախմբել սուլթան Աբդուլ Համիդի ընդդիմադիր բոլոր ուժերը: Ինչպես նշում է թուրք պատմաբան Մյունիթ Սուլեյման Չափանօղլուն. «Թեև Իթթիհատ վե Թերաքքի կազմակերպության 1913 թ. համագումարում ընդունվեց «կազմակերպությունը հավասար է կուսակցության» բանաձևը, այն մինչև վերջ էլ չկարողացավ ազատվել կենտրոնական կոմիտեի, այսինքն յուրատեսակ քաղաքական դեկավարությանը առաջնորդվող կազմակերպություն լինելուց»:¹ Այդ կազմակերպությունն իր կառուցվածքով և նպատակներով մասնական հաստատությունների հետ ավելի շատ ընդհանուր գծեր ուներ, քան եվրոպական տիպի քաղաքական կուսակցության հետ: ... Այդ պատճառով «երիտթուրքերի կուսակցության» մասին խոսելը նույնքան անհնարին է, որքան «դեկաբրիստների կուսակցության» մասին խոսելը»:²

Մինչև 1908 թ. հեղաշրջումը և նույնիսկ որոշ ժամանակ անց կազմակերպությունը քաղաքական ծրագիր չուներ: 1908 թ. հուլիսի 26-ին «Միություն և առաջադիմության» կենտրոնական կոմիտեի անդամ Ռահմի բեյը «Le Temp» թերթին տված հարցազրույցում նշել է. «Դուք հարցնում եք մեր քաղաքական ծրագրի մասին: Նման ծրագիր մենք չունենք: Մինչև այսօր մենք աշխատեցինք կործանելու համար: Այժմ աշխատում ենք Հիմնական օրենքի (1876 թ. Սահմանադրության - Ա.Ա.) տառացիորեն պաշտպանության համար»:³

Կուսակցության առաջին ծրագիրը մշակվեց և ընդունվեց 1909 թ. աշնանը Սալոնիկում գումարված Իթթիհատի երկրորդ համագումարում: Համագումարի միակ նպատակը կուսակցության քաղաքական ծրագրի մշակումն ու ընդունումն էր: Այդ պատճառով ազգային քաղաքականության խնդիրների առանձնահատուկ քննարկում տեղի չի ունեցել, այլ գրեթե միաձայն ընդունվել է, որ կուսակցությունը հավատարիմ է օսմանիզմի գաղափարախոսությանը և ձգտում է կայսրության ժողովուրդների միավորմանը հանուն սահմանադրական կարգերի և Օսմանյան հայրենիքի բարգավաճման: Ընդունված ծրագրի 10-րդ կետում երիտթուրքերը հայտարարել էին, որ «առաջին աստիճանի տարրա-

կան դպրոցներում ուսուցման լեզուն պետք է լինի այս կամ այն ժողովրդի լեզուն»:⁴

«Միություն և առաջադիմությունը» իր ստեղծման առաջին իսկ տարիներից միասնական, համախոհների կազմակերպություն չէր: Նրա ամբողջ պատմության ընթացքում կուսակցության ներսում տարբեր խմբավորումների պայքար էր գնում: Այդ միջկուսակցական զգվտոցները պայմանավորված էին ոչ այնքան քաղաքական տեսակետների տարբերությամբ, որքան անձնական և նյութական շահերով: «Միայն 1913-14 թթ. կուսակցությանը հաջողվեց հաղթահարել հիմնական ներքին ընդհարումներն ու պատակտումները» [GASI]:

Ի սկզբանե ներսում երկու հակադիր հոսանքներ էին ձևավորվել՝ լիբերալ և ուղիկալ: Լիբերալները համախմբվում էին արքայազն Սաբահեդինի ստեղծած «Ապակենտրոնացման Լիգայի» շուրջ: Կուսակցության ոչ մահմեդական տարրերը հիմնականում այդ թեկն էին հարում: Ռադիկալ հոսանքը ներկայացված էր Ահմեդ Ռիզայի դեկավարած երիտթուրքերի Փարիզի կենտրոնով: 1906 թ. կուսակցության Սալոնիկի կոմիտեի ստեղծումով այդ երկու հոսանքների պայքարին ավելացան նաև երկրի ներսում և դրսում գործող մասնաճյուղերի տարաձայնությունները: Օսմանյան կայսրության ներսում գործող երիտթուրքերն ավելի հզոր ուժ էին ներկայացնում, քանի որ նրանց ազդեցության տակ էին գտնվում Մակեդոնիայում տեղակայված բանակի ստորաբաժանումները: Չնայած 1907 թ. սեպտեմբերի 27-ին Սալոնիկի և Փարիզի կենտրոնների միջև միավորման և ջանքերի համատեղման պայմանագիր ստորագրվեց, բայց հետագայում էլ նրանք պահպանեցին իրենց ինքնուրույնությունը:

Երիտթուրքական շարժման տարբեր խմբավորումներում ուժերի դասակարգման և մյուս կարևոր խնդիրներում մեծ նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ «1908 թ. հեղափոխությունը կայսրության տարածքում գործող երիտթուրքական խմբերի գործունեության արդյունք էր»:⁵ Սալոնիկի կոմիտեն «հեղափոխություն իրականացնողի» համբավ ձեռք բերելով՝ դեկավար դիրքեր գրավեց երկրի կառավարման մեջ:

1908 թ. աշնանը տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Միություն և առաջադիմությունը», ստանալով ձայների մեծամասնությունը, խորհրդարանում իր կուսակցական խմբակցությունը հիմնադրեց: Նրա ղեկավար առաջադրվեց գնդապետ Սադրբեյը, որը կարևոր դեր էր խաղացել 1908 թ. հեղաշրջման մեջ և մեծ հեղինակություն էր վայելում կուսակցության շարքերում: «Ոչ մի իթթիհատական չէր կարող

¹ Munir Süleyman Çapanoğlu. Türkiye'de sosyalist hareketleri ve sosyalist hilkmi. İstanbul 1964. s. 37

² В. А. Гурко-Кряжин. История революции в Турции. М. 1923. с. 34-35.

³ Hasan Amca. Dogmayan hurriyet (1908-1918). İstanbul 1958. s. 39.

⁴ Г. З. Алиев. Турция в период правления младотурок. М. 1973. с. 160.

⁵ Ռ. Ա. Սաֆրաստյան. Օսմանիզմի դոկտրինան երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում 1908-1916. Մտքավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. 6. 15. Եր. 1989. էջ 243:

¹ Ռ. Ա. Սաֆրաստյան. նշվ. աշխ... էջ 242:

² Feroz Ahmad. The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914. Oxford 1969. p. 4.

³ Ю. А. Петросян. Младотурецкое движение. М. 1971. сс. 240-241.

⁴ E. J. Zürcher. The Unionist Factor. The Role of the Committee of the Union and Progress in Turkish National Movement 1905-1926. Leiden 1984. p. 21.

ծխտել գնդապետի դերը հեղափոխությունում»¹: Սադրը պայքար էր տանում Սալոնիկի կոմիտեի իշխանության դեմ, որը նա անիրավական էր համարում: Բացի կուսակցության ղեկավարության հետ ունեցած գաղափարական տարաձայնություններից, գնդապետի ընդհիմնությունն անձնական դրոպայատանտներ էլ ուներ, քանի որ հեղաշրջումից հետո, հակառակ իր հեղափոխական մեծ ծառայություններին, Սադրը կենտրոնական կոմիտեի կազմում չընդգրկվեց: Խորհրդարանական ֆրակցիան ավելի ռադիկալ դիրքերի վրա էր գտնվում, քան Սալոնիկի կենտրոնական կոմիտեն: Ֆրակցիան քննադատում էր կուսակցության ղեկավարությանը՝ նրա վարած ոչ սկզբունքային քաղաքականության համար, հատկապես ազգային հարցերի բնագավառում: Սադրը և նրա համախոհների կարծիքով, կայսրության ճնշված ժողովուրդների ընդդիմության անը պայմանավորված էր ոչ թե հյթիհադի կոչո դիրքորոշմամբ, այլ երկրի օսմանացման, այսինքն քաղաքացիներին օսմանցու ոգով դաստիարակելու խնդրում հստակ ընդգծված քաղաքականության բացակայությամբ:

Իշխանության գրավումից հետո կուսակցությունը որոշ ժամանակ ոչ թուրք տարրերի նկատմամբ բավական չափավոր դիրք էր գրավել, ինչը թելադրված էր այդ տարրերին հյթիհադի շուրջ համախմբելու ցանկությամբ²: Սակայն ցանկալի արդյունքի չհասնելով, վերանայվեց այդ դիրքորոշումը: 1909 թ. ապրիլյան ներկուսակցական ընդդիմության ճնշումից հետո հյթիհադն ազգային հարցում սկսեց գործել գրեթե Արդու համիդյան ոգով, ինչը երկրում «դեպարտիզմի կառավարումը փոխարինեց կուսակցության ճնշումով»:

Մակեդոնական «Ազատագրական բանակի» մուտքը Կ. Պոլիս միաժամանակ կարելի է դիտել որպես «հեղափոխական գարնան» ավարտ: «Մարդկանց միավորման գաղափարը երիտթուրքերի գործելակերպում արդեն փոքրամասնությունների օսմանացման տեսք ընդունեց, որը և արտահայտվեց նրանց հետհեղափոխական քաղաքականության մեջ»:

Այդ փոփոխությունն առաջին անգամ ի հայտ եկավ 1909 թ. ամռանը, երբ կուսակցության խորհրդարանական ֆրակցիայի կողմից բարձրացվեց քրիստոնյա փոքրամասնությունների՝ սահմանադրության ոգուն չհամապատասխանող կրոնական և համայնական արտոնությունների վերացման հարցը: Սակայն քրիստոնյաների, առաջին հերթին հույների համառ դիմադրությունը, ինչպես նաև մեծ տերությունների հակազդեցությունն անհաջողության մատնեցին այդ փորձը:

1909 թ. սկզբին, 1910 թ. վերջում խորհրդատանական ֆրակցիայի ներսում ընդդիմադիր շարժումը դեռ նոր էր ձևավոր-

վում և կուսակցության կառավարման ղեկը բռնած «Սալոնիկի գործընկերների» համար տակավին այնքան վտանգավոր չէր:

1910 թ. սկզբին ավելի լուրջ վտանգ ներկայացնողը 1909 թ. Կ. Պոլսում ստեղծված կուսակցության Կ. Պոլսի կոմիտեն էր, որը կոչվում էր «Գաղտնի կոմիտե»: Նրա ստեղծումն առաջին իսկ օրերից ծրագրվում էր որպես հակազդեցություն Սալոնիկի կենտրոնական կոմիտեին: Կ. Պոլսի կոմիտեի ղեկավարներից մեկը՝ մարտի 31-ի հեղաշրջումը ճնշող, «Ազատության բանակի» հրամանատար Մահմուդ Օկթեթի փաշան էր: 1909 թ. դեպքերից հետո իր հեղինակությամբ նա կայսրության համար առաջին անձնավորությունն էր: «1909 թ. դեպքերն առաջնակարգ դիրքեր ամրապնդեցին Մահմուդ Օկթեթի փաշայի և երիտթուրքերի զինվորական խմբավորման համար»: Ամբողջ բարձրաստիճան սպայությունը համախմբվում է նրա շուրջ: Նկատի առնելով, որ «Միություն և առաջադիմությունը» մեծ մասամբ սպաներից էր կազմված, կարելի է պատկերացնել, թե որքան մեծ վտանգ էր պարունակում «Գաղտնի կոմիտեի» ուժեղացումը Սալոնիկի կենտրոնական կոմիտեի համար: Վերջինս խիստ անհանգստացած էր, որ կուսակցության որոշ մասնաճյուղեր ձգտում են հրահանգներ ստանալ անմիջականորեն Կ. Պոլսի կոմիտեից և նման ճանապարհով ազատվել Սալոնիկի վերահսկողությունից:

Կ. Պոլսի կոմիտեի ազգային քաղաքականության կոնցեպցիան դեռևս միևնույն վերջ ուսումնասիրված չէ, սակայն, որոշ փաստերի վրա հենվելով, կարելի է հանգել այն եզրակացության, որ «Գաղտնի կոմիտեն» հանդիսանալով օսմանիզմի կողմնակից, գտնում էր, որ կուսակցությունը այնտեղ է ավելի ակտիվ գործի երկրի օսմանացման հարցում, առաջին հերթին վերացնի դրան խոչընդոտող քրիստոնյա փոքրամասնությունների առանձնաշնորհումները, հատկապես մայրենի լեզվի դասավանդման բնագավառում: Պետք է նկատել, որ ազգային քաղաքականության վերաբերյալ Կ. Պոլսի կոմիտեի և խորհրդարանական ֆրակցիայի դիրքորոշումները համընկնում էին:

Երկրում գնալով աճում էր կայսրության ճնշված ազգերի բողոքը, Մակեդոնիայում նորից հունական և բուլղարական ազատագրական շարժումներ էին սկսվել: Ներկուսակցական պայքարը և կուսակցության նկատմամբ երկրում աճող դժգոհությունը հանգեցրին նրան, որ կենտրոնական կոմիտեն ստիպված եղավ բազմաթիվ ուղղումներ կատարել կուսակցության ծրագրում: Այդ ուղղումները այնքան շատ էին, որ երկրորդ համագումարում ընդունված ծրագիրը «ծրագրի նախագծի» վերածվեց և նրա հստակեցման անհրաժեշտություն առաջացավ: Բացի այդ, Կ. Պոլսի կոմիտեի և Սալոնիկի կենտրոնական կոմիտեի մրցակցության հետևանքով կուսակցության հատկապես եվրոպական մասնաճյուղերում պատակտում առաջացավ, իսկ որոշ մասնաճյուղեր փլուզման եզրին էին:

Այդ պայմաններում հերթական (երրորդ) համագումարի պատրաստությունները սկսվեցին: Հարկ է նշել, որ թեև 1910 և

¹ Orhan Koloğlu. Ա շվ. աշխ... p.293.

² Ahmad Feroz. Ա շվ. աշխ... p. 84.

³ Munir Suleyman Capanoglu. Ա շվ. աշխ... s. 20.

⁴ E. J. Zureyfer. Ա շվ. աշխ... s. 23.

¹ X. 3. Габидуллин. Младотурецкая революция. М. 1936. с. 138.

հատկապես 1911 թթ. համագումարներում ազգային քաղաքականության խնդիրները կարևոր դեր էին խաղում, սակայն երկու համագումարների հիմնական նպատակն էր՝ վերջ դնել կուսակցության ներսում գոյություն ունեցող տարբեր խմբավորումների ներկուսակցական պայքարին և կուսակցությունը փրկել պատակալուստից (չորրորդ համագումար, 1911թ.): Համագումարները տեղի ունեցան տարբեր խմբավորումների սուր պայքարի պայմաններում:

1910 թ. համագումարի նախօրյակին Թալեաթը, Ջափիդը և Ջեմալը Մակեդոնիայով մի շրջագայություն ձեռնարկեցին, տարածայնություններով զբաղված կուսակցության մասնաճյուղերի միջև ներդաշնակություն հաստելու և Սալոնիկի կենտրոնի իշխանությունն ամրապնդելու նպատակով: Զբավարարվելով շրջագայության արդյունքներով, համագումարի բացումից մեկ օր առաջ, Սալոնիկում Թալեաթը իր կողմնակիցների գաղտնի ժողով գումարեց: Նրանց վստահությունը ներշնչելու համար Թալեաթը, դիտավորյալ չափազանցելով Սալոնիկի կենտրոնի հնարավորությունները մայրաքաղաքում, պնդում էր, թե «ներկայումս ղեկավարման սանձերն ամբողջովին մեր ձեռքին են և կառավարությունն էլ հիմնականում կենտրոնական կոմիտեի ձեռքին է: Մեզ է պատկանում նաև ձայների մեծամասնությունը ներկայացուցիչների պալատում, և խորհրդարանում մեզ հակադրվելու բոլոր փորձերը տապալված են»: Սակայն նա ստիպված էր նաև խոստովանել տարբեր խմբավորումների միջև սուր պայքարի գոյությունը. «որոշ դեպքերում Ջափիդ բեյը, ես և մյուսները ի վիճակի չենք լինում հասնելու մեր ցանկացած արդյունքին...»:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ համագումարի բացումը տեղի ունեցավ Սալոնիկում, 1910 թ. օգոստոսի վերջին: Այն տևեց 13 օր: Համագումարում ելրոպական մասնաճյուղերի պատգամավորները մեծամասնություն էին կազմում: Առաջին իսկ օրերից սուր պայքար գնաց Սալոնիկի կենտրոնական կոմիտեի, խորհրդարանական ֆրակցիայի ղեկավարների և «Գաղտնի կոմիտեի» միջև: Այդ պայքարի կարևորագույն կետերից էր ազգային քաղաքականության խնդիրը, որը համագումարին ներկայացված էր կայսրության օսմանացման տեսքով: Ազգային քաղաքականության ճշտման հարցերը քննարկվեցին համագումարի գաղտնի նիստում: Քննարկումը սկսվեց Սաղըք բեյի ելույթից հետո, որը դեռևս 1909 թ. համագումարում «Սալոնիկի գործընկերներին» մաստնների և սիոնիստների հետ կապեր ունենալու մեղադրանքները կրկնելով, պնդում էր, որ այդ պատճառով կուսակցության ղեկավարությունում տեղ գտած անձինքն ազգային քաղաքակցության խնդրում նման անհետևողականություն են դրսևորել: Ըստ Սաղըք բեյի, կայսրության տարբեր

ժողովուրդներին օսմանացման ոգով դաստիարակելուն կարելի է հասնել միայն միասնական կրթական համակարգի միջոցով: Իսկ այն պետք է լինի միայն թուրքերեն և առաջնորդվի կառավարության կողմից մշակված կրթական ծրագրով: Այս դրույթի պաշտպանությամբ հանդես եկավ կենտրոնական կոմիտեի անդամ բժիշկ Նազըմը: Նրա կարծիքով՝ «Միություն և առաջադիմությունը» պետք է դարձնել այն հանգրվանը, որի շուրջ պետք է համախմբվեն օսմանյան ազգի ուժերը»:

Կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազգային լեզուների ճանաչման և դասավանդման հարցը երիտթուրքերի և այդ ժողովուրդների միջև առկա մշտական տարածայնություններից մեկն էր: Դեռևս 1909 թ. խորհրդարանում լեզվի հարցի քննարկման ժամանակ Կ. Պոլսի պատգամավոր Վարդգես Սերենկյույանը նշել է. «Մենք օսմանցի ենք: Մենք թուրք չենք, պաշտոնական լեզուն թուրքերեն է: Դրա համար բոլոր պաշտոնական գործարքներում հայերն այդ լեզուն են օգտագործում: Սակայն հայությունը և հայոց լեզուն չեն մոռանում: Այն ժամանակ, երբ մենք ցանկանում ենք Սահմանադրությունում զարգացնել ազգային գերիշխանության գաղափարը, քանհրաժեշտ է ճանաչել յուրաքանչյուր տարրի իրավունքները»:

Ի հակառակ դրա, երիտթուրքերը թուրքերենի տարածման մեջ էին տեսնում օսմանացման և թուրք ազգի գերիշխանության ամրապնդման ամենակարևոր պայմանը:

Նիստում Թալեաթը հատուկ ուշադրություն էր փրավիրել առ այն, որ սահմանադրական կարգերի հաստատումը բնավ չի նշանակում թուրք ազգի գերիշխանության տապալում և կայսրության բոլոր ժողովուրդներին միևնույն իրավունքների շնորհում: «Օսմանյան կայսրությունը թուրքական պետություն է և երբեք չպետք է մոռանալ այդ», - նշել է Թալեաթը:

Այսուհանդերձ, 1910 թ. աշնանը երիտթուրքական մասնաճյուղերից շատերը դեռևս հնարավոր էին համարում կայսրության ազգերին խաղաղ ճանապարհով ձուլելու վերջին փորձը ձեռնարկել: Հաշվի առնելով նաև 1910 թ. Ալբանիայում ծագած ապստամբությունը և իրարանցումները Մակեդոնիայում և Իրավիայի վիլայեթներում, համագումարը գերադասեց չգրգռել կայսրության ոչ թուրք տարրերին և պահպանել երերում ու խաբուսիկ միասնությունը հանուն սահմանադրական կարգերի ամրապնդման: Համագումարն ազգային քաղաքականության վերաբերյալ ընդունած բանաձևում որոշեց, որ «կուսակցությունը, հաստատելով իր նվիրվածությունն օսմանիզմին, ձգտում է կայսրության ժողովուրդների ոչ թե միաձուլմանը, այլ միավորմանը: Յուրա-

են և միաժամանակ սիոնիստների ձեռքին գործիք են հանդիսանում»: Նա պահանջել է վտարել նրանց կուսակցությունից. Orhan Kologlu. Աշվ. աշխ...ss.175-176.

¹ Munir Suleyman Capanoglu. Աշվ. աշխ...s. 25.

² Gulnibal Bozkurt. Gayrimuslim osmanli vatandaslarinin hukuki durumu (1839-1914) Ankara 1989. s. 200.

³ Rene Pinon, L'Europe et la Jeune Turquie, Paris 1913, p. 101-102.

¹ Feroz Ahmad. Աշվ. աշխ...p. 84.

² Feroz Ahmad. Աշվ. աշխ...p.85.

³ Երկրորդ համագումարում Սաղըք բեյը հանդես գալով «Սիոնիզմը և մասոնությունը» գեկույցով, պնդել է, որ «Թալեաթը, Ջափիդը, Ջահիդը, Ահմետ Ռիզա բեյերը և ուրիշները մասոնական օթյակների անդամներ

քանչյուր ժողովուրդը իրավունք ունի օգտվել իր ազգային լեզվից»¹։ Դա արտահայտվեց կուսակցության ծրագրի 10-րդ կետում, որտեղ ասվում է. «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը հավաստում է իր նվիրվածությունը օսմանիզմին։ Երկրում ապրող բոլոր ազգերը հանդիսանում են օսման ազգի բաղկացուցիչ տարրեր։ Բոլոր ժողովուրդները իրավունք ունեն օգտվելու իրենց ազգային լեզվից, բայց կայսրության պաշտոնական լեզուն թուրքերենն է։

Ազգային քաղաքականության հետ սերտորեն առնչվում էր վիլայեթների իրավունքների ընդլայնման խնդիրը։ Այդ հարցը ծագել էր դեռևս 1902 թ. Փարիզում տեղի ունեցած Օսմանյան ընդդիմադիր ուժերի առաջին համագումարում։

Վիլայեթներին լրացուցիչ իրավունքներ շնորհելու դեմ խիստ պայքար տարավ Դիարբեքրի պատգամավոր Ջիա Գյոք Ալպը։ Նա կտրականապես դեմ արտահայտվեց կուսակցության ծրագրում այդ ուղղությանը որևէ փոփոխության իրականացմանը, քանի որ, քան նրա, վիլայեթներին լրացուցիչ իրավունքներ տալը կարող է միայն մեկ արդյունք ունենալ՝ կազմալուծել ամբողջ կայսրության կառավարումը։

Համագումարի վերջին ցիստերը նվիրված էին Կենտրոնական Կոմիտեի անդամների ընտրությանը։ Դա համագումարի ամենատար պահերից էր, քանի որ «Սալոնիկի գործընկերներն» ակտիվորեն աշխատում էին խոչընդոտել ընդդիմադիր խմբավորումների ներկայացուցիչների ընտրությանը կուսակցության դեկլարատոր մարմնում։ Արդյունքում՝ նախորդ համագումարում ընտրված Թալեթի, Նազրմի, Բեհետդդին Շաքիրի և մյուսների հետ միասին ընտրվեցին կուսակցության երկրորդ զօն, պանթուրքիստական հոսանքի ներկայացուցիչներ՝ Ջիա Գյոք Ալպը և Հուսեյին զադե Ալին։

Ջիա Գյոք Ալպի և Հուսեյին զադե Ալիի ընտրությունը պատահական չէր։ Ջինվորական խմբավորման աճող ազդեցության դեմ պատենշ ստեղծելու և իր իշխանության ամրապնդման համար մղած պայքարում Սալոնիկի Կենտրոնական Կոմիտեն կուսակցության ներսում նոր հենարան էր փնտրում։ Նման հենարան կարող էր հանդիսանալ Ջիա Գյոք Ալպի գլխավորած պանթուրքիստական հոսանքը։ Վերջինս ի տարբերություն թուրքիստների, «օսմանյան հայրենիքի» գաղափարի կողմնակիցն էր։ Սա-

լոնիկի կենտրոնը ջանքեր էր գործադրում այդ հոսանքի համակրանքը շահելու համար։ Ջիա Գյոք Ալպի և Հուսեյին զադե Ալիի ընտրությունը Սալոնիկի կենտրոնի և պանթուրքիստական հոսանքի մերձեցման առաջին քայլն էր։

1910 թ. Ջիա Գյոք Ալպը «Միություն և առաջադիմություն» արդեն բավականին ամուր դիրքեր էր զբաղեցնում։ Այն ժամանակ նա ակտիվ աշխատանք էր տանում թուրքերեն լեզվի մաքրման և զուտ թուրքական մշակույթի ստեղծման ուղղությամբ։ Ինչպես վկայում է երիտթուրքական շարժման ակտիվ գործիչ Քյազըմ Նամը Դուրուն. «Նոր լեզվի գործը խոր հետաքրքրություն առաջացրեց գրականությանը զբաղվող Սալոնիկի երիտասարդության շրջանում։ Մենք բոլորս համախմբվեցինք։ Ջիա-յի գլխավորությամբ Իթթիհատի դպրոցում սկսեցինք գիշերային հավաքներ կազմակերպել»։

Ջիա Գյոք Ալպի ընտրությունը պանթուրքիզմի զարգացման խթան հանդիսացավ։ «Ընտրություններից հետո թուրքիզմի դրոշը իր ձեռքը վերցրած այս անձնավորությունը (Ջիա Գյոք Ալպը - Ա.Ա.) նրա գաղափարախոսության տարածման համար ավելի լայն հնարավորություն ստացավ»²։ Ինչպես հիշում է Դուրուն. «Ջիան համագումարում բոլոր պատգամավորների մեջ իրեն դրսևորեց որպես քիչ խոսող, շատ բան պատմելու ունակ, շատ կրթված մի անձնավորություն և բոլոր մասնակիցների հարգանքը շահեց»։

Համագումարից հետո Ջիա Գյոք Ալպը եռանդուն գործունեություն ծավալեց։ «Լեզվի գործն էր շարունակում, անընդհատ զարգացնում էր պանթուրքիզմի հոսանքը։ Նա Իթթիհատ վե Թե-րաքքիում իր շուրջն էր հավաքում երիտասարդներին։ Գրականագետներին, գիտնականներին նոր ուղիներ ցույց տալու համար «Yeni Mecmu» («Նոր ամսագիր») էր հիմնադրում, մյուս կողմից՝ Հալիլ Սաքիթին օժանդակում «Islam Mecmuasi» («Իսլամական ամսագիր») տպագրելու գործում։ Փորձում էր երիտասարդության շարքերում ընտրել նրանց, ովքեր ցանկանում էին մեթոդաբար աշխատել»։ «Բնակվելով Սալոնիկում, Ջիան այժմ դառնում է համազգային նշանակության անձ։ Նոր կառավարիչները կհատկապես Թալեթը բերել, նրան մոտ ընկեր են համարում»։ Կենտրոնական Կոմիտեում Գյոք Ալպը զբաղվում էր նաև գաղափարախոսական հարցերով, ինչը նպաստում էր նրա ձեռնարկած գործերին։

1911 թ. Օսմանյան կայսրությունում պանթուրքիզմի գաղափարախոսության քարոզչությունն ուժեղացնելու նպատակով սկսում են «թուրքական օջախ» անվանվող ակումբներ ստեղծվել։ Նույն թվականին Կ. Պոլսում «Երեք քաղաքական համակարգ»

¹ Kâzım Nami Duru. ЭЯН. ЯЯІ...s.3.

² Kâzım Karâbekir. Cihan harbine neden girdik, nasil girdik, nasil idare ettik. Istanbul 1937. kitap 2. s. 72

³ Kâzım Nami Duru. Աշվ. աշխ...s.2.

⁴ Kâzım Nami Duru. Աշվ. աշխ...s.14.

⁵ Uriel Heyd, Foundations of Turkish Nationalism, London 1950, p.31.

¹ Ռ. Ա. Սաֆրաստյան. Աշվ. աշխ... էջ 244;

² Kâzım Nami Duru. Ziya Gokalp. Istanbul 1965. s. 47.

³ Зареванд. Турция и пантуранизм. Париж 1930 с. 43. Алл бсбЯ տեղեկությունների, Ջիա Գյոք Ալպը ԿԿ անդամ առաջին անգամ ընտրվել է 1909 թ. համագումարում։ Այսպես, Ուլիեի Հեյդը իր «Թուրքական նացիոնալիզմի հիմքերը» գրքում գրում է. «Ջիա Գյոք Ալպի կյանքի նոր շրջանը սկսում է 1909 թ. աշնանը, երբ որպես Դիարբեքրի պատգամավոր հրավիրվեց մասնակցելու «Միություն և առաջադիմություն» կուսակցության համագումարին։

Նա ընտրվեց ԿԿ անդամ և զբաղեցրեց այդ պաշտոնը մինչև կուսակցության տապալումը 1918 թ.», Uriel Heyd, Foundations of Turkish Nationalism, London 1950, p. 31.

վերնագրով մի գրքույկ է լույս տեսնում, որում հիմնավորվում է, թե կայսրության ապագան կապված է ոչ թե օսմանիզմի կամ պանիսլամիզմի, այլ պանթուրքիզմի հետ: 1911 թ. լույս է տեսնում նաև Ջիա Գյոք Ալպի «Թուրան» պոեմը:

«Ահմեդ Միդհաթի, Մեհմեդ Էմինի, Ահմեթ Հիքմեթի, Յուսուֆ Աքչուրայի, ղոկտոր Ադիլ Մուհթարի ղեկավարած մի խումբ հավատացյալ թուրք-ազգայնականների կողմից 1911 թ. «Turk Dernegi» (Թուրքական միություն) կազմակերպություն ստեղծվեց: Այն համանուն ամսագիր էր հրատարակում:

«Turk Dernegi» վերնագրով յոթ համար լույս տեսնելուց հետո այն փոխեց իր անունը և դարձավ «Turk Yurdu» (Թուրքական հայրենիք): Նրա հրատարակումը դրական ազդեցություն ունեցավ թուրքիզմի գարգացման գործում, թուրքիզմի պատմության մեջ առանձնահատուկ տեղ գրավեց...»:

Ջիա Գյոք Ալպի ընտրությունը պանթուրքիզմի գաղափարախոսության համար իրոք առանցքային նշանակություն ունեցավ: Պանթուրքիստները կարողացան ամրապնդել իրենց դիրքերը ինչպես կուսակցության ներսում, այնպես էլ երկրում:

1911 թ. գարնանը մի խումբ երիտթուրք-պատգամավորներ գնդապետ Սադրք բեյի և Աբդուլազիզ Մեջիդի առաջնորդությամբ հայտարարեցին Իթթիհատի խորհրդարանական ֆրակցիայից դուրս գալու և նոր կուսակցություն հիմնադրելու մասին: Այն կոչվեց «Hizb-i Cedid» («Նոր կուսակցություն»): Իր հայացքներով «Նոր կուսակցությունը» պահպանողական բնույթ ուներ և հանդես էր գալիս երիտթուրքերի սոցիալական և քաղաքական ծրագրերի քննադատությամբ, գտնելով, որ Իթթիհատի բարեփոխումների ծրագրերը խորթ են իսլամի և Օսմանյան կայսրության սկզբունքների: Ըստ նրանց, բարեփոխումները չպետք է հակասեն շարիաթին և դրանք իրականացնելիս միշտ պետք է նկատի ունենալ կայսրության մահմեդական լինելը: Դրա հետ մեկտեղ, «Նոր կուսակցությունը» ճանաչում էր օսմանյան ազգը կազմող բոլոր տարրերի հավասարությունը¹:

Նույն 1911 թ. «Միություն և առաջադիմությունից» անջատվեց այսպես կոչված «ձախ խումբը»՝ «Hizb-i Terakki» («Առաջադիմության կուսակցություն»), որի մեջ մտնում էին պատգամավորներ Մուսթաֆա Արիֆը, Ջամին, Մահիթ Սահիդը, ղոկտոր Ռեզա Թևֆիկը, ղոկտոր Ռիզա Նուրը և մյուսները: Ի տարբերություն «Նոր կուսակցության», «ձախ խումբը» կուսակցության ծրագրի որևէ էական փոփոխություն չէր պահանջում, այլ հանդես էր գալիս խորհրդարանական ֆրակցիայի գործունեության քննադատությամբ:

Սալոնիկի կենտրոնն ավելի ծանր կացության մեջ էր հայտնվել, քան երրորդ համագումարի նախօրյակին: 1911 թ.

նուս դեսպան Չարիկուլը Պետերբուրգ հրած հեռագրում, նկարագրելով կայսրության ներքին քաղաքական իրավիճակը, գրում է. «Գործերի նման դրության արմատները ես տեսնում եմ երիտթուրքական կուսակցության Սալոնիկի կենտրոնական կոմիտեի և նույն կուսակցության Կ.Պոլսի ազդեցիկ անդամների, որոնք այստեղ 9 հոգուց կազմված «Գալտմի կոմիտե» են ստեղծել, միջև աճող ներհակության մեջ»: Մակեդոնիայում նորից սկիզբ առած ազգային-ազատագրական պայքարը, հայկական դաշնության ձևավորումը, ապստամբություններն Ալբանիայում և Արավիայում, Իտալիայի ռազմական և դիվանագիտական պատրաստությունները Թրիպոլիին և Կիրենաիկան զավթելու համար, էլ ավելի ծանրացրին կայսրության առանց այն էլ դժվար քաղաքական իրավիճակը:

Հերթական համագումարի նախօրյակին Սալոնիկի կենտրոնական կոմիտեի և Ջիա Գյոք Ալպի գլխավորած պանթուրքիստական խմբավորման միջև հարաբերությունները գնալով սերտանում էին: Իրենց հայացքներով պանթուրքիստները խորթ էին նաև կուսակցության ավանդական թեկն, քանի որ վերջիններս հենվում էին շարիաթի, իսլամի վրա, իսկ պանթուրքիստները՝ թուրքական ժողովուրդների պատմական, լեզվական և մշակութային միասնության վրա:

Հանուն կուսակցության միասնության պահպանման Սալոնիկի կենտրոնը ընդդիմության հետ փոխզիջման գնաց: Կենտրոնական կոմիտեում տեղի ունեցած երկար բանավեճերից հետո 10 կետանոց ծրագիր մշակվեց, որը բավարարում էր ավանդական և լիբերալ թևերի պահանջներին: Հետագայում այդ ծրագիրը, 1911 թ. համագումարի հավանությունը ստանալով, ներսովեց նրա բանաձևերում: Ծրագրի հիմնական դրույթներից էր այն, որ կայսրության եվրոպականացումը պետք է առաջին հերթին համատեղվի իսլամական օրենսդրության և կայսրության սուրբ ավանդույթների հետ: Հստակ ընդգծվում էին նաև կայսրության մահմեդական բնույթը և թուրքերի գեղիշխող դիրքերի պահպանման և ամրապնդման սկզբունքները: Սակայն Սալոնիկի կենտրոնական կոմիտեի անհետևողականության պատճառով չհաջողվեց ընդդիմության հետ համաձայնության գալ: Ինչպես ճիշտ նկատել է թուրք պատմաբան Չափանօղլուն, երիտթուրքերը միշտ գործում էին «իրենց հատուկ բալկանյան կոմիտեների մեթոդներով»²:

Համաձայնության փորձի տապալումից հետո ընդդիմությունն ուժեղացրեց ճնշումը կենտրոնական կոմիտեի վրա: 1911 թ. աշնանը թվում էր, թե մինչև տարեվերջ կուսակցությունն անպայման պատակովելու է, որը կասեցնելու համար ղեկավարությունը հսկայական ջանքեր էր գործադրում: Կուսակցությունը պառակտմանից փրկելը չորրորդ համագումարի առաջնային նպատակն էր: Դրա հետ մեկտեղ Սալոնիկի կենտրոնական կոմիտեն

¹ Ali Kemal Meram. Turkculuk ve turkculuk mucadelerf tarihi. Istanbul 1969. s. 163.

² Feroz Ahmad. Ազվ. աշխ.p.86, տե՛ս նաև Գ. Յ. Агнес, укас. раб., с. 348.

³ Գ. Յ. Агнес, укас. раб., с. 348.

¹ Գ. Յ. Агнес, укас. раб., с. 207.

² Ahmad Feroz. p. 88-89.

³ Mimir Suleyman Capanoglu. Ազվ. աշխ.s.8.

ձգտում էր պահպանել իշխանությունը, իսկ ընդդիմությունը՝ «Իթթիհադի դեկավարությունից վերջնականապես հեռացնել Թալեթին և «Սալոնիկի գործընկերությանը»։ Այդպիսով կուսակցությունն ապահովվելու էր պատվամենտական խմբի գերիշխանությունը»։

Չորրորդ համագումարը տեղի ունեցավ Սալոնիկում սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 9-ը։ Մասնաճյուղերը հիմնականում ներկայացված էին մեկ, իսկ խոշոր քաղաքների՝ երեք պատգամավորով։ Մայրաքաղաքից ներկա էին 5 հոգի։ Բանի որ համագումարի առաջին նստաշրջանի բացումը համընկավ իտալա-թուրքական պատերազմի հետ, շատ երիտթուրք սպաներ ռազմաճակատ մեկնելու պատճառով չկարողացան մասնակցել համագումարի աշխատանքներին (Էնվեր, Հալիլ և այլք)։ Պատերազմի պատճառով օրակարգը փոփոխության ենթարկվեց, և ընդհանուր ժողովը վերանվանվեց «Ազգային Պաշտպանություն Կոմիտե»։

Ընդդիմությունն առաջին իսկ նիստերից հարձակման անցավ. պատերազմի ծագման մեղքը նույնպես վերագրվեց Կենտրոնական Կոմիտեի վարած սխալ քաղաքականությանը։ «Պնդվում էր, որ եթե ժամանակին միջոցներ ձեռնարկված լինեին, Իտալիան աման քայլի չէր համարձակվի դիմել»։ Սակայն, ի վերջո, միայն պատերազմի շնորհիվ կուսակցությունը փրկվեց պառակտումից, քանի որ, ինչպես նշում է Ահմադ Ֆերոզը. «Պատերազմի հուզական մթնոլորտում խնդիրը լուծում չստացավ և ընդդիմությունը, անկարող լինելով պնդելու որոշման վրա, ընդունեց փոխզիջման տարբերակը»։

Կուսակցության ազգային քաղաքականության ծրագիրը քննարկվեց ինչպես բաց, այնպես էլ գաղտնի նիստերում։ Վերջինս մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Այդ նիստին ազգային հարցի վերաբերյալ արտահայտվել են հիմնականում Սադրբեյը, դոկտոր Նազըմը, Ջիա Գյոք Ալպը և Թալեթը։ Սադրբեյը, դարձյալ որպես հաղթաթուրթ օգտագործելով Սալոնիկի կոմիտեի կապը մասոնական օթյակների հետ, պնդում էր, որ Կենտրոնական Կոմիտեի ձեռնարկած բարեփոխումները հակասում են շարիաթին և խորթ են իսլամի հիմքերին։ Կենտրոնական Կոմիտեի անհետևողականության և վարած սխալ քաղաքականության պատճառով երկրի օսմանացման ուղղությամբ ոչ մի կարևոր քայլ չի ձեռնարկվել, իսկ կայսրության ժողովուրդները օսմանցի դատնալու ցանկություն չունեն։ Համագումարին հիշվեց խորհրդարանի քննարկումների ժամանակ պատգամավոր հաշո էֆենդիի ասած խոսքերը. «Ես այնքան օսմանցի եմ, ինչքան Օսմանյան բանկը»։

Կենտրոնական Կոմիտեի անուճից հանդես եկած դոկտոր Նազըմը, համաձայնվելով, որ կիրառված միջոցներն անբավարար են, պահանջեց որոշում ընդունել, որով ճնշված ժողովուրդներին արգելվում է ազգային կազմակերպություններ ստեղծել, ինչպես նաև ազգային լեզուն դասավանդել։ Միայն թուրքերեն լեզվի տարածմամբ է հնարավոր միաձուլել հպատակ ժողովուրդներին։ Եթե անհրաժեշտ է, ձուլումը պետք է իրականացվի բռնի միջոցներով, և չպետք է խուսափել հասարակական կարծիքից։ «Մինչև այժմ մենք հեղափոխական էինք, այժմ պահպանողական կղաղմանք»։

Թալեթը բեյն իր ելույթում ժխտելով ընդդիմության մեղադրանքները և անդրադառնալով Կենտրոնական Կոմիտեի վարած քաղաքականությանը, ասաց. «Դուք գիտեք, որ ըստ Սահմանադրության մահմեդականները և գյավուրները հավասար են, բայց բոլորը միասին և յուրաքանչյուրը գիտեք և զգում եք, որ այդ նպատակն անիրականանալի է. շարիաթը, ամբողջ մեր անցյալ պատմությունը, նույնիսկ իրենք, հարյուր հազարավոր գյավուրների զգացմունքները, որոնք համառ դիմադրում են օսմանացման յուրաքանչյուր փորձին, հակասում են դրան և ներկայումս իրական հավասարության համար անանցանելի խոչընդոտ հանդիսանում։ Այդ պատճառով խոսք իսկ չի կարող լինել հավասարության մասին, մինչև մենք հաջողություն չունենանք կայսրության օսմանացման գործում»։

Ի տարբերություն նախորդի, 1911 թ. համագումարի մասնակիցների ճնշող մեծամասնությունը գտնում էր, որ կայսրության օսմանացման միայն մեկ տարբերակ գոյություն ունի՝ բռնի ձուլել այլազգիներին թուրքերի մեջ։ Այդ մասին վկայում է նաև երկու համագումարների մասնակից Բյազըմ Նամը Դուրուն, գրելով, որ «Իթթիհադ վե Թերաքքին» երդվել էր ձուլել այլ ազգերը թուրք հասարակության մեջ»։ Սակայն որոշ պատգամավորներ օսմանիզմի անկենսունակությունը դեռևս չէին ընդունում, փորձում էին նոր կյանք տալ նրան և չստացվելու դեպքում միայն դիմել բռնի միջոցների։ Այդ տրամադրությունները հաշվի առնելով, Կենտրոնական Կոմիտեի անդամ Ջիա Գյոք Ալպը իր ելույթում արտաբուստ հանդես գալով օսմանիզմի գաղափարախոսության պաշտպանությանը, նույնիսկ այն Սահմանադրությունից առաջնային համարելով, ներքուստ դրան արդեն կայսրության թուրքացման բնույթ էր տալիս, որի առաջին փուլը «իր հեշտության պատճառով» պետք է լինի թուրքերենի տարածումը։ «Բրիտոնյա տարբերը իբրև բարիք չընդունեցին իրենց հնազանդությունը օսմանյան օրենքներին, այլ այն համարեցին իրենց համար ստեղծված թակարդ, - նշել է Ջիա Գյոք Ալպն իր ելույթում։ - Այդ պատճառով էլ ասացին՝ «Մենք օսմանցի չենք և

¹ Orhan Koloğlu. Աշվ. աշխ...ս. 293.

² Orhan Koloğlu, s. 279.

³ Orhan Koloğlu. Աշվ. աշխ...ս. 293.

⁴ Feroz Ahmad. Աշվ. աշխ...ս. 96.

⁵ Gülnihal Bozkurt. Աշվ. աշխ...ս. 200.

¹ В. А. Гурко-Кряжия. Աշվ. աշխ... с. 200. Ցավոք մեզ հայտնի ոչ մի աղբյուրում Սադրբեյի և Նազըմի ելույթն ամբողջությամբ չի բերվում։

² Армянский вопрос и геноцид армян в Турции 1913-1919. Материалы Политического архива МИД Кайзеровской Германии, Ер. 1995, с. 16.

³ Kazim Nami Duru.....s. 41.

օսմանցի չենք լինի»։ Նրանք խոսվության և անջատվելու ցանկություններից երբեք չեն հրաժարվել։ Այսօր նույնիսկ, երբ արդեն կես դար է անցել, հույները և հայերը «օսմանցի» բառն օգտագործելով մահմեդական իմաստով, ցույց են տալիս, որ չեն ընդունում այդ մտածելակերպը։

Սոցիալական այս փորձը վկայում է, որ ազգը նույն խղճի զգացում ունեցող մի խումբ է նշանակում։ Իսկ պետությունը միայն ընդհանուր գաղափարին պատկանող ազգի վրա կարող է հենվել։ Այս դեպքում անհրաժեշտ է օսմանցի բառին դարձյալ հին նշանակությունը հաղորդել¹։

Կուսակցության ներսում օսմանիզմի, պանիսլամիզմի և պանթուրքիզմի պայքարը երկար պատմություն ունի, բայց միայն չորրորդ համագումարում այն բացահայտ կերպով դրվեց կուսակցության գերագույն մարմնի քննարկմանը։ Դա պայմանավորված էր պանթուրքիզմի հոսանքի ուժեղացմամբ, որը նկատի ունենալով, Ջիա Գյոք Ալպը համագումարի ուշադրությունը հրավիրեց թուրք ազգի նշանակության բարձրացման անհրաժեշտության վրա, որը կայսրության թուրքացման կոչ էր հանդիսանում։

Ազգային քաղաքականության մասին հետևյալ որոշումն ընդունվեց.

«Համագումարը հաստատում է, որ վաղ թե ուշ պետք է տեղի ունենա կայսրության բոլոր ժողովուրդների օսմանացումը և եթե այն հնարավոր չէ իրականացնել խաղաղ միջոցներով, չպետք է խուսափել բռնի, ընդհուպ մինչև ռազմական միջոցների կիրառումից։

Իր բնույթով Օսմանյան կայսրությունը մահմեդական պետություն է և պետք է հարգանք սահմանվի իսլամական հաստատությունների և ավանդույթների նկատմամբ։ Ոչ թուրք տարրերը պետք է գրկվեն ազգային սկզբունքով ազգային կազմակերպություններ հիմնելու իրավունքից, քանի որ ապակենտրոնացումը վտանգում է Օսմանյան կայսրության միասնությունը։ Ազգային փոքրամասնություններն այնպիսի աննշան մեծություն են ներկայացնում, որ կարելի է անտեսել։ Նրանք կարող են պահպանել իրենց կրոնը, իսկ ազգային լեզվի փոխարեն օգտագործել կայսրության պաշտոնական լեզուն՝ թուրքերենը։ Թուրքերեն լեզվի տարածումն անհրաժեշտ է նաև կայսրության ավանդույթների և սկզբունքների պահպանման և թուրք ազգի գերիշխանության ամրապնդման տեսակետից»²։

Համագումարի գաղտնի գիտում մշակվեցին նաև բռնի միջոցների կոնկրետ իրականացման քայլերը։ Նախատեսվում էր քրիստոնյա փոքրամասնություններին, առաջին հերթին հայերին բնաջնջել. մեծահասակներին կտորել, իսկ մինչև 7 տարեկան մանուկներին մահմեդականացնել։ Նիստում հստակ նշվեց, թե անհրաժեշտության դեպքում, ինչ միջոցներով և ինչ ճանա-

պարհներով պետք է իրականացվի հայերի տեղահանումը¹։ Այս գաղտնի ծրագրի դրույթների իրականացման պատասխանատվությունը հանձնարարվել էր Կենտրոնական Կոմիտեին։

Համագումարից հետո Ջիա Գյոք Ալպը որպես կուսակցության գաղափարախոս, կայսրության վերականգման և հզորացման շնչուր դնում է պանթուրքիզմի վրա։ Ըստ նրա, ազգային փոքրամասնությունների առավելությունը թուրքերի նկատմամբ, առաջինների մոտ ազգային գաղափարի, ազգային մշակույթի գոյությունն է։ «Չի կարելի այնպիսի վախեցած երևույթ պատկերացնել, ինչպիսին գաղափարագուրկ բազմությունն է», նշում էր նա²։ Նազրմի դեկավարությանը Կենտրոնական Կոմիտեին կից մի գաղտնի բաժին է ստեղծվում, որը պետք է զբաղվեր Ադրբեջանում և Միջին Ասիայում պանթուրքիզմի տարածմամբ և հավատարիմ կադրերի դաստիարակմամբ³։

Սակայն կուսակցության դեկավարությունում ոչ բոլորն էին ամբողջովին հասկանում Ջիա Գյոք Ալպի և պանթուրքիստների կողմից առաջ քաշված գաղափարները։ Ջեմալ ու Թալեաթը չէին կարողանում պատկերացնել, թե կործանման եզրին գտնվող կայսրությունը ինչպես է զբաղվելու թուրքական ժողովուրդների ազատագրմամբ։ Թալեաթը երբեմն նույնիսկ պնդում էր, որ Գյոք Ալպի գաղափարական գործունեությունն այնքան էլ օգտակար չէ։ «Թալեաթ փաշան սկզբից մինչև վերջ չկարողացավ հասկանալ այս մեծ թուրք իդեալիստին և շատ ժամանակ պնդում էր, որ «պարտիզանը» վնասում է միասնությանը»⁴։ Թալեաթի և Ջեմալի կարծիքով, եթե կուսակցությունը, ինչպես պնդում է Ջիա Գյոք Ալպը, դրված է պանթուրքիզմի և օսմանիզմի ընտրության առաջ, «նա, պետք է լինի օսմանիզմի կողմնակից, քանի որ այն ամբողջ երկիրը իր գիրկն առնող կազմակերպություն է, իսկ երկրի անվանումը Օսմանյան պետություն է»⁵։ Ի հակասակ նրանց, Բեհհաեդդին Ծաքիրն ամբողջովին պաշտպանում էր Գյոք Ալպին, գտնելով, որ կայսրության տարբեր ազգերի միավորման գաղափարն անիրականանալի է։ Հայերին, այս թշնամական տարրին, պետք է ոչնչացնել, հակառակ դեպքում թշնամական տարրերի ազգային պայքարի հետևանքով կայսրությունը տապալվելու է։ «Չպետք է անիմաստ խաբեմք մեկս մյուսիս։ Վաղ թե ուշ այս երկրում ընդհարումների, ազգամիջյան արյունալի պատերազմի ակնատես կլինենք։ Դա անխուսափելի է»⁶։ Էնվերը չէր ցանկանում որևէ տարբերություն դնել պանթուրքիզմի և պանիսլամիզմի միջև, գտնելով, որ Օսմանյան

¹ Հովհաննես Արք. Նազլեանի հուշերը, Ա. հատոր, Պելրուր 1960, էջ 13

² Ali Kemal Meram, s. 121.

³ М. Иркаев. История гражданской войны в Туркестане. Душанбе 1963. с. 292.

⁴ Ali Kemal Meram. s. 119.

⁵ Ali Kemal Meram, s. 120.

⁶ Ali Kemal Meram, s. 120, այս փաստերն Ալի Բեմալ Վերամը վերցրել է Karaosmanoglu «Hukuk gecesi»-ից։

¹ Kazim Nami Duru. Ziya Gokalp, Istanbul 1965, ss. 55-56.

² Ittihad ve Terakki kongreleri. «Memleket» 16/12/1947

կայարությունը բոլոր մահմեդական և թուրքական ժողովուրդների միավորման կենտրոն է հանդիսանում:

Սակայն չնայած Իթթիհադի ղեկավարության և Զիա Գյոք Ալլաի ղեկավարած պանթուրքիստական հոսանքի միջև որոշ գաղափարական տարածայնություններին, կապված «օսմանյան և թուրքական հայրենիքի» հետ, քրիստոնյա փոքրամասնությունների և առաջին հերթին հայերի ձուլման հարցում նրանք համամիտ էին: Երիտթուրքերի մոտ օսմանացումը նույնպես պետք է իրականացվեր բուն, այլ ժողովուրդներին թուրքական տարրի մեջ ձուլման ճանապարհով: Տարբերությունը միայն այն էր, որ եթե օսմանացման ժամանակ երիտթուրքերը ծրագրավորել էին կոտորել և ձուլել միայն արևմտահայությանը, ապա, պանթուրքիստների ծրագրի համաձայն, հայ ազգը ընդհանրապես պետք է վերանար, քանի որ Հայաստանը խոչընդոտում է թուրքական ժողովուրդների միավորմանը:

Երկու համագումարները սկզբնավորեցին և ճանապարհ հարթեցին պանթուրքիզմի պաշտոնական գաղափարախոսության համար: Չորրորդ համագումարում ընդունված «թուրք տարրի հզորացման» ծրագիրը հանդիսացավ պանթուրքիզմի ծրագրի սկիզբ: Նրա առաջին փուլը երկրի թուրքացումն էր, որին խոչընդոտում էին հայերն ու հույները: 1911 թ. իր ելույթում Զիա Գյոք Ալլաը հատուկ շեշտել էր, որ «պետությունը կարող է հենվել միայն մեկ խղճի զգացում ունեցող ազգի վրա»: Ինչպե՞ս էր հայ ազգը և վերացնելով «հայկական սեպը». Օսմանյան կայսրությունը պետք է միավորվի Ադրբեջանի հետ միասնական Օղուղական պետության ներքո: Նազրմի, Զիա Գյոք Ալլաի կոչերը՝ չխուսափել հասարակական կարծիքից և բոլոր միջոցները կիրառել այլ ազգերին թուրքերի մեջ ձուլելու գործում, փաստորեն կոչ էին 1915 թ. ցեղասպանության համար: Իսկ 1912 թ. արդեն աչքի առաջ ունենալով Ալքանդառի դառը փորձը և Բալկանյան պատերազմում կրած խայտառակ պարտությունը, երիտթուրքերն անցնում են 1911 թ. համագումարում ընդունված «միջոցների» գործնական քայլերի նախապատրաստությանը, որը նախ և առաջ արտահայտվեց արևմտահայերի զինաթափման աշխատանքների ակտիվացմամբ, որպեսզի նրանք զրկվեն ինքնապաշտպանության հնարավորությունից և Արևմտյան Հայաստանում մուհաջիրների բնակեցմամբ, որոնք հետագայում ակտիվ դեր խաղացին հայոց ցեղասպանության իրականացման գործում:

ՌՈՒԲԵՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԵՂԵՌՆԸ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԶՄԸ

Հայերի 1915 թվականի ցեղասպանությունը, որի հետևանքով երիտթուրքերը ոչնչացրին ալեյի քան մեկուկես միլիոն մարդ, խորապես ալեկոծեց համաշխարհային հասարակական կարծիքը: Տարբեր ազգությունների, դավանանքների, սոցիալ-քաղաքական հայացքների, դասակարգերին խավերի մարդիկ, իրենց պատվի և խղճի թելադրանքով դատապարտում էին այդ եղեռնագործությունը:

Այդ համապատկերի վրա խիստ աններդաշնակ էր բուլշեվիկների և հատկապես նրանց առաջնորդ Լենինի լուրջությունը: Լուրջ էր մի մարդ, որը 70 տարի շարունակ հրամցվում էր որպես բարձրագույն անհատականություն, «մեր դարաշրջանի մտքի, խղճի ու պատվի» բուն էություն, հայ ժողովրդի «մեծ բարեկամ»: Մարդ, որը գրել է աշխարհում տեղի ունեցող ամեն ինչի մասին, չարձագանքեց մի ամբողջ ժողովրդի արյունալի ցեղասպանությանը: Զնկատե՞ց, թե՞ չցունկացավ նկատել:

Պատասխանի որոնումները մասնագետին տանում են դեպի մեկ այլ խորհրդավոր անձնավորություն: Ալեքսանդր Պարվու. նրա կենսագրական տեղեկանքը ներկայացված է ուսման մեծ գրող Ալեքսանդր Սոլժենիցինի «Լենինը Ցյուրիխում» գրքում, «Պարվուս /Գեյֆանդ/ Ալեքսանդր /Վիրալի/ Լազարևիչ /1867-1924/: Մանրող Միգսկի ճահանգից /Իերեզինո/ է, մանկությունն անցկացրել է Օդեսայում: 1885-ին ավարտել է Օդեսայի գիմնազիան, 1891-ին՝ Բազելի համալսարանը: Սկսել է հաջողությամբ տպագրվել ձախ գերմանական մամուլում /հրապարակախոսական հեղափոխություն/, գերմանական սոցիալ-դեմոկրատներին կապում էր ուսուցիչի /Պլեխանով, Պոտրեպով/ հետ: Կազմակերպել է «Իսկրայի» տպագրումը Լայպցիգում և ինքն էլ տպագրվել է այնտեղ: Իր հրապարակախոսության համար վտարվել է գերմանական տարբեր երկրամասերից, տեղափոխվել է այլ երկրամասեր: Պետերբուրգի 1905 թ. խորհրդի փաստացի ղեկավարը մի քանի ամիս նստել է կրեստիում և Պետրոպոլյովյան ամրոցում, վարչական կարգով երեք տարով արքայազն էր Պետերբուրգ, մեկնել արտասահման: Խիստ քննադատել է գերմանական քա-

դարականոթյան «նուսական կուրսը» /մերձեցումը/, որը նկատվում էր 1907 թվականից, 1910-1915 թթ. եղել է Թուրքիայում և Բուլղարիայում, հարստացել է, եղել է Թուրքիայի և Բուլղարիայի կառավարություններին առընթեր ֆինանսական խորհրդակցանքանց համաշխարհային պատերազմ մտնելու ժամանակ: 1915-ի փետրվարից բանակցություններ է վարել գերմանական արտգործնախարարության հետ: Նախաձեռնել և մասնակցել է ռուսական հեղափոխության նախապատրաստման և Ռուսաստանը պատերազմից դուրս բերելու գործընթացին: Առևտրի բողի տակ գերմանական դրամ է ուղարկել ռուս հեղափոխականներին, փետրվարյան հեղափոխությունից հետո՝ բացառապես բոլշևիկներին, նրանց հնարավորություն տալով արագորեն ամրապնդել իրենց մասնուն ու կազմակերպությունը, որը շատ թույլ ու սակավաթիվ էր մինչև 1917-ի փետրվարը:

Ալեքսանդր Պարվուսը կարևորագույն դեր է խաղացել նաև գերմանական շահերը Օսմանյան կայսրությունում ներկայացնելու, երիտթուրք, ապա քեմալական վարչակարգերի հետ հարաբերվելու ասպարեզում: Սոցիալ-դեմոկրատական հնչյակը և կուսակցության ղեկավարներից մեկը՝ Սապահ-Գյուլյանը, «Պատասխանատուները» աշխատության մեջ այդ անձնավորության մասին գրում է. «Պարվուսը՝ հրեական ծագում ունեցող հայտնի մի սոցիալիստ, որ ավստրիական մի քանի թերթերի, ի թիվս այլոց, «Արքայտեր Ցայտունկի» աշխատակից-թղթակիցն էր, ուներ սոցիալիստական մի քանի գրվածքներ և բավականին էլ վարկ, հեղինակություն էր վայելում: Նա շատ մոտիկ էր իթթի-հադականներին. նրանց վստահության մարդն էր, աշխատակցում էր թուրք մի քանի պարբերականների, գլխավորապես «ժեօն Թյուրք» անունով ֆրանսաբարբառ թերթին: Արտասահմանյան թերթերին տված իր տեղեկություններով նա մեծապես նպաստեց Իթթիհադի կուսակցության ազդեցությանը: Իթթիհադականները նրանից ավելի լավ պաշտպան չէին կարող գտնել»:

Այս նկարագրի հետ մեկտեղ Սապահ-Գյուլյանը հայտնում է մի կարևոր տեղեկություն ևս: Պարվուսը Սապահի հետ հանդիպելիս առաջարկել էր ապագայնացնել երկու հայ հեղափոխական կուսակցությունները՝ Հնչյակն ու Դաշնակցությունը, ձուլելով նրանց մի գուտ սոցիալիստական կուսակցության մեջ, և այն էլ՝ մի երկրում, որտեղ նույնիսկ պրոլետարիատ չկար: Ու՛մ էր ձեռնառու ցեղասպանության շեմին Թուրքիայում հայ ազգային կուսակցությունների վերացումը: Նման սարդիչ առաջարկի հեղինակի մասին Սապահ-Գյուլյանը ավելացնում է. «Պարվուսը մեծ ծառայություն էր, որ մատուցանում էր Իթթիհադին»:

Պարվուսի այլ «ծառայություններ» մասին կարևոր տեղեկություններ է հայտնում իր հուշերում Հայ Հեղափոխական Դաշնակցության ղեկավար գործիչներից մեկը՝ Վահան Փափազյանը

(Կոմս). «Պարվուսը միջազգային չափանիշով՝ առեղծվածային ու խորհրդավոր անձ մըն էր... խոշոր և հաստ, հիպոպոտամի գլխով, ռուսգերով և դուրս ինչպե՛ս աչքերով, տարիքը 50-նոց կը լիներ: Պոլիս կապրեր իբր 8 թե 10 ավստրական և գերմանական սոց. դեմոկրատական թերթերու թղթակից: Բազմակողմանի զարգացումով, հայտնի սոցիալ-դեմոկրատ էր, 1905-ի ռուսական հեղափոխական շարժումներու կարևոր դերակատարներն մեկը:

Մեզ շատ մօտ կը պահեր ինքզինքը. հաճախ «Ազատամարտ» կուգար, ընկերներուն կայցելեր, խորհուրդներ ու թելադրություններ կըներ: Փոքրիկ կակած մը ունեինք իր դերի մասին, կը թվեր, որ գերման կառավարության քաղաքական գործակալ էր միաժամանակ: Պարզ, մատչելի ընկեր էր կարծես՝ չափեն ավելի անպարար և ճարպիկ: 1914-ի պատերազմի առեն միայն պարզվեցավ անոր դերը: Նախ՝ մեկեմիմեկ միլիոնատեր դարձավ՝ իբրև ձեռնարկուն և մատակարարը Թյուրք կառավարության, անոր հաշվովն գնելով մեծաքանակ ածուխ ու հացահատիկ: Ավելի վերջը, ճշտվեցավ անոր երկկողմանի քաղաքական գործակալ լինելու մեր կասկածը»:

Հայտնի ռուս գրող, ծագումով հայ Նինա Բերբերովան իր «Երկաթյա կին» գրքում կարևորում է այն փաստը, որ Պարվուսը բալկանյան պատերազմի օրոք «աշխատում էր թուրքական հետախուզությունում», և որ 1915 թ. «Պարվուսը դարձավ գերմանական գերագույն սպայակույտի գլխավոր խորհրդատուն Ռուսաստանի հարցում»:

Պարվուսին տրված այս բնութագրերը ամփոփում է ռուս դիվանագետ Անդրեյ Մանդիլշտամը՝ «պարզապես գերմանությունը փրոպոքաթոր ազենք»:

Իսկ ի՞նչ անչյուրություն ուներ գերմանա-թուրքական գործակալը Լեհիին հետ:

1915 թվականի մայիսին Պարվուսը հատկապես Լեհիին հետ հանդիպելու համար ժամանեց Բեռն. «Մեկնելով Օվելյա-րիա, գրում է Սոլժենիցինը. «Պարվուսն ամենից ավելի կանխալայելում էր Լեհիին հետ հանդիպումից ունենալից հաջողությունը: Վաղուց էր հնացել նրանց մյուսխեմյան ծանոթությունը, նրանք տարիներով չէին տեսնվել, բայց Պարվուսի աչալուրջ հայացքը երբեք տեսադաշտից բաց չէր թողնում Եվրոպայի այդ միակ անկրկնելի սոցիալիստին, որը միանգամայն անաչառ էր, գերծ նախապաշարմունքներից, մաքրամտությունից, գործի ցանկացած շրջադարձում պատրաստ էր ընդունել հաջողություն բերող հարկավոր մեթոդը, միակ դաժան իրատեսին, որը երբեք չէր հրապարկում պատրասքներով. սոցիալիզմի երկրորդ իրատեսին՝ Պարվուսից հետո»:

¹ Վահան Փափազյան, Իմ հուշերը, հ. 2-րդ, Պեյրուֆ, 1952, էջ 173-174:

² Берберова Н. Н. Железная женщина. М., 1991, с. 173.

³ Նույն տեղում, էջ 173-174:

⁴ Տե՛ս Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, էջ 295:

⁵ Солженицын А. Ленин в Цюрихе, с. 120.

¹ Солженицын А. Ленин в Цюрихе. Париж, 1975, с. 234-235.

² Ս. Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, Պեյրուֆ, 1974, էջ 295:

³ Նույն տեղում, էջ 298:

Լեւոնիսի Պարվուր բացահայտում էր իր նպատակները. «Ես կազմել եմ միակ մեծ պլանը: Ես այն ներկայացրել եմ գերմանական կառավարությանը: Եվ այդ պլանի համար, եթե ուզում եք իմանալ, ես կատանամ քան միլիոն: Բայց գլխավոր տեղն այդ պլանում ես հատկացրել եմ ձեզ»:

Ըստ նրա, ամենից առաջ հարկավոր էր. «Միասնական դեկավարության տակ հավաքել բոլոր ուժերն ու բոլոր միջոցները, միասնական շտաբից դեկավարել կենտրոնական տերությունների, որու հեղափոխականների և ծայրամասերի ժողովուրդների գործողությունները... Պլանը համառորեն պնդում էր, թե գերմանական ոչ մի հաղթանակ վերջնական չէ, առանց Ռուսաստանում տեղի ունենալից հեղափոխության. չմասնատված Ռուսաստանը կմնա որպես մշտական անմար սպառնալիք: Բայց նաև ոչ մի առանձին ուժ չի կարող ավերել ռուսական ամրոցը, այլ միայն միասնաբար նպատակամղված նրանց դաշինքը. սոցիալիստական հեղափոխության և ազգային հեղափոխության համատեղ պայքարում Գերմանիայի դրամական և նյութական օժանդակության պայմաններում»:

Այդ պայքարում, ըստ Պարվուսի, լինելու էր հետևյալ սցենարով. «Գլխավոր լծակը ուկրաինական շարժումն է, առանց ուկրաինական նեցուկի ռուսական շենքը կփլվի: Ուկրաինական շարժումը կփոխանցվի այնուհետև Կուրսկի կազակներին, զուցե տատանվեն նաև Դոնի կազակները: Բնական է համագործակցությունը նաև առավել հասուն, գրեթե արդեն ազատ ֆինների հետ. նրանց հեշտ է զենք ուղարկելը, իսկ նրանց միջոցով Ռուսաստան: Ի հեռստանը միշտ հինգ բուլե հետո պատաստ է հակառուսական ապստամբության և միայն ապաստում է ազդանշանի: Ապստամբած Լեհաստանի և Ֆինլանդիայի միջև կալեկոծվի նաև Մերձքարթլիան երկրամասը /մի այլ տարբերակով Պարվուսը նախատեսում էր, որ Օստլեյան նահանգները հաճույքով կմիանան Գերմանիային/... Կովկասը կտրտված է և նրան դժվար կլինի գրգռել, բայց Թուրքիայի մուսուլմանական ազդեցության միջոցով նրան կհանենք դազավաթի՝ սրբազան պատերազմի»:

Թուրքիայում Պարվուսի գործունեության վերաբերյալ Սոլժենիցինը տալիս է հատուկ պարզաբանում. «Քարձրանալով երիտթուրքերի օրոք, իր ֆինանսական հանձարը ռուսական ծառի բունը կտրող կացնից վերածելով թուրքականը սնող այգեպանի բաճի... Պարվուսը դեսուդեն էր նետվում իր գաղտնի քայլերով, համոզելով կառավարողներին, որ միայն Գերմանիայի կողմում Թուրքիան կազատվի իր անվերջ կապիտոլյացիաներից, նա շտապում էր սարքավորում և պահեստամասեր հասցնել թուրքական երկաթուղիների և ջրաղացների համար, ցորեն մատակարարել թուրքական քաղաքներին, որպեսզի Թուրքիան աշնանը ոչ թե պարզապես պատերազմ հայտարարի, այլև հնարավոր

ինն չափ արագ իրական պատերազմական գործողություններ սկսի Կովկասում»:

Պատմական դեպքերի հետազոտությունը ցույց է տալիս, որ Պարվուսի պլանը համաձայնեցված էր նաև թուրքական կառավարության հետ: Այլ կերպ չէր կարող լինել: Գերմանա-թուրքական գործակալը, բնականաբար, պարտավոր էր Գերմանիայի և Թուրքիայի շահերից ելնելով՝ պլանը համաձայնեցնել երկու պետությունների կառավարությունների հետ, որոնք պետք է վճարեին դրա համար:

Երիտթուրքերը գործում էին Պարվուսի դեղատոմսերով: Սիմոն Վրացյանը «Հայաստանի Հանրապետությունը» գրքում պատմում է. «1914 թ. հունիսին Էրզրումում բացվում է Հ. Յ. Դաշնակցության 8-րդ համագումարը:

Համագումարի աշխատանքներն ավարտված էին արդեն, երբ Էրզրում հասան Իթթիհադի լիազորներ Բեհաեդդին Ծաքիրը և Նաջի բեյը, իրենց հետ բերելով մի քանի տասնյակ պարսիկ-ադրբեջանցի գործակալներ ու մարտիկներ: Իթթիհադի լիազորներն առաջարկեցին Հ. Յ. Դաշնակցության ներկայացուցիչներին, որ դաշնակցականները ռուս-թուրքական պատերազմի ընթացքում միանան թուրքերին՝ աշխատելով ռուսների դեմ ապստամբեցնել Կովկասահայերին: Նրանք պնդում էին, որ վրացիք և կովկասյան թուրքերը (իմա՝ ադրբեջանցիները - Ու. Ս.) արդեն սովել են իրենց համաձայնությունը և սկսել են պատրաստվել ապստամբության: Եվ հիրավի, իթթիհադական լիազորների հետ Էրզրում էին եկել և կովկասցի թուրքեր, որոնք հավաստիացնում էին, թե գնում են Կովկաս խռովություններ և ապստամբություններ առաջ բերելու և պատերազմի պարագային, որու բանակի թիկունքը կազմալուծելու նպատակով»:

Սապահ-Գյուլյանի տեղեկությունների համաձայն, Պարվուսը «իր մասնավոր հովանավորության տակ առնելով Կ. Պոլս մեջ ապաստանող մի քանի վրացի սոցիալիստների՝ նրանց ուղարկել էր աջարների մեջ, որու պետության մեջ ապստամբություն հանելու»:

Թուրքիան ցանկանում էր Գերմանիայի օգնությամբ իրագործել իր պանթուրքիստական, զավթողական պլանները Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Իրանական Ադրբեջանի, մերձվոլգյան շրջանների և Միջին Ասիայի նկատմամբ: 1914 թ. օգոստոսի 6-ին, պատերազմի հայտարարման առաջին օրերին ապամանազիր կնքվեց Թուրքիայի և Գերմանիայի միջև, որի 5-րդ հոդվածում ասվում էր. «Գերմանիան կր հարկադրվե շտկել Օսմանյան կայսրության արևելյան սահմաններն այն ձևով, որ ապահովվի Տանկաստանի անմիջական շփոխը Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»: Պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ հրատարակված կոչի մեջ Օսմանյան

¹ Նույն տեղում, էջ 111:

² Солженицин А. Левиа в Цюрихе, с. 114-115.

³ Նույն տեղում, էջ 117:

¹ Նույն տեղում, էջ 112:

² Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958,

էջ 8:

³ Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, էջ 296:

⁴ ՎԷՄ, 1937, թիվ 3, հուլիս-սեպտեմբեր, էջ 83:

Թուրքիայի կառավարությունը գրում էր, «Չմոռանանք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցության նպատակը մեզ սուկ վերահաս սպառնացող կորուստ չէ, այլ մենք կհետապնդենք ավելի անմիջական նպատակ մը՝ մեր ազգային իտեալին իրականացումը: Մեր ժողովրդին և հայրենիքին ազգային իտեալը մեզի մէկ կողմէ կը մղէ խորտակելու Մոսկովյան թշնամին, ատով հասնելու մեր կայսրության համար բնական սահմանի մը, որուն մէջ կը պարփակվին ու կը միանան մեր բոլոր ազգակից եղբայրները»:

Եվ այսպես, համաձայն Պարվուսի պլանի՝ Գերմանիայի դրամական ու նյութական օգնությամբ ռուսական կայսրությունը մասնատվում էր և կործանվում, նրա տարածքների հիմնական մասն անցնում էր Գերմանիային և Թուրքիային:

Ժիշտ չի լինի, ելնելով պատմության վերը շարադրված իրադարձությունների գլխավոր մասնակիցների ազգային պատկանելության փաստից, հայոց ցեղասպանության նկատմամբ ցուցաբերած մերժողական վերաբերմունքում տեսնել սիոնիզմի ազդեցությունը:

Հրեական ազգային-քաղաքական միտքը սերվել է հիմնականում Ռուսաստանում, տեղական միջավայրում: Եւ դա պատահական երևույթ չէր: Հարցն այն էր, որ հակասեմիտիզմը միայն Ռուսաստանում էր պաշտոնական օրենսդրական ճանաչում գտել: Ռուսաստանում միայն հրեաների համար 1791-1917 թթ. գոյություն ուներ օրենք, որով նրանց թույլատրվում էր բնակվել որոշակի տարածքներում: Ընդ որում, այդ տարածքների սահմանները տարեցտարի սեղմվում էին: Ուսումնական հաստատություններ ընդունվելու համար հրեաների առջև դրված էին սահմանափակումներ: Պետական մակարդակով պարբերաբար կազմակերպվում էին հրեական ջարդեր:

Հրեական ազգային-քաղաքական միտքը հրեական հարցը լուծելու երկու ուղի էր տեսնում: Առաջինը՝ պատմական իրավունքի վրա խարսխված պահանջատիրությունն էր, պատմական հայրենիքի ազատագրումը, հրեական անկախ պետականության ստեղծումը, որը պատմության մեջ մտել է սիոնիզմ անունով: Սիոնիզմը հրեաների ազգային գաղափարախոսությունն է: Երկրորդը՝ համաշխարհային հեղափոխության միջոցով մարդկության ապագայնացումն էր, ինտերնացիոնալիզացիան, որի արդյունքում կազատագրվեին ամբողջ աշխարհում սիոնիզմ հրեաները: Այդ ուղղությունն էին որդեգրել հրեական ծագում ունեցող բոլոր մարքսիստները, որոնք դեմ էին հրեական ազգային պետության ստեղծման գաղափարին և այդ պատճառով էլ պայքարում էին սիոնիզմի դեմ: Բացառություն էր կազմում Լև Տրոցկին (Բրոնշտեյն), որը տարագրության տարիներին, 1937 թվականին,

¹ Չարևանդ, Միացյալ Անկախ Թուրանիա, Աթենք, 1987, էջ 107:

² St'u Рид Дуглас. Спор о Своне, М., 1993, с. 188-194.

³ Նույն տեղում, էջ 191:

⁴ St'u Волков А. Б., Тарасов П. Г. Государство Израиль в Всемирный еврейский конгресс. М., 1991, с. 71.

նկատի ունենալով հրեաների տարագրության ողբերգական հետևանքները ֆաշիստական Գերմանիայում և բոլշևիկյան Ռուսաստանում, հանգեց հրեական ազգային պետության ստեղծման անհրաժեշտության գաղափարին:

Պարվուսը, որպես մարքսիստ, նույնպես չէր բաժանում սիոնիզմի գաղափարախոսությունը, և գտնում էր, որ հրեաների ազատագրությունը կգա համաշխարհային հեղափոխության շնորհիվ: Սակայն Ռուսաստանի հրեային բնորոշ ատելությունը ցարական ինքնակալության նկատմամբ, անշուշտ, դրել էր իր կնիքը նրա մտածելակերպի և գործելակերպի վրա, որի պատճառով նա գտնում էր, որ համաշխարհային հեղափոխության առաջին զոհը պետք է դառնա Ռուսաստանը:

Պատմաբան Իգոր Բունիչը համոզիչ կերպով բացահայտում է Պարվուսի մտածելակերպը. «Ինչպե՞ս մեր՝ համաշխարհային պրոլետարիատի կողմից, օգտագործել պատերազմը և որոշել՝ ու՞մ կողքին կովել: Բոլորին հայտնի է, որ աշխարհի ամենահզոր սոցիալ-դեմոկրատիան՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիան է: Եթե սոցիալիզմը Գերմանիայում ջախջախվի, նա կջախջախվի ամենուրեք: Դեպի համաշխարհային սոցիալիզմը տանող ճանապարհը Գերմանիայի ռազմական ջանքերին սատար կանգնելն է: Իսկ այն, որ ռուսական ցարիզմը կովում է Անտանտի կողմում, պարզից էլ պարզ մեզ ցույց է տալիս, ով է սոցիալիզմի իսկական թշնամին: Եվ այսպես, ամբողջ աշխարհի բանվորները պետք է կովեն ռուսական ցարիզմի դեմ: Համաշխարհային պրոլետարիատի խնդիրն է՝ Ռուսաստանի ոչնչացնող ջախջախումը և հեղափոխությունն այնտեղ: Եթե Ռուսաստանը չապակեմոտոսանա և չդեմոկրատացվի, վտանգը կսպառնա ամբողջ աշխարհին: Եվ քանի որ Գերմանիան է տանում մոսկովյան իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի գլխավոր ծանրությունը, ապա հեշտ է հանգել միակ ճիշտ եզրակացությանը. Գերմանիայի հաղթանակը սոցիալիզմի հաղթանակն է»:

Պարվուսի պլանն ավարտվում էր հետևյալ հեռանկարով. «Եվ կենտրոնացված Ռուսաստանն ընդմիջտ կկործանվի: Ներքին պայքարը մինչև հիմքերը կցնցի Ռուսաստանը: Գյուղացիները կսկսեն ուժով հողը խլել կալվածատերերից: Զինվորները խմբերով կփախչեն իրամասներից՝ ապահովելու իրենց մասը հողի բաժանման ժամանակ: Կապստամբեն սպաների դեմ, կզնդակահարեն զենեղայներին, բայց հեռանկարի այդ մասը հարկ է թաքցնել, այն կարող է տհաճ նախազգացումներ առաջացնել պրոուսացիների մոտ:

Սակայն դա դեռևս բոլորը չէ: Ռուսաստանը ներսից քայքայել ավերիչ պրոպագանդայով, նրա վրա տեղալ համաշխարհային մամուլի ամբողջ թշնամանքը: Հակացարական կամպանիա կսկսեն տարբեր երկրների սոցիալիստական թերթերը, սակայն ձախից աչ ընդգրկելով, այդ հալածանքը հետո կհրապուրի լիբերալ մամուլին, այսինքն՝ ամբողջ աշխարհի մամուլի մեծա-

¹ St'u Дойчер Исаак. Троцкий в изгнании. М., 1991, ц. 408-409.

² Бунич И. Золото партии. СПб., 1992, с. 35.

մասնությանը: Եվ, ընդամենը, հատկապես կարևոր է ընդգրկել Միացյալ Նահանգների հասարակական կարծիքը: Իսկ ցարիզմի մերկացումով միպոստամանակ կապաքողարկվի և կխարխլվի ամբողջ Անտանտը:՝ Ահա թե ինչ էր առաջարկում Լենինին Պարվուտը:

Ամփոփելով նյութը, Սոլժենիցինը գկատում է. «Տեսակա- նորեն, ընդհանուր առմամբ, Լենինն այս ամենը ձևակերպել էր դեռ պատերազմի սկզբում: Ընդհանուր առմամբ, Լենինն այդ էր ուզում, դրան էր ձգտում: Բայց Պարվուտի պլանը ապշեցնում էր գործնականությամբ և կոնկրետությամբ»:

Այսպիսով, կողմերի քաղաքական ըմբռնումները լիովին համընկնում էին, ինչը և հանգեցրեց Պարվուտ-Լենին խոր քո- ղարկված գործարքին: Գերմանա-թուրքական գործակալ Պար- վուտի պլանը, փաստորեն, վերածվեց Պարվուտ-Լենին պլանի:

Ինչպես տեսանք, Պարվուտի պլանը ներկայացվել էր գեր- մանական կառավարությանը, որի համար նա պետք է ստանար 20 միլիոն: Ընդ որում, ըստ Պարվուտի, նրա ներկայացրած պլա- նում «գլխավոր տեղը» պատկանում էր Լենինին: Հասկանալի է, որ եթե Պարվուտը 1915 թ. իր պլանի համար պետք է ստանար 20 միլիոն, ապա «գլխավոր տեղը» գրավող Լենինը նա պետք է վար- ձատրվեր համապատասխան ձևով: Գերմանական սոցիալ-դե- մոկրատիայի պարագլուխ Էդուարդ Բերնշտայնի փաստարկված կարծիքով, 1917 թ. միայն Լենինը և իր նվիրյալները ստացել էին արդեն 50 միլիոնից ավելի ոսկե մարկ: Տասնամյակներ շարու- նակ շրջանառության մեջ գտնվող լուրերն այն մասին, որ բոլ- շևիկներն իրոք գումարներ են ստացել արտասահմանից, իր հաստատումը ստացավ վերջերս ոռու ճանաչված պատմաբան Դմիտրի Վոլկոգոնովի կողմից, որն ուսումնասիրել էր ԽՍՄԿԿ-ի Բաղբյուրոյի գաղտնի արխիվային ֆոնդերը: Նա -Լենին, քաղա- քական դիմանկար» երկհատորյակում գրում է. «Փաստաթղթերը վկայում են, որ բոլշևիկների հեղափոխական ակտիվացման և նրանց ցույց տրված ուղղակի ֆինանսական օգնության լայնա- ծավալ գործողությունում գերմանական կողմից մասնակցում էին Վիլհելմ 2-րդը, գեներալ Լյուդեգորֆը, գործարար գաղափարա- խոս Պարվուտը, կանցլերներ ֆոն Բետման-Հոլվեգը և կոմս ֆոն Բլյումանը, Մոսկվայում գերմանական դեսպաններ՝ կոմս ֆոն Միրբախը և բարոն ֆոն Խոմբերգը, գերմանական գանձապա- հուության քարտուղար Զիգֆրիդ ֆոն Ռեդերնը, ավելի մանր դեմ- քեր:

Բոլշևիկների կողմից այդ ներկայացմանը մասնակցում էին Գանեցկի-Ֆյուրստենբերգը, Կրասինը, Իոֆֆեն, Կոզլովս- կին, Կեսկուլան, Ռադեկը, Ռակովսկին, մի շարք այլ դեմքեր»:
Իսկ ինքը՝ Լենինը:

¹ Солженицын А. Ленин в Цюрихе, с. 117-118.
² Նույն տեղում, էջ 132:
³ Ст'ю Волкоговов Д. Ленин. Политический портрет. Книга I. М., 1994, с. 222.
⁴ Волкоговов Д. Ленин. Политический портрет, с. 224.

Վոլկոգոնովը գրում է. «Ինքը, որպես փորձառու դերու- սույց, գտնվում էր կուլիսներում և հետևում էր, թե ինչպես է ըն- թանում ներկայացումը, որը ստեղծվել էր իր մասնակցությամբ»:¹ Լենինը շատ էր ցանկանում հասնել քաղաքական հաղթանակի, նա տարված էր իշխանությունը գրավելու մոլուցքով: Համաշ- խարհային պատերազմը շարունակվում էր, և պատերազմում ցարական Ռուսաստանի պարտությունը հաղթանակի ուղի էր բացում Լենինի համար: Մյուս կողմից էլ, դրանով իսկ իրակա- նացվում էր Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի հաղթա- նակը, որը հանդիսանում էր Պարվուտ-Լենին պլանի հիմնական գաղափարը: Եվ Լենինն առանց տատանվելու բռնեց այդ ուղին: Եվ թեկուզ ճանապարհին ամբողջ ժողովուրդներ կործանվեին: Գլխավորը հեղափոխության հաղթանակն էր, իշխանության գրավումը:

Պարվուտի պլանը իրականացնելու համար Լենինն առաջ քաշեց «Պատերազմում իր կառավարության պարտության» կար- գախոսը: Գործնականում այդ կարգախոսը նշանակում էր ցարա- կան Ռուսաստանի պարտությունը, նրա տարածքների մասնա- տումը, Գերմանիայի և Թուրքիայի հաղթանակը: Իսկ Թուրքիայի հաղթանակը հայ ժողովրդին բերելու էր անհամար կորուստներ, ազգային ողբերգություն: Հա; բոլշևիկները կորորեն հետևեցին լենինյան քաղաքականությանը և օբյեկտիվորեն ուղի հարթեցին սեփական ժողովրդի կործանման համար: «Թե՛լ եմ Ռուսաստա- նի վրա, քանզի բոլշևիկ եմ»:² Լենինն այս «թևավոր» ասույթը իր հայրենիքի մասին հայ բոլշևիկները գործնականում կիրառեցին Հայաստանի հարցում:

Հասկանալի է, որ կենսագործելով Գերմանիայի և Թուր- քիայի հաղթանակի, Ռուսաստանի պարտության Պարվուտ-Լե- նին պլանը, որը և հանգեցրեց հայ ժողովրդի ողբերգությանը, Լե- նինը, բնականաբար, չպետք է «նկատեր» մարդկությանը ցնցած հայոց Մեծ եղեռնը:

Մեր եզրակացության օգտին վկայող նաև ուրիշ փաստեր կան: Եթե 1912-1914 թթ. լենինյան «Պրավդան» հրատարակում էր հոդվածներ, որոնցում դատապարտվում էին Թուրքիայում հայերի հալածանքները, ապա 1915 թվականի մայիսից, Պարվու- տի հետ հանդիպումից հետո Լենինը և նրա մերձավոր վտարան- դի շրջապատը (Գանեցկի, Ռուխարին, Ռադեկ, Ուրիցկի և ուրիշ- ներ) լուրջյան էին մատնում մի ամբողջ ժողովրդի ցեղասպա- նությունը:

Ժամանակակից լենինյանների երկչոտ հակաճառություն- ները, թե իբր Լենինը պաշտոնապես իր վերաբերմունքը Եղեռնի նկատմամբ մի շարք սոցիալիստների հետ համատեղ գրավոր կեռպով արտահայտել է ցիմմերվալդյան (1915) և կինտայան (1916) կոնֆերանսներում, չի դիմանում որևէ քննադատության: Կոնֆերանսի նյութերը, որոնք վաղուց տպագրված են, ապացու- ցում են, որ այնտեղ ընդհանրապես հայ ժողովրդի ցեղասպա-

¹ Նույն տեղում:
² Бунич И. Золото партии, с. 17.

Առաջան հիմնահարցը ոչ մեկի կողմից չի բարձրացվել, չի քննարկվել և չի արձանագրվել: Եվ պատահական չէ, որ Աույնիսկ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուն կազմողները չկարողացան զետեղել այդ գրքում գոհնե մի տող վերոհիշյալ կոնֆերանսների փաստաթղթերից:

1915 թ. Օվենցարիայի իրողություններին անտեղյակ ընթերցողը կարող է պտարկել. իսկ եթե Լեւինը չգիտեր ցեղասպանության մասին: Բայց չիմանալ հնարավոր չէր: Ամբողջ աշխարհի թերթերը հեղեղված էին բարբարոսության այդ խայտառակ ակտի մասին մանրամասն հաղորդագրություններով: Իսկ Լեւինի կենսագրական ժամանակագրությունը, որը սիրով կազմել են նրա խորհրդային ջատագովները, հանկատարությամբ հաղորդում է, թե քննարկվող շրջանում ինչպես էր Իլլիչը ազդում գիշերներ անցկացնում Օվենցարիայի գրադարանում՝ ընթերցելով միջազգային մամուլը:

1915 թվականի սեպտեմբերի 9-ին «Ժուրնալ դը ժան» խոշորագույն շվեյցարական թերթն իր առաջնորդողը նվիրեց հայոց լեռնոցին: Լրագիրը գրում էր. «Ներկա ժամանակ տեղի է ունենում այնպիսի հրեշապոր գործողություն, որի համեմատ գունագրկվում է ամեն ինչ. կայտարվում է մի ամբողջ ժողովրդի բարբարոսական ոչնչացում»: Թերթում տպված Աույնից արդեն սեպտեմբերի 10-ին արձագանքեց Աույնպես տարագրության մեջ գտնվող թուրք գեներալ Օերիֆ փաշան, որն իր նամակում, ուղղված թերթի խմբագրությանը, մասնավորապես նշում էր. «Պրն խմբագիր: Թույլ տվեք ի հավելում պերճախոս հոդվածի, որը զետեղված է Ձեր հարգարժան լրագրում, հայտնել իմ անձնական վրդովմունքը այն մեթոդների հանդեպ, որոնք կիրառվում են «Միություն և առաջադիմություն» արյունոտ լուս կոմիտեի կողմից»:

Բայց համաշխարհային հեղափոխության առաջնորդի մոտ, որը տիրապետում էր շատ լեզուների, բառեր չգտնվեցին Աույնիսկ նուսերենով ցավակցություն հայտնելու համար: Զանգվածային տեռորը պետական քաղաքականությունը դարձրած, համակենտրոնացման ճամբարների հիմնադիր, մի ակնթարթում Ռոմանովների ամբողջ գերդաստանը ոչնչացրած այդ մարդն, անտարակույս, գտնվում էր քաղաքակիրթ մարդկությանը բնորոշ պատվի և բարոյականության կորոդիմատների համակարգից դուրս:

Լեւինի և նրա նվիրյալների համար ցեղասպանությունը հանդիսանում էր գործունեության միանգամայն ընդունելի մեթոդ: Ռուս գրող Վլադիմիր Սոլոուխինն իր «Ցերեկվա լույսով» գրքում օգտագործում է Լեւինի մի նամակ, որում վերջինս պահանջում է կարմիրների նահանջի դեպքում հրկիզել Բաքուն և նրա բնակչությանը: Հետագոտող Բ. Պուգաչևը, որը հայտնագործել է այդ նամակը Լեւինյան փակ արխիվում, մասնավորապես ընդգծում է. «Լեւինի նամակները նրան բնութագրում են որ-

պես ծայրահեղ դաժան մարդու, ավելին՝ որպես մարդատյաց անձի»:

Արդյո՞ք Լեւինի նաև այդ անձնական հատկանիշով չի բացատրվում այն, որ նա «չնկատեց» հայերի ցեղասպանությունը Բաքվում 1918 թ. սեպտեմբերին, երբ երիտթուրքերը մուսավաթականների օգնությամբ ոչնչացրին 30 հազար հայ: Չիմանալ հայոց ցեղասպանության այդ նոր խայտառակ փաստի մասին նա չէր կարող, քանզի Լեւինի կրեմլյան գրադարանում գտնվում էր հախշի Իշխանյանի «Բաքվի մեծ սարսափները» արժեքավոր գիրքը նուսերեն լեզով, որը նվիրված է 1918 թ. սեպտեմբերյան ողբերգական դեպքերին: Լեւինի բարոյականությունը շատ դիպուկ է բնորոշել նուս նշանավոր փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը. «Լեւինը թույլ էր տալիս պայքարի բոլոր միջոցները հեղափոխության նպատակին հասնելու համար: Նրա համար բարիք էր այն ամենը, ինչ ծառայում է հեղափոխությանը, չարիք՝ այն ամենը, ինչը խանգարում էր նրան...Համակցելով ծայրահեղական հեղափոխական գաղափարով, նա, ի վերջո, կորցրեց բարու և չարի անմիջական տարբերության ըմբռնումը. կորցրեց անմիջական կապը կենդանի մարդկանց հետ, թույլ տալով խաբեություն, կեղծիք, բռնություն, դաժանություն... Բացառապես մի գաղափարով համակցելը հանգեցրեց գիտակցության ահավոր մեղացման և բարոյական այլասերման, պայքարի ընթացքում միանգամայն անբարոյական միջոցների թույլատրման»:

Լեւինը, լուրջյան մատնելով հայերի ցեղասպանությունը, այնուհետև կատարեց երկրորդ սարսափելի քայլը՝ համագործակցության գնաց երիտթուրք ցեղասպանների հետ: Այս շրջանում բեմահարթակ է բարձրանում մի նոր դեմք՝ Կարլ Ռադեկը (Ջոթելզոն): Հրեա, սոցիալիստ-դեմոկրատ, փայլուն լրագրող և հանդուգն, հնարամիտ քաղաքական գործիչ Ռադեկը մտերմացել էր Լեւինի հետ շվեյցարական վտարանդիության ժամանակ: Նա գերմանական կնքված վագոնի ուղևորներից էր: 1917 թ. մարտին Ստոկհոլմում միանում է Գանեցկուն և բոլշևիկների ԿԿ արտասահմանյան բյուրոյի ցուցատախտակի հետևում թաքցված, ապահովում է կապը Պարվուսի հետ: 1918 թ. վերջին բոլշևիկները ուղարկում են Ռադեկին Գերմանիա. «օգնելու» այնտեղ պրոլետարական հեղափոխության կազմակերպմանը: Ջերբակավում է, բանտարկվում, հետո՝ ազատվում: Լեւինը Ռադեկին օգտագործում էր ամենամութ և առեղծվածային առաքելությունների կազմակերպման գործում:

Ռադեկը հանձնարարություն է ստանում Լեւինից՝ շփման մեջ մտնել Գերմանիայում ապաստան գտած երիտթուրք պարագլուխների հետ՝ Անգլիայի դեմ խորհրդա-թուրքական միասնական ճակատ ստեղծելու համար: Երիտթուրքերի հետ կապը իրականացնելու համար Ռադեկը դիմում է իր վաղեմի բարեկամ Պարվուսին: Վերջինս սիրահոծաբ ապահովում է այդ կապը

¹ Генцинд армян в Османской империи. Ер., 1982, с. 355.

² Նույն տեղում, էջ 357:

¹ Солоухин В. При свете дня. М., 1992, с. 216.

² Бердясев Н. А. Истоки и смысл русского коммунизма. М., 1990, с. 97.

(Անկատենք, որ երբ 1921 թ. Վահան Փափազյանը դիմում է Պարվուսին՝ խնդրելով ապահովել կապը բոլշևիկների հետ, գերմանա-թուրքական գործակալը մերժում է, ստելով, թե՛ «մեծամասնականներ են ոչ ոք կհանչան»):

1919 թ. ուշ աշնանը տեղի է ունենում Ռադեկ-Թալեաթ հանդիպումը, որն ազդարարում է մի նոր փուլ բոլշևիզմի քաղաքական վարքագծում՝ համագործակցություն դահիճների հետ: Մոտավորապես նույն ժամանակ Ռադեկը հանդիպումներ է ունենում Էնվերի և Ջեմալի հետ: Մոսկվայում թուրք դեսպան Ալի Ֆուադ Ջեքեսույը այդ առիթով իր հուշերում գրում է. «Երրորդ միջազգայինի գլխավոր անձնավորություններից մեկը՝ բոլշևիկ խմբագիր Ռադեկը, իմանալով, որ այդ թվականին հեռիմում գտնվող Թալեաթ փաշան Անատոլուի ազգային շարժման հետ սերտ առնչություն ունի, շփման մեջ է մտել նրա հետ: Ռադեկը թելադրել էր նախկին ռազմական նախարար Էնվեր և նախկին ծովային նախարար Ջեմալ փաշաներին ուղարկել Մոսկվա և խոստացել էր նրանց, որ պիտի ապահովվի օգնությունը Անատոլուի շարժմանը: Էնվեր և Ջեմալ փաշաները տարբեր թվականներին և տարբեր ճանապարհներով մեկնել էին հեղինից: Ջեմալ փաշան իր ընկերոջից ավելի առաջ էր Մոսկվա հասել: Թուրքական պաշտոնական պատվիրակությունը դեռ ճանապարհին էր գտնվում, իսկ Էնվեր փաշան խորհրդային մայրաքաղաք էր հասել հեքիբ Սամի հեյի պատվիրակությունից հետո»:

Առաջինը Մոսկվա հասած Ջեմալ փաշան 1920 թ. հունիսի 11-ին Մուստաֆա Քեմալին գրած նամակում հաղորդում է. «Մոսկվայում 15 օրվա աշխատանքից հետո ռուսական կառավարության կողմից ընդունվեց, որ գործունեություն ձեռնարկեն թուրքեստանում, Աֆղանստանում և Հնդկաստանում... Այս նպատակով, երբ Տաշքենդ հասնեմ, պիտի խնդրեմ Էմիրից ընդունել ինձ»: Իսկ 1920 թ. օգոստոսի 26-ին Մոսկվայից Քեմալին նամակ ուղարկեց արդեն Էնվեր փաշան: Նամակում հասկապես ընդգծվում էր. «Ես այստեղ եկա այն նպատակով, որ իսլամական մթնոլորտում ստեղծեմ կազմակերպություններ և երկրի փրկության սիրույն աշխատեմ: Տեսնվեցի խորհրդային իշխանության ղեկավարների հետ և նրանց էլ իմ մտքերին համախոհ գտա»:

Բոլշևիկներից ստանալով ֆինանսական խոշոր ներարկումներ, դահիճներն անցան գործի՝ Ջեմալը մեկնեց Տաշքենդ, իսկ Էնվերը՝ հրեա բոլշևիկներ Ջինովկի, Ռադեկի, Բելա Կունի հետ միասին մեկնեց Բաքու՝ մասնակցելու Արևելքի ժողովուրդների համագումարին և գերեզման փորելու Հայաստանի առաջին Հանրապետության համար: Լենինի աջակցությամբ կոմունիստական ինտերնացիոնալում բարձրագույն պաշտոններ զբաղված բոլշևիկները՝ Ջինովկի (Ռադոմիրշելսկի՝ Ապֆելքաում) դեկավարությամբ, Արևելքի ժողովուրդների Բաքվի համագումար

¹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 80, էջ 88:
² Նույն տեղում, էջ 69:
³ Նույն տեղում, էջ 72:

րից դեռ մեկ ամիս առաջ, Կոմիստերնի երկրորդ համաժողովում, հրապարակված ռուսապարտեցիկ սիոնիստների ջանքերը՝ Պադետսիմում հայրենի օջախ ստեղծելու ուղղությամբ:

Ժխտելով սեփական ազգի անկախ պետություն ունենալու իրավունքը, նրանք, բնականաբար, առավել ևս դեմ էին հայկական անկախ պետականության ստեղծմանը, քանզի, ինչպես ասվում է Կոմիստերնի երկրորդ համաժողովի նյութերում. «Ելնելով ժամանակակից միջազգային իրադրությունից, չկա փրկություն կախյալ և թույլ ազգերին, բացի Խորհրդային Հանրապետությունների Միությունից»:

Բոլշևիզմի բարոյական անկումը հայոց եղեռնի հարցում ուներ զարգացման խիստ տրամաբանական օրինաչափություն: Լոռույան մատնելով հայոց եղեռնը, այնուհետև համագործակցության մեջ մտնելով եղեռնագործների հետ, Լենինն ու նրա նվիրյալները անխուսափելիորեն և ուղղակիորեն պիտի աջակցեին մի նոր եղեռնագործության, ինչը տեղի ունեցավ 1920 թ.:

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի Աջանալոր պայմանագիրը, որը միջազգային իրավական փաստաթղթերում նվիրագործում էր Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարը: Այդ գաղափարին դեմ էին թե՛ Թուրքիան և թե՛ բոլշևիկյան Խոսատանը:

Թուրքիան ցանկանում էր պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության անձեռնմխելիությունը, իսկ բոլշևիկներն ունեին իրենց ծավալապաշտական նկրտումները: Ծախերը համընկնում էին, ինչը և հանգեցրեց թուրք-բոլշևիկյան դաշինքի:

Ինչ 1919 թ. վերջին Ստամբուլ էր ժամանել հայտնի բոլշևիկ Թալվա Էլիավան և հաղորդել էր թուրքերին, որ բոլշևիկները «պիտի լիովին ճանաչեն, ամրացնեն և արագորեն սկսեն օժանդակել իմպերիալիստական ճակատի հանդեպ թուրքական ազգային շարժմանը»:

Քեմալը 1920 թ. ապրիլի 26-ին Լենինին գրած նամակում պարզապես առաջարկում էր բաժանել Անդրկովկասը, ընդ որում՝ Կրաստանն ու Ադրբեջանը նախատեսում էր թողնել Ռուսաստանին, իսկ Հայաստանը հռչակել միայնակ: Միաժամանակ. «Իմպերիալիզմի» դեմ պայքար մղելու պատրվակով Վեմալը խնդրում էր Լենինից գեներ, պարեն, դեղորայք, ռազմահանձնարական նյութեր՝ 5 միլիոն լիրա ոսկի ընդհանուր արժողությամբ:

Մոսկվա ուղարկվեց թուրքական պաշտոնական պատվիրակություն, որը 1920 թ. օգոստոսի 14-ին ընդունվեց Լենինի կողմից: Ինչպես նշում է իր հուշերում Ալի Ֆուադ Ջեքեսույը. «մեր

¹ St'u Коммунистический интернационал в документах. М., 1933, с. 129.
² Նույն տեղում:
³ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 80, էջ 88:
⁴ St'u Харьков Джебью. Военные в политической жизни современной Турции. София, 1989, с. 268.

ներկայացուցիչները, երբ հիշեցրել են, որ հայերի աղմկարարությունը խիստ շատ է և տևականորեն իրենց անմեղության մասին խոսելուն հակառակ, կարծվածին չափ անմեղ չեն. Լենինը ասել է. «Այո, ճիշտ է, սակայն կասկած չկա, որ թե Հայաստանը, թե Վրաստանը շատ մոտ ժամանակ պետք է ստանան մեր ցանկացած ձևը»: Թուրք պատվիրակության նախագահ Բեքիր Սամի բելը, ամփոփելով իր տպավորություններն այդ հանդիպումից, ընդգծում էր. «Լենինը շատ համակրելի դիմագծերով, շատ բաց-ընդրո մի անձնավորություն գտանք մեզ և իսլամական աշխարհի հանդեպ շատ բարյացակամ նկատեցինք»: Բեքիր Սամի բելի նշած «բարյացակամության» ակնառու ապացույցն էր 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում ստորագրված թուրք-բոլշևիկյան դաշնագրի նախագիծը և Լենինի համաձայնությունը Հայաստանի Հանրապետության վրա հարձակում սկսելու մասին:

Նախագծի հենց առաջին հոդվածը հակահայկական է և մերժում է Ակրի պայմանագիրը: Փաստաթղթում ասվում է. «Ռուսական Հանրապետությունը պարտավորվում է բացարձակապես չհանաչել Թուրքիային վերաբերող և թուրք ազգային կառավարության ներկայացուցիչ Ազգային մեծ ժողովի կողմից չվավերացված պետական որևէ համաձայնագիր»:

Բոլշևիկները Պարսկուսի միջնորդությամբ և Թալեթի օգնությամբ գնեցին Գերմանիայում 6000 հրացան, ավելի քան 5 միլիոն փամփուշտ, 17600 արկ և նվիրեցին այդ ամենը քենալականներին: Իսկ սեպտեմբերին Թուրքիան բոլշևիկյան Ռուսաստանից ստացավ 200.6 կգ ձուլածո ոսկի:

Կոմիստերնի դեկավարությամբ Արևելքի ժողովուրդների Բաքվի համագումարի կողմից ստեղծված «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողության խորհուրդը» սեպտեմբերի 17-ին մի որոշում է ուղարկում Կոմիստերնին, ՌԿԿ Կենտկոմին և Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսարին, որում ասվում էր. «Ռեժերի ու միջոցների սպառման հետևանքով Թուրքիայում մարտն է ազգային-հեղափոխական շարժումը: Մուստաֆան Քեմալի Ազգային մեծ ժողովի կառավարությունը դժվարությամբ է շարունակում ռազմական գործողությունները: ...Նման հանգամանքներում ազգայնականներն ի վիճակի չեն պայքարը շարունակել մեկ ամսից ոչ ավելի: Եթե այդ ընթացքում կապ չհաստատվի Խորհրդային Ռուսաստանի հետ, և վերջինիս կողմից չցուցաբերվեն նյութական օգնություն և բարոյական աջակցություն, ապա ազգային շարժումը կճնշվի: Ազգային մեծ ժողովի կառավարությունը կտապալվի»:

Քենալական Թուրքիային փրկելու համար սույն փաստաթղթում արվում է հետևյալ առաջարկը. «Խորհրդային Ռուսաստանի ու համաշխարհային հեղափոխության համար կործանարար այդ հետևանքներից խուսափելու նպատակով մեզ ան-

հրաժեշտ է. ա) ինչ գնով էլ լինի և ամենայն արտակարգությամբ աջակցել մարող ազգային շարժմանը Թուրքիայում, և բ) կանխել անգլիաշահական, հայկական և վրացական զինվորական ուժերի միավորումը: Ինչպես մեկը, այնպես էլ մյուսը կարող են ձեռք բերվել միայն թուրքական ազգայնական գործերի հետ միավորված, սեփական ժողովրդին ճնշող Դաշնակցության լծից ազատվելու և հեղափոխական Թուրքիայի հեղափոխվելու դրոշի ներքո Հայաստանի վրա հարձակվելով»:

Եվ այսպես, Բաքվում գործող բոլշևիկյան այս կազմակերպությունը Մոսկվային առաջարկում է Թուրքիային փրկելու համար կործանել Հայաստանի Հանրապետությունը, մի գործընթաց, որն անխուսափելիորեն պետք է իրականացվեր հայ ժողովրդի նոր ցեղասպանությամբ, որովհետև Հայաստանի ոչնչացումը փաստաթղթի հեղինակների առաջարկով հանձնարարվում էր թուրքական գործերին: Առաջարկն, ինչպես նշվեց, արվել է սեպտեմբերի 17-ին, իսկ Թուրքիայի հարձակումը սկսվել է սեպտեմբերի 28-ին: Բացատրությունները, կարծում ենք, ավելորդ են:

Լենինը և իր նվիրյալները հրահրեցին քենալական արշավանքը Հայաստանի առաջին Հանրապետության դեմ, որի հետևանքով զոհվեցին տարածաշրջանում ապրող հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ: Լենինի համաձայնությամբ քենալական գործերը 1920 թ. սեպտեմբերի 28-ին հարձակվում են Հայաստանի վրա: Թուրքական գործերն այս անգամ արդեն Արևելյան Հայաստանում են շարունակում հայերի ցեղասպանությունը: Նոյեմբերի 29-ին հայ ժողովրդին փրկելու պատրվակով Հայաստան են մտնում նաև ռուսական գործերը: Հայաստանը կիսվում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

Բերված նյութերը վկայում են, որ բոլշևիկները, բոլշևիկյան կուսակցությունը և այդ կուսակցության առաջնորդ Վ. Լենինը մեղսակից են հայոց ցեղասպանությանը:

¹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. ֆ. 1, ց. 1, գ. 80, էջ 106:

² Նույն տեղում, էջ 107:

³ Գաբրիել Լազյան, Հայաստան և Հայ Դատը, Երևան, 1991, էջ 255:

¹ ԽՄԿԿ ԿԿԱ, ֆ 64, գ. 29, թ. 58-62:

² «Յոյն» շաբաթաթերթ, 4 դեկտեմբերի 1964, Անկարա, էջ 7:

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԱՐԵՎԵԼԹԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
1915 թ. ՀԵՏՈ

Գարեր ի վեր Հայաստանի տարածքը ռազմաբեմ էր ինչպես հարևան հզոր պետությունների, այնպես էլ վաշկատուն հեռավոր ցեղերի համար:

Հայ բնակչությունը նման ասպատակությունների ընթացքում ենթարկվում էր հրի ու սրի կամ բռնի տեղահանումների. հաճախ էլ, կանխագզայով մոտալուտ վտանգը, անցնում էր համեմատաբար ապահով վայրեր, ամեն անգամ լքելով իր բնօրրանն ու ունեցվածքը:

Հայ ժողովրդի տառապանքներն ավելացան հատկապես 16-րդ դարի կեսերին, երբ Օսմանյան Թուրքիայի ու Սեֆյան Պարսկաստանի միջև շարունակվող պատերազմներից հետո վճռվեց վերաբաժանել Հայաստանը և 1639 թ. երկու տերությունների միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որով Հայաստան աշխարհն արդեն երրորդ անգամ բաժանվեց արևմտյան և արևելյան հատվածների:

Նվաճված Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության վարչակարգի համաձայն բաժանվեց էյալետների կամ փաշայությունների՝ Էրզրումի, Կարսի, Սեբաստիայի, Վանի և Դիարբեքի: Արևելյան Հայաստանում ստեղծվեցին խանություններ՝ Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Շիրվանի և այլն: Վարչական այս միավորների գլուխ կանգնած փաշաներն ու խաններն ունեին անասհմանափակ իշխանություն:

Առանձնապես ծանր էր արևմտահայ հատվածի վիճակը, որը գտնվում էր թուրքական դեսպոտիզմի և դաժան ճնշումների ու բռնությունների պայմաններում: Կառավարող շրջանների

թողտվությունները սահմաններ չէին ճանաչում: Հայերի վիճակը, որպես իրավունքից զրկված «անհավատներ», անտանելի էր, նրանք մշտապես գտնվում էին ահաբեկումների ու կոտորածների վտանգի տակ:

Թուրքական իշխանությունների կողմից չսանձահարվող զազանությունները 19-րդ դարի երկրորդ կեսից ավելի անմարդկային բնույթ են կրում: Հայ բնակչությունը տեղ-տեղ դիմում էր ինքնապաշտպանության, որը, սակայն, ճնշվում էր ամենաամարդկային միջոցներով:

Քաղաքական այս ծանր պայմաններում էլ ծնվեց Հայկական հարցը, որը եվրոպական տերությունների դիվանագիտական խաղերի առարկա դարձավ:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանի տարածքում նոր էր հունի մեջ մտել, երբ Թուրքիայի և Ռուսաստանի միջև պատերազմ սկսվեց:

Թուրքիայի համար քաղաքականություն էր դարձել նման ամեն մի պատերազմի ժամանակ ներքին հարցերը լուծել «պատերազմի օրենքներով»: Այս անգամ Հայկական հարցը կանգնեց նրանց կոկորդում, և պատեմ առիթը ներկայացել էր. սկսվեց ավերել ու ավարը: Հրի ու սրի մատնվեց հայկական ամեն ինչ, հողին հավասարեցրին շեներն ու սրբավայրերը: Այս գործում քրդերը նրանց զինակիցներն էին: Որպես օրենք, նման պատերազմների ընթացքում և հետո մահմեդականների յաթաղանից հրաշքով փրկված արևմտահայերը (հիմնականում Ռուսաստանին սահմանակից տարածքներից) դիմում էին փախուստի և գաղթում հարակից շրջաններ:

Վանդալիզմի բոլոր կարգի դրսևորումները հայ բնակչության նկատմամբ ոչ միայն հովանավորվում էր, այլև հրահրվում էր թուրքական վերնախավի կողմից: Արևմտահայ բնակչության ազատագրական ամեն մի շարժում, պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարով տոգորված թուրքական իշխանավորներին, զգուշավորության ու վախի զգացման հետ միասին, մղում էր Հայկական հարցի լուծման նենգ ու ահավոր լուծումների:

Գեռևս 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո, արյունաբքու սուլթան Աբդուլ Համիդն այն կարծիքին էր (և նա դրա մասին հայտարարում էր), որ Հայկական հարցի լուծման մի ուղի կա միայն՝ հայ ժողովրդի բնաջնջումը: Ժուտով նա իրագործեց իր հրեշավոր պլանը: Արդեն 1890-ական թվականների սկզբներից սկսվում է հայ բնակչության կոտորածը Սասունում, արդյունքում սպանվում է 7.5 հազար հայ, հողին հավասարեցվում 30 հայկական գյուղ, իսկ ավելի քան 200 կին ու աղջիկ փորձում են ինքնասպան լինել:

Հայ բնակչության կոտորածները ավելի լայն թափ ու ծավալ ստացան 1895 թ. վերջին, 1896-ի սկզբին: Ընդամենը կես տարվա ընթացքում Աբդուլ Համիդի հրեշները ամբողջ Փոքր Ա-

¹ Генония: армян в османской империи, Ереван, 1982, с. 111.

² Նույն տեղում, էջ 15:

սիայի տարածքի հայաշատ քաղաքների ու գյուղերի հայ բնակչության նկատմամբ կիրառեցին աննկարագրելի ջարդեր:

Միայն Գիարբեքիի գավառում թալանվեցին ու հրի ճարակ դարձան 119 գյուղ՝ իրենց 6000 ընտանիքներով ու 30000 քրիստոնյա բնակչությամբ:

Արևմտահայերի մի ստվար մասն էլ, չդիմանալով տանջանքներին, հավատափոխ եղավ, փրկվելով ֆիզիկական ոչնչացումից: Որքան էլ խոսելու լինենք կոտորածների սարսափների մասին, թվերն ավելի խոսուն են ու արտահայտիչ:

1896 թ. փետրվարի վերջին հայկական վեց նահանգներում (վիլայեթներ) հայերի կորուստներն արտահայտվում էին հետևյալ թվերով (տե՛ս աղ. 1):

Կոտորածները շարունակվեցին նաև 1896 թ. ընթացքում և հետո: Գրեթե երկու տարվա ընթացքում (1894-1896 թթ.), համիդյան ջարդերին զոհ գնացին 300000 հայ, նույնքան էլ բռնեց գաղթի ճամփան, որոնց մի մասը՝ 100000 մարդ, անցավ Ռուսաստանի տարածք, իսկ 200000-ը՝ Եվրոպայի, Աֆրիկայի ու Ամերիկայի գանազան երկրներ: Արևմտահայության որոշ մասն էլ բռնի կերպով մահմեդականացվեց: Բնաջնջված ու տարագրված հայերի տեղում համիդյան կառավարությունը բնակեցնում էր մայրմեդական տարրեր, գլխավորապես՝ քրդեր ու մուհաջիրներ: Հայաթափված ու մահմեդականներով զբաղեցված բնակավայրերի թիվն ավելանում էր:

Կոտորածները շարունակվեցին մինչև 19-րդ դարի վերջերը, որը մարդկային նորանոր կյանքեր խլեց ու պանդուխտների բանակը ստվարացրեց 20-րդ դարի սկզբներին: Միայն 1902 թ., հիմնականում հունվարից-ապրիլ (մասամբ նաև օգոստոս-սեպտեմբերին) ընկած երեք ամիսների ընթացքում Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից Ալեքսանդրապոլ ու համանուն գավառի 71 գյուղերում հաստատվեցին 322 ընտանիք, 884 տղամարդ, 696 կին, ընդամենը՝ 1580 մարդ: Գաղթած բնակչության ավելի քան 35 % -ը տեղավորվեց Ալեքսանդրապոլ քաղաքում (106 ընտանիք, 237 տղ., 197 կին, ընդամենը՝ 434 մարդ): Եթե այս թվերին ավելացնենք օգոստոս-հոկտեմբեր ամիսներին քաղաքում հաստատված 16 ընտանիքները կամ 71 մարդկանց, կատանանք՝ 122 ընտանիք, 280 տղ., 225 կին, ընդամենը՝ 505 մարդ, իսկ գյուղերում հաստատվեցին 200 ընտանիք, 604 տղ., 471 կին կամ 1075 մարդ: Ամենից մեծ ներգաղթը արձանագրվեց 1902 թ. մարտի 1-ին՝ 161 ընտանիք:

Նույն թվականին, մեկ այլ գործից իմանում ենք, որ ապրիլի 13-ից 19-ը ընկած ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի վանի նահանգի Արճեշի գավառի 24 գյուղերից, վանի գավառի 7 գյուղերից, Աղեջիվազի 7 և Բերկրիի 1 գյուղերից, ինչպես նաև Էրզրումի նահանգի Բայազետի գավառի 7, Բիթլի

Աղյուսակ 1

No	Նահանգներ	Ավերած բնակավայրերի թիվը	Գրիտորություններ	Այլամիջակա թիվը	Այլամիջակա թիվը	Սպանված քրիստոնյաներ	Սպանված մահմեդականներ	Մորթակամներ	Ավերված տներ	Թալանված խամուրներ
1	Էրզրումի	595500	125700	6715	30	5200	55300	7500	2600	
2	Մոլանի	1087500	173000	3225	45	1600	34000	4830	882	
3	Խարաթի	524300	81400	11584	319	12500	41500	10577	915	
4	Գիարբեքի	472000	133600	5720	500	7500	41500	5400	1430	
5	Բիթլիսի	399000	138700	1400	3	6500	50000	6050	430	
6	Վանի	431500	175200	463	-	3000	25000	2300	255	
	Հնդասենի	3509800	827600	29707	897	36300	247300	37257	6372	
	Աշարս և Տրապիզոն	1139000	206650	7978	41	4650	43000	2492	1430	
	Ամրոզը միասին	4648800	1034250	37085	938	40950	290300	39740	7942	

¹ Генциал армия в османской империи, с. 107-112.

² Հայ ժողովրդի պատմություն, Բ. 6, Երևան, 1981, էջ 276:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 105, 1, 609, թ. 1-653:

սի 2, Մուշի 2, Մանազկերտի 2 և Ղարաքիլիսի 1 գյուղերից Մուրնալուի գավառի 14 գյուղեր (այդ թվում՝ Իգդիր քաղաք) են ներգաղթել շուրջ 150 ընտանիք, կամ ավելի քան 680 մարդ:

Բավական է նշել, որ 1904 թ. նոր հարձակում սանձազերծվեց Սասունի բնակչության դեմ: Անհավասար մարտերում Սասունը կորցրեց 8000 մարդ, ավերվեց ու թալանվեց 2 հազար տուն:

19-րդ դարի վերջերի ջարդերից փրկված հայերը տարբեր ճանապարհներով հասան ու հաստատվեցին Սև ծովի արևելյան ափերին, Կարսի մարզում, Հյուսիսային Կովկասում և այլուր:

Սուլթան Աբդուլ Համիդի վայրագ քաղաքականությունը շարունակվեց մահ 20-րդ դարի սկզբներին, սակայն Թուրքիայի ներսում ծայր առան հեղափոխական շարժումները, մասնավորապես ամենուրեք պրոպագանդում էին 1876 թ. Սահմանադրության դրույթներն ու սկզբունքները: Այս պարագայում ճնշված ժողովուրդների, այդ թվում հայերի մի մասի մոտ այն պատկերացումն էր ձևավորվել, թե օսմանյան հեղափոխությունն ու Սահմանադրությունը կարող են փրկել իրենց համիդյան բռնություններից: Արդեն 1908 թ. Թուրքիայում կատարված պետական հեղաշրջմամբ, զահրանկեց արվեց Աբդուլ Համիդ 2-րդը, հաստատվեցին սահմանադրական կարգեր, իշխանությունն անցավ բուրժուա-ազգայնական, այսպես կոչված երիտասարդ թուրքերի կուսակցության ձեռքը:

Ընտրվելուց առաջ ժողովրդին խոստումներով հեղեղած կուսակցության լիդերները, իշխանության գլուխ անցնելուց հետո, ինչպես ասում են, դեն նետեցին իրենց դիմակը: Պարզ դարձավ, որ նրանք ի վիճակի չեն թեթևացնելու ինչպես թուրք, այնպես էլ մյուս ժողովուրդների տնտեսական ու իրավական պայմանները:

Ռազմա-ֆեոդալական հարաբերությունների, ազգային ճնշումների ու հալածանքների ասպարեզում երիտթուրքերը գերազանցեցին հայատյաց Աբդուլ Համիդին:

«Թուրքական բուրժուական այդ նացիոնալիստները, որ ամեն կերպ ձգտում էին իրականացնել ռեակցիոն պանթուրքիստական գաղափարները, հրապարակորեն հայտարարեցին այն մասին, թե իրենց նպատակն է թուրքացնել, ասիմիլիացիայի ենթարկել օսմանյան կայսրության մեջ գտնվող բոլոր ժողովուրդներին և մերժում են որևէ իրավունք կամ կյանքի ու գույքի ապահովություն մյուս, ոչ թուրք հայատակների»:

Դեռևս թարմ էր ազատության, ժողովրդավարության, եղբայրության մասին արտասանած ճառերի տպավորությունը, երբ

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 105, 1, 651, թ. 1-300:

² Մանրամասն տես՝ *Армянский вопрос. Энциклопедия*, Ереван, 1991, с. 263-266, Н. Г. Волкова, *О расселении армян на Северном Кавказе до начала XX века* 4 *Историко-филологический журнал /ИФЖ/*, No3, 1966, с. 265-267.

³ Հայ ժողովրդի պատմություն, Բ. 6, Երևան, 1981, էջ 494-497:

⁴ Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, էջ 420:

1909 թ. երիտթուրքերը սկսեցին Ադամայի հայ բնակչության ջարդը: Սրի քաշվեց 30 հազար մարդ: Այս կոտորածը երիտթուրքերի հետագա հրեշափոր ծրագրերի նախաբանն էր: Նրանց հաճախակի կազմակերպվող գաղտնի ժողովներից մեկում անա թե ինչ էր ասել այդ կուսակցության պարագլուխներից՝ Նազիմ Բելը. «Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել արմատից, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողի վրա և մոռացվի այդ ամուլը: Այժմ պատերազմ է ընթանում և սրանից հարմար պահ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատելի, իսկ եթե նրանք իմանան, կկանգնեն կատարված փաստի առջև, և դրանով հարցը լուծված կհամարվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է ընդունեն հայերի կոտորման տեղական բնույթ, պետք է բնաջնջել բոլորին անխտիր... Ես ուզում եմ, որ այս հողի վրա միայն թուրքը ապրի ու անսահման իշխանություն ունենա: Թող անհայտանան բոլոր ոչ թուրք տարրերը, ինչ ազգության ու կրոնի էլ որ պատկանելիս լինեն»:

Երիտթուրքերի պարագլուխները մնա հանդիպումների ժամանակ պլան էին մշակում ամբողջ Թուրքիայի տարածքում բնակվող հայերի զանգվածային բնաջնջման, տեղահանումների և այլ գիշատիչ արարքների համար, որոնք էլ խորամանկ ու նենգ ձևերով իրականացրին Առաջին աշխարհամարտի տարիների:

Արևմտահայ զանգվածը գաղթում էր բոլոր ուղղություններով հետևյալ օրինաչափությամբ. Ռուսաստանի, այդ թվում Արևելյան Հայաստանի տարածք էին անցնում հիմնականում սահմանամերձ նահանգների բնակիչները, դեպի Եվրոպա ու Ամերիկա՝ Թուրքիայի արևմտյան հայաշատ վայրերից և այլն: Ծառ հաճախ էլ, կախված ռազմաքաղաքական իրադրությունից, հայ բնակչությունը ստիպված տեղից-տեղ էր փոխադրվում՝ ենթարկվելով անասելի զրկանքների: Ինչպես ցույց են տալիս փաստերը, 1890-ական թվականներից մինչև Առաջին աշխարհամարտը, հայ բնակչությունը միշտ էլ գտնվել է ակտիվ տեղաշարժերի մեջ: Ահա այդ տեղաշարժերի մի հոսքի մասին էլ կխոսեց [GAS2] ի ստորև: Մեր խնդիրն է ընդհանուր գծերով ներկայացնել 1915 թ. Եղեռնի ընթացքում և հետո գաղթի բոլոր այն ուղիները, որոնք ձգվում էին Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան:

¹ Генциалд армяня..., с. УП.

² Ի դեպ հայ բնակչության գաղթերի մասին քիչ է գրվել, իսկ ներկայացվող թվային տվյալները տարբեր հեղինակների մոտ տարբեր են: Քաղաքական մի բարդ ժամանակահատվածում, ինչպիսիք էր 1914-1920 թթ., շատ դժվար էր քիչ թե շատ ճշգրիտ հաշվարկ կատարել ներգաղթող ու արտագաղթող բնակչության թվի վերաբերյալ: 1920 թ. Հայաստանի խորհրդայնացումից հետո ներգաղթի գործը դրվեց պատշաճ մակարդակի վրա, ստեղծված կոմիտեները կատարում էին մանրամասն հաշվառումներ: Խորհրդային շրջանի ներգաղթերի մասին կամ ոչ ամբողջական, սակայն բավարարող տվյալներ Հայաստանի պատմության կենտրոնական պետական արխիվի ֆոնդերում (ֆոնդ 50, 105, 126, և այլն), իսկ խորհրդային շրջանի համար հրապարակի վրա

Ռեո 1914 թ. աշնանը և 1915 թ. սկզբներին երիտթուրքերը սկսեցին հատվածաբար ոչնչացնել բանակ զորակոչված հայերին, ինչպես նաև ճանապարհների վրա աշխատելու պատրվակով զորահավաքի ենթարկված 15-20 և 45-60 տարեկան տղամարդկանց:

1915 թ. ապրիլի 24-ի գիշերը միայն Կ. Պոլսում ձերբակալվեցին 235 հայ մտավորականներ, որոնց թիվը շուտով հասավ 800-ի: Նրանք բռնվեցին Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանվեցին արտոյի ճանապարհին:

1915 թ. ապրիլ-մայիսին տեղահան արվեցին Կիլիկիայի հայերը, հաջորդ ամիսներին՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Սվազի, օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադաբազարի, Բրուսայի, Ջերեզ-Մուսայի, Ուրֆայի և Այնթապի հայերը: Ամբողջ Թուրքիայի տարածքը հայաթափվեց հիմնականում 1915 թ. ապրիլից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Հազարավոր գյուղեր ու քաղաքներ վերածվեցին մոխրի: Որոշ գավառներում փրկված հայերի թիվը չէր անցնում մի քանի տասնյակից: Այսպես, Խնուսի գավառի 27 գյուղերից, որոնցում կար 3322 հայ ընտանիք, փրկվեցին ընդամենը 128 մարդ կամ ներքին Բույանդիսի 11 գյուղերից փրկվեցին 21 մարդ, իսկ Մանազկերտի 25 գյուղերից՝ 34 մարդ:

Բերենք մեկ ուրիշ օրինակ ևս. Սեբաստիայից և Խարբերդից արտոյված 18 հազ. հայերից արտոյվայր հասան միայն 150 կին ու երեխա: Հայեպից Ռես-յուլ-Այն և Մեսենի ճանապարհով արտոյված 200 հազար հայերից կենդանի մնացին ընդամենը 5 հազար հոգի: Կարինի վիլայեթի 215 հազար հայերից կենդանի մնացին 2000-ը, իսկ Կարին քաղաքի 18 հազար հայերից՝ 120 մարդ: Մինչև 1915 թ. օգոստոսի կեսերը սպանվել էին ավելի քան 500 հազար հայեր:

Ինչպես ասվեց, հայ բնակչության զանգվածային կոտորածները սկիզբ առան դեռևս 1914 թ. աշնանը և այդ ժամանակից էլ սկսվում է արևմտահայ բնակչության (ինչպես նաև հույների ու ասորիների) փախուստի ու տառապանքների նոր շրջանը:

Գաղթականների ընդունելու և տեղավորելու նպատակով Երևանում ստեղծվում է հանձնաժողով: Ահա այդ առթիվ ինչ է գրում «Երևանյան հայտարարություններ» թերթը 1914 թ. դեկտեմբերի 27-ին¹. «Քաղաքացիներ, օգնեցեք գաղթականներին»

ունենք մի քանի մենագրություն ու բազմաթիվ հոդվածներ (մասնավորապես Հ. Մելիքսեյանի ու Գր. Ավագյանի աշխատությունները):

¹ Հայ ժողովրդի պատմություն, Բ. 6., Երևան, 1981, էջ 553-555:

² Геноцид армян..., с. 10.

³ Հայ ժողովրդի պատմություն, Բ. 6., Երևան, 1981, էջ 556-557:

⁴ Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (այնուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, Տեղեկագիր, զեկուցագիր, հեռագրեր և գրագրություն փախստական գաղթականների տեղավորման, նյութական օժանդակություն (27.12.1914-26.06.1915թթ):

Այաշկերտի հովտից, Բայազետի սանջակից, Աույնպես և Պարսկաստանից գաղթում է հայ ժողովուրդը: Նրանք շուտով Երևանում կլինեն:

Նրանց թիվը շատ մեծ է, ոչ պակաս քան 40 հազար: Անհրաժեշտ է շուտափույթ օգնություն: Կազմված է արդեն Երևանյան «Եղբայրական օգնություն» անունով կոմիտե 25 հոգուց բաղկացած, նախագահությամբ թեմի առաջնորդ Սրբ. Խորեն Եպիսկոպոսի: Կոմիտեն դիմել է զանազան հայաբնակ քաղաքների կոմիտեների և արդեն ստացվում են խոշոր գումարներ: Կոմիտեն կարիք ունի օգնող ուժերի: Անհրաժեշտ է կազմել ծխական եկեղեցական ենթակոմիտեներ...»:

Կոմիտեի գործունեության շրջանակները բավականին մեծ էին, այն զբաղվում էր ոչ միայն գաղթականների ընդունման ու տեղավորման, այլև նրանց վիճակագրության, նպաստներ նշանակելու, բարեգործներ հավաքագրելու և այլ հարցերով: Արդեն 1915 թ. հունվարի 30-ին կոմիտեն անցկացրեց փախստականների մեկօրյա վիճակագրություն, որի ժամանակ հաշվառման ենթարկվեցին այն բոլոր ընտանիքները, որոնք անցել էին Արևելյան Հայաստանի տարածք 1914 թ. հոկտեմբեր ամսից մինչև 1915 թ. հունվարի 30-ը:

Ստորև ներկայացվող աղյուսակը ցույց է տալիս Պարսկաստանի հայաշատ գավառներից ու Արևմտյան Հայաստանի Կարսի մարզից գաղթած հայ բնակչության թիվն ըստ խոշոր բնակավայրերի(տե՛ս աղ. 2):

Աղյուսակ 2

Պարսկաստանի գավառներ ու գավառակներ	Գաղթած ընտանիքների թիվը	Արևկան սեռի բնակչություն	Իգական սեռի բնակչություն	Ընդամենը	Գրանցման պահին բնակավայրում էին
1	2	3	4	5	6
1. Թավրիզի շրջան					
Թավրիզ	43	115	120	235	31
Խոյ	133	277	277	554	26
Սելդավուր	101	287	267	554	25
Մահազան	7	24	19	43	-
Վաս	2	8	4	12	-
Ղիզե	25	73	59	132	8
Կոթուր	12	43	41	34	4
Ծորան	38	102	93	195	2
Ընդամենը	341	929	880	1809	100
2. Սալմաստի շրջան					
Սալմաստ	19	57	40	97	21
Հավրվան	120	330	305	635	82

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, վիճակագրություն գաղթականների հայեր-1914-1915 թթ.: Միօրեայ վիճակագրություն Տանկաստանից ու Պարսկաստանից եկած գաղթականների (հայ, ասորի, հույն և այլն) և ուսամաքատակ փախստականների, Երևան, 1915, 266 էջ:

1	2	3	4	5	6
Փայտուկ	87	227	235	462	54
Մահամ	63	157	167	324	67
Ղալասար	51	124	155	279	19
Սառնա	31	88	76	164	34
Սալբա	34	80	92	172	31
Սարամերիկ	26	97	91	188	26
Ախտանա	9	25	26	51	4
Կրգրջա	29	106	95	201	28
Վատան	2	10	3	13	1
Քնայաշան	3	13	9	22	3
Իրիշիկ	9	29	18	47	4
Խոտրովա	7	14	15	29	2
Ծելթանավա	8	27	21	48	12
Մարա	2	6	4	10	1
Քոզամիշ	9	17	19	36	1
Հովասին	5	21	17	38	2
Ընդամենը	514	1428	1338	2816	392
3. Ուրմիայի շրջան					
Ուրմիա	1	1	1	2	-
Գոսդաբատ	114	345	350	695	160
Կարակոզ	17	69	69	138	50
Նախիջևան-թափա	54	170	172	342	71
Ատա	1	4	3	7	-
Սուփուրդան	5	10	13	23	8
Կարաչայու	15	51	51	102	23
Իքիալաթ	32	97	88	185	31
Ծիրաբատ	22	62	68	130	32
Իսայու	23	72	73	145	35
Ծմրաբատ	25	71	70	141	17
Ջամաթ	1	5	4	9	7
Բաղբո	48	130	140	270	59
Կրգր Աշուղ	14	36	35	71	19
Ջամավա	6	24	21	45	5
Փակրայու	16	59	64	123	59
Ջանգազան վայրից	32	94	79	173	27
Ընդամենը	426	1300	1301	2601	603

Ռուսաստան, Կարսի ու Բաթումի շրջաններ

1	2	3	4	5	6
Կարս	167	133	516	600	94
Սարիբամիշ	155	469	491	960	91
Խոշուքլի	42	225	207	132	21
Կալկու	15	41	47	55	7
Կարակուրթ	4	9	12	21	3
Ընդամենը	383	1227	1273	2560	216
Կաղզվան	19	69	60	129	13
Սթանան	36	207	182	389	22
Կերքիլան	5	18	26	44	-
Ընդամենը	60	294	268	562	35
Արդահան	242	748	756	1504	118
Սերուք	13	32	54	85	5
Սաստոխ	34	136	129	265	16
Միրսիհենկ	10	32	34	66	3
Ջուղուբու	6	19	29	48	3
Սոխաբա	1	10	9	19	2
Իհրաբաթուն	5	15	19	34	3
Սաս բոլ	4	14	18	32	-
Ընդամենը	318	1096	1097	2053	150

1	2	3	4	5	6
Օլթի	187	517	523	1040	85
Ահրդուրս	73	331	329	660	41
Թամուրթ	47	228	234	462	15
Կուրաթ-Էօրուկ	11	52	49	101	10
Ծուճուրիս	53	229	240	469	26
Օլոռ	16	46	41	87	3
Ջարդանս	20	65	78	143	10
Կարաուրզան	6	18	24	42	1
Ազրակ	39	117	142	259	14
Ընդամենը	452	1603	1660	3263	205
Արդվինի շրջան					
Արտանուշ	12	31	35	66	12
Տանճուտ	100	208	301	509	170
Ենիարաթ	8	36	35	71	15
Սաթլի	1	2	1	3	-
Թաբատ	13	39	36	75	1
Արդվին	4	17	13	30	3
Նորաշեն	3	7	10	17	3
Ջանգազան վայր-ի	57	157	228	385	16
Ընդամենը	198	497	659	1156	220
Ամբողջ միասին	2692	8284	8476	16760	1921

Ադյուսակի տվյալներից երևում է, որ Ռուսաստանի սահմանամերձ արևմտահայ և պարսկահայ հատվածների հայաշատ վայրերից Եղեռնի հենց առաջին ամիսներին Արևելյան Հայաստանի տարածք են գաղթել ավելի քան 2.5 հազար ընտանիք, գրեթե 15 հազար մարդ: Բացակայող 1921 մարդիկ հիմնականում հետ էին վերադարձել իրենց հայրենի օջախները: Վիճակագրական հսկայածավալ մատյաններում նշումներ կային նաև գաղթականների ունեցվածքի, մասնագիտության ու սոցիալական պատկանելության մասին:

Ներգաղթի ամբողջական պատկերը ներկայացնելու համար նպատակահարմար ենք համարում համառոտակի շարադրել փախստականների տեղաբաշխման արդյունքները որտեղից-ուր սխեմայով:

Թավրիզ քաղաքից գաղթած հայերը (հիմնականում արհեստավորներ) տեղավորվեցին Արարատյան դաշտում ու Նախիջևանի գավառում՝ 43 ընտանիք, 235 մարդ: Խոյ քաղաքից գրեթե նույն վայրերում տեղավորվեցին 113 ընտանիք, 550 մարդ: Խոյի գավառի մի շարք բնակավայրերից հիմնականում Երևանի ու Նախիջևանի գավառներում են տեղավորվել 185 ընտանիք, 944 մարդ: Այսպիսով, ընդամենը Խոյ քաղաքից ու գավառից նշված վայրերում հաստատվեցին 298 ընտանիք, 1494 մարդ:

Ուրմիայի գավառից գաղթած հայերը մեծ մասամբ բնակություն հաստատեցին Նախիջևանի գավառի գյուղերում ու

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թերթ 1-8:

² Նույն տեղում, թերթ 10-39:

Երևանին հարակից բնակավայրերում (385 ընտանիք, 2305 մարդ):¹

Կարս շաղաքից բնակչությունը ցրվել էր երկու ուղղությամբ՝ դեպի Կարսի մարզի հյուսիս-արևելքում բնակավայրերը, ք. Ալեքսանդրապոլ ու Շիրակի գյուղերը: Շիրակում տեղավորվեց 100 ընտանիք 587 շնչով, իսկ Կարսի մարզում՝ 64 ընտանիք 397 մարդով:

Սարիղամիշի բնակիչների մի մասը հաստատվեց Շիրակում (101 ընտանիք, 603 մարդ), մյուս մասն էլ անցավ Կարս ու շրջակա գյուղեր (54 ընտանիք, 357 մարդ):

Կարսի մարզի Կաղզվանից, Խոջգեղից, Կալկոսից տեղափոխված բնակիչները (112 ընտանիք, 1038 մարդ) հաստատվեցին Կարսում, Ալեքսանդրապոլում ու շրջակա գյուղերում:

Արդահան քաղաքի և գավառի բնակիչները, թվով 2021 մարդ (314 ընտանիք) հանգրվան գտան Ալեքսանդրապոլ, Կարս, Ախալքալաք քաղաքներում ու նրանց գյուղերում: Հիմնականում մեծօրինակ ձեռք տեղավորվեց Օլթի քաղաքի ու գավառի հայ բնակչությունը: Եթե Օլթի գավառի հիքրոս ավանից գաղթածները հաստատվեցին Կարսի գավառի գյուղերում, ապա նույն գավառի Թամրոս ավանից գաղթածները՝ Շիրակում: Գաղթականների թիվն անցնում էր 3 հազարից (499 ընտանիք, 3221):

Կարսի մարզի Արդվիհի գավառից Արևելյան Հայաստանի վերոհիշյալ վայրերում հաստատվեցին 121 ընտանիք կամ 649 մարդ:²

Բաթումի և Կարսի շրջանների զանազան վայրերից Ալեքսանդրապոլի ու Կարսի գավառներում բնակություն հաստատեցին 62 ընտանիք 404 մարդով:³

Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանում ու Պարսկաստանում հայ բնակչության հետ կողք-կողքի ապրում էին նաև հույներ ու ասորիներ, որոնք շատ հաճախ տեղից-տեղ էին փոխադրվում հայերի հետ միասին: Տեղաշարժերը զանգվածային բնույթ են կրել 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբներից:

Երևանյան կոմիտեն մասնատիպ մեկօրյա վիճակագրություն է անցկացրել նաև հայերի հետ Արևելյան Հայաստան գաղթած հույների ու ասորիների շրջանում, որն էլ համառոտակի ներկայացնում ենք աղյուսակ 3-ում: Հույն բնակչությունը հիմնականում տեղափոխվել է Կարսի մարզից ու տեղավորվել առավելապես մարզի գյուղերում, իսկ ասորիները գաղթել են Պարսկաստանից, մասամբ նաև Թուրքիայից (տե՛ս աղ. 3):

Գավառներ	Գաղթած ընտանիքների թիվը	Արական սեռի բնակչություն	Իգական սեռի բնակչություն	Ընդամենը
1	2	3	4	5
Կարսի	227	857	909	1766
Կաղզվանի	45	183	189	372
Արդահանի	74	2709	2762	5471
Օլթիի	211	735	838	201
Արդվիհի	32	99	102	201
Ընդամենը հույներ՝	1257	4566	4779	9345
Սալմաստի	432	1196	1286	2482
Ուրմիայի	495	1580	1576	3156
Բաշկալեի	13	36	39	75
Սարայի	96	419	373	792
Արդահանի	58	186	168	354
Զանազան վ-ից	99	275	268	543
Ընդ. ասորիներ՝	1193	3692	3710	7402
Ընդ. միասին՝	2450	8258	8489	16747

Այժմ տեսնենք, թե ինչպես են տեղաբաշխվել հույն, ասորի և այլ ազգի պատկանող բնակչությունը և ինչ բնութագրական առանձնահատկություններ են ի հայտ եկել բնակչության տարաբնակեցման ասպարեզում:

Կարսի գավառի մի շարք գյուղերից Կարս են տեղափոխվել 486 հույն, իսկ Կաղզվանի գավառի Խանդարայից՝ 227 հույն:

Արդահանի գավառի Արդահանից Ալեքսանդրապոլ է տեղափոխվել 186 հույն, 6 ռուս, 6 լեհ, 5 վրացի, Մեծ Գարաքիլիսա՝ 48 հույն, 17 ռուս: Բաշկալան է Աշել, որ միայն Արդահանի գավառից Ալեքսանդրապոլ է տեղափոխվել գրեթե 1030 հույն: Օլթիից Ալեքսանդրապոլ՝ 234 հույն, իսկ Կաղզվանից Կարս՝ 154 հույն, 16 ռուս, 7 եզդի և այլն:¹

Մանրամասները թողնելով ավելի խոր ուսումնասիրության նյութ, Աշենք, որ Կարսի մարզի հույն բնակչությունն առաջին աշխարհամարտի ռազմական գործողությունների վայրերից տեղափոխվեց ու հաստատվեց Կարսի մարզի գյուղերում, Շիրակում ու Լոռու մի շարք բնակավայրերում:

Ինչպես Աշվել է վերևում, Պարսկաստանից գաղթած հայերի հետ միասին Արևելյան Հայաստանի տարածք են տեղափոխվել նաև ասորիները,² այսպես. Սալմաստի գավառի Խոսրովա, Փաթավոր, Ուլա և Գյուլիզան գյուղերից դեպի Արարատյան դաշտ ու Ծարուր, մասամբ նաև Նախիջևան ու Շիրակ են գաղթել 132 ընտանիք, 659 մարդ: Ասորիների ամենամեծ գաղթը կայացել է Ուրմիայի գավառից, որի 36 բնակավայրերից գաղթի ուղին բռնեցին 394 ընտանիք, 5462 մարդ, որոնք հիմնականում տեղա-

¹ Նույն տեղում, թերթ 40-94:

² Նույն տեղում, թերթ 149-252:

³ Նույն տեղում, թերթ 254-256:

¹ Մանրամասն տես, ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 21, 11-140 թերթեր:

² Նույն տեղում, 141-248 թերթ:

վորպեցից Արարատյան դաշտում, Կոտայքում, Օարուրում և Նախիջևանում: Արևմտյան Հայաստանի վանի անհանգի Բաշկալեի գավառի Արջ և Սաբա գյուղերից Արարատյան դաշտում, Օիրակում, Կոտայքում, Նախիջևան-Օարուրի գյուղերում են հաստատվում գրեթե 110 ընտանիք կամ 870 մարդ:

Հաջորդ շրջանը, որտեղից գաղթեցին ասորիները, կարսի մարզի Արդահան գավառն էր, որի գյուղերից Ջավախք ու Օիրակ անցած գաղթականների թիվն անցնում էր 60 ընտանիքից (360 մարդ):

Պարսկաստանի ու Արևմտյան Հայաստանի ասորաբնակ մի քանի գյուղերում հաստատվեցին մոտ 120 ընտանիք, 630 մարդ:

Այսպիսով, եթե ի մի բերելու լինենք 1914 թ. վերջին մի քանի ամիսներին ու 1915 թ առաջին մեկ ամսվա ընթացքում Պարսկաստանից ու Արևմտյան Հայաստանից գաղթած հայ, հույն, ասորի և այլ ազգերի մասին եղած տվյալները, կպարզվի, որ այդ շատ կարճ ժամանակահատվածում իրենց բնակավայրերն են լքել ավելի քան 5 հազար ընտանիք, 16,5 հազար տղամարդ, 16,9 հազար կին, ընդամենը՝ 33,5 հազար մարդ:

Վերոգրյալ տվյալները լրացնելու ու ճշտելու համար ուսումնասիրենք մի շարք աղբյուրներ:

Նախիջևանի գավառի փոխանորդի Երևանի փոխ-թեմակալ Տեր Խորեն Նախիկոպոսին հղված նամակից պարզվում է, որ «... Գաղթականության թիվը հասնում է 50 հազարի: Քաղաքումս եղած ասորիների թիվը կհասնի մոտ 10 հազարի, բաժանված հայերը (տեղաբաշխված - Հ. Ա.) մոտ 5 հազարի, իսկ դեկտեմբերի 22-ից սկսած մինչև ցայսօր երկաթուղով անցնողների թիվը դեպի Ռուսաստան, ավելի քան 13 հազար է: Գնացքները միշտ ամբողջովին լցված են լինում հայերով և այստեղ արգելված է տոմսակ ծախելը: ... Գաղթականության գաղթը դեռևս կըշարունակվի թերևս մի շաբաթի չափ»:¹ Նամակը գրվել է 1915 թ. հունվարին: Մեկ ուրիշ նամակից, որ ուղարկվել էր 1915 թ. հունվարի 5-ին Երևանի գաղթականներին խնամող Կենտրոնական Կոմիտեն, երևում է, որ Իգդիրում գտնվող գաղթականների թիվը 1.6 հազար է, իսկ նրա 11 գյուղերում՝ 1.8 հազար, Սարդարապատի գյուղերում՝ 2 հազար, իսկ 1 շմիածնում և Երևանում նրանց թիվը հասնում էր 12-14 հազարի:

Այնուհետև նշվում է, որ Իգդիրում ու շրջակա գյուղերում բնակվող գաղթականների մեծ մասը քայազեցիներ են, որ խնդրել են իրենց թողնել տեղում:⁴

¹ Նույն տեղում, 251-258:

² Նույն տեղում, 267-280:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, 7-8:

⁴ Նույն տեղում, թերթ 12:

Ուշագրավ տեղեկություններ կան պատերազմից տուժածների օգնության Կովկասյան գլխավոր կոմիտեի 1914 թ. դեկտեմբերի 31-ի մի զեկուցագրում (ոուսերեն լեզվով), որում նշվում է, որ Սարիղամիշի տարածքում տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով նրա ամբողջ բնակչությունը կենտրոնացել էր Կարս քաղաքում (ընդամենը 8 հազար մարդ, որից 6 հազարը՝ հայեր):

Միայն Ալեքսանդրապոլ քաղաքում բնակվում էր 3 հազար գաղթական, որից 2400-ը՝ հայ, մնացյալը՝ հույն, իսկ ահա Ախալքալաքի գավառում կար մոտ 500 գաղթական:

Զեկուցագրում հատուկ նշվում է, որ գաղթականների ընդհանուր թվի մասին ճշգրիտ տվյալներ ներկայացնելը շատ դժվար է, քանի որ հաշվառումներն անբավարար են կատարվել, սակայն մոտավոր պատկեր, այնուամենայնիվ, կարելի է ստանալ ձեռքի տակ եղած տվյալներից: Այսպես.

1. Գաղթականներ. Պարսկաստանից, Ուրմիայի գավառից ռուսական տարածք են անցել 900 հայ և 2725 ասորի ընտանիք, Սալմաստի գավառից՝ 2950 հայ, ասորի ու այլ քրիստոնեական՝ 1800 ընտանիք, Խոյի գավառից՝ 320 հայ և այլ քրիստոնեական 165 ընտանիք: Ընդամենը՝ 8660 ընտանիք, եթե յուրաքանչյուր ընտանիք հաշվելու լինենք 7 անձ, կստանանք ավելի քան 60 հազար մարդ, իսկ եթե այս թվին ավելացնենք Թավրիզի 3 հազար գաղթականներին, ապա կունենք Պարսկաստանից գաղթած բնակչության մոտավոր թիվը՝ 63 հազար մարդ, որոնց ավելի քան կեսը հայեր էին:

2. Թուրքիայից Սարիղամիշով ու Կաղզվանով անցած գաղթականների թիվը հասնում էր 30 հազարի:

3. Տարբեր քաղաքներից ու սահմանամերձ գյուղերից գաղթած ռուսահայտակ բնակչության թիվն Արդվիհից մինչև Սարիղամիշ հաշվվում էր 30-35 հազար մարդ: Այսպիսով, ըստ այսվում է, որ Թուրքիայից ու Պարսկաստանից գաղթածների թիվը կազմում է 120 հազար մարդ, սրան ավելացնելով ռուսահայտակների թիվը, կստանանք ընդամենը 150 հազար մարդ:

Գաղթականների աշխարհագրության հետաքրքիր նմուշներ են Երևանում և տարբեր շրջաններում տեղավորված ընտանիքների մասին եղած տվյալները:

Երևանի գավառ	մարդ
Երևան ք.	2316
Կոտայքի շրջան	1485
Ջանգիաբաբ	327
Վառնիքասար	1038
Ընդամենը	5166
Ն. Բայազետի գավառ	մարդ

¹ Նույն տեղում, 42-44:

Ծաղկաձորի շրջան	1223
Ն. Բայազետի շրջան	116
Ընդամենը	1333

Երևանից ուղարկվեցին ու տարբեր շրջաններում տեղափոխվեցին 1518 գաղթական, այդ թվում Արարատի շրջանում՝ 269 մարդ, Կարսում՝ 76, Կաղզվանում՝ 38, Տիփլիսում՝ 169, Ադիս, Արևի, Արարսում՝ 168, Սարդարապատում՝ 124, Նախիջևան-Ջուլֆայում՝ 89, Ալեքսանդրապոլում՝ 360, Իզդիրում՝ 425 մարդ (որի մի մասն էլ անցավ Արևմտյան Հայաստանի խորքերը):¹

1915 թ. հունվարի 30-ին կատարված հաշվառումներից, որոնք անց են կացվել Երևանի, Էջմիածնի, Արմավրի, Նախիջևանի, Ծարուր-Ռարալագյազի, Նոր Բայազետի գավառներում, պարզորոշ երևում է, որ փախստական հայերն ու ասորիները տեղափոխվել են Աշխարհ գավառների գրեթե բոլոր հայկական գյուղերում: Երևանի գավառի 70 գյուղերում բնակչություն էին հաստատել 832 ընտանիք, 2653 տղամարդ, 2547 կին, ընդամենը՝ 5200 հայեր, իսկ ասորիներ՝ 952 ընտանիք, 2903 տղամարդ, 2944 կին, ընդամենը՝ 5847 մարդ, կամ միասին՝ 1784 ընտանիք կամ 9224 մարդ:²

Էջմիածնի գավառի 62 գյուղերում ապրում էին 917 ընտանիք, 3867 տղամարդ, 3835 կին, կամ 7702 գաղթական հայ, սակայն 782 մարդ տարբեր պատճառներով բացակայում էին, այսինքն տեղում հաշվառված էր 6920 հայ: Ասորիները տեղափոխվել էին Փոքր Ծաղիար գյուղում՝ 89 ընտանիք, 26 մարդ:

Ատրմավրի գավառի 14 գյուղերում ապաստանել էին 389 ընտանիք, 1633 տղամարդ, 1651 կին, կամ 3284 հայ, սակայն առկա էր 2974-ը:

Նախիջևանի գավառի 51 գյուղերում հաստատվել էին 1060 ընտանիք, 3285 տղամարդ, 3232 կին, ընդամենը՝ 6517 հայ փախստական, որից առկա էր 5292-ը: Ասորիները տեղափոխվել էին 7 գյուղերում (33 ընտանիք, 106 տղամարդ, 105 կին, 211 մարդ, առկա էր 166-ը):

Ծարուր-Ռարալագյազի գավառի 8 գյուղերում բնակչություն էին հաստատել 173 ընտանիք, 557 տղամարդ, 520 կին, 1077 հայեր, սակայն առկա էր 993 մարդ: Ասորիները տեղափոխվել էին գավառի 14 գյուղերում (263 ընտանիք, 759 տղամարդ, 770 կին, 2606 մարդ, առկա էր 2180-ը):

Նոր Բայազետի գավառի 25 գյուղերում ապաստանած հայերի քանակն էր՝ 135 ընտանիք, 457 տղամարդ, 428 կին, ընդամենը՝ 885 մարդ, առկաների թիվը՝ 820:

Այսպիսով, Երևան քաղաքում ու նահանգի 6 գավառներում ապաստանել էին հայեր՝ 3506 ընտանիք, 12452 տղամարդ, 12213 կին, ընդամենը՝ 24665 մարդ (առկա էր 21600-ը) և ասորիներ՝ 1256 ընտանիք, 3785 տղամարդ, 3841 կին կամ 7426 մարդ (առկա՝ 6002):

Ամբողջ գաղթականների ընդհանուր թիվը հետևյալն էր. 4762 ընտանիք, 16237 տղամարդ, 16054 կին կամ 32291 մարդ, առկա բնակչություն՝ 27602 մարդ:

Դրեթե նույն տվյալներն էին պարունակում 115-121 թերթերում ուսերեճով ներկայացված աղյուսակները:

Ինչպես երևում է վերը բերված նյութերից, 1915 թ. հունվարին գաղթականների իզուր հոսք է եղել Արևմտյան Հայաստանի ու Պարսկաստանի բազմաթիվ, հիմնականում Ռուսաստանին սահմանակից բնակավայրերից: Փախստականների օգնության կոմիտեներն այս պայմաններում հսկայածավալ աշխատանք են լատարել: Բազմաբնույթ այլ աշխատանքների մասին պատկերացում կազմելու համար ներկայացնում ենք աղյուսակ 4-ը, որը վերաբերում է Քանաքեռի գյուղական համայնքում տեղաբաշխված գաղթականներին² (տե՛ս աղ. 4):

Աղյուսակ 4

No	Գյուղեր, որոնցում տեղափոխված էին գաղթականներ	Աճառք, որոնց չի տրվել սննդամթերք	Աճառք, որոնք ստացել են սննդամթերք տղ. I կին I երեխ.			Աճառք, որոնք տեղափոխվել են աշխ.	Ծանոթություն
			3	4	5		
	1	2	3	4	5	6	7
1.	Քանաքեռ	46	59	151	202/23	46	Գյուղական
2.	Ջրվեժ	10	59	107	133/10	10	Ցեղի մի
3.	Ավսև	23	29	92	129/8	23	մասն
4.	Առինք	25	17	64	84/23	25	անցել է
5.	Պարոնի	17	16	43	61/6	17	նախկին բն. վ-երը
	Ընդամենը	121	180	457	609/70	121	

Աղյուսակից երևում է, որ Քանաքեռի գյուղական համայնքում ապաստանած 1437 բնակչից աշխատանքով ապահովված էին ընդամենը 121 մարդ, որոնք, սակայն, նպաստի իրենց բաժինը չէին ստացել և ինչպես տեղեկացնում է փաստաթուղթը, գաղթական տղամարդկանց մի մասն անցել էր հայրենի օջախներ՝ ամենատարբեր նպատակներով: Գաղթականների մեծ ներհոսքի մասին է խոսում նաև ըստ գավառի նրանց թվի ավելացումը, չնայած այդ ժամանակների համար բնորոշ էին բնակչության ակտիվ տեղաշարժերը:

Երևանի գավառում 25 օրվա ընթացքում (1.02.1915թ.-26.02.1915թ.) գաղթականների թիվն ավելացել է 1475 մարդով (4601-ից հասնելով 6076-ի): Ն. Բայազետի գավառում նույն ժա-

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, 111-112:

² Առկա գաղթականների թիվն է. հաշվառման ժամանակ մնացյալը տեղում չի եղել:

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 28, թ. 81-93:

² Նույն տեղում, թ. 123:

մանակահատվածում անը կազմել է 513 մարդ (820-1333), իսկ Իգդիրի գավառում ոչ միայն չէր անել, այլև նվազել էր 951 մարդով (2974-2123): Պատճառը բնակչության ինտենսիվ հոսունությունն էր դեպի հարևան գավառներ:

Գաղթականներին տեղավորում էին ոչ միայն նրանց համար պատրաստված կացարաններում ու տարբեր դպրոցներում, այլև այն բնանախճաններում, որտեղ ինչ-որ չափով հնարավորություն կար: Օրինակ, Երևանի «Ներսիսյան» դպրոցում տեղավորվել էին Արևմտյան Հայաստանի տարբեր գյուղերից գաղթած բնակիչներ, ընդամենը՝ 23 ընտանիք, 81 տղամարդ, 81 կին, 162 մարդ, կամ քաղաքի կոնդ թաղամասի տներում տեղավորվել էին (1915 թ. հունվարի 1-ին) Ղարաքիլիսայի, Համադանի, Խաստուրի, Թոփրակ-Կալայի 326 բնակիչներ, որոնցից 200-ը մինչև հունվարի 11-ը ցրվել էր զանազան գյուղեր, կոնդի 10 տներում մնացել էր 126 փախստական¹:

1915 թ. հունվարի 17-ին Ա. Էջմիածնի կարգադիր մարմին ուղարկված Երևանի եղբայրական օգնության հանձնաժողովի նամակից իմանում ենք, որ մինչև օրս Երևան հասած փախստականներից քաղաքացիները տեղավորված են Երևանում, որոնց թիվը հասնում է 1500-ի, իսկ մյուսները տեղավորվել են զանազան գյուղերում... փախստականների հոսքը դեռ չի դադարել, շարունակում են գալ Պարսկաստանից և Թուրքիայից՝ Էջմիածնի վրայով: Գալիս են նաև Սարգարապատի և Աշտարակի շրջաններում տեղավորվածներից՝ տեղում եղած դժվարությունների պատճառով...»:

Նույն գործում ռուսերենով վավերացված մի փաստաթղթում ներկայացված էր տեղեկանք Երևանի գավառի հայկական ու ասորական գյուղերում 1915թ. փետրվարի 3-ին տեղավորված փախստականների մասին, որն էլ աղյուսակի ձևով ներկայացնում ենք ստորև՝ (տե՛ս աղ. 5):

Աղյուսակ 5

No	Գյուղեր ու գյուղական համայնքներ	Բնակչության թիվը	Հայ Գրիգորյանների թիվը	Հայ կաթոլիկների թիվը	Ասորիների թիվը	Հայեր	Ասորիներ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
	Հանքերի գյուղական համայնք							
1.	Պոտնի	60	36	-	24	36	24	60
2.	Աղզնի	103	-	-	280	-	280	280
3.	Գյոթ Բիլիսա	81	78	-	-	78	-	78
4.	Եղովան	79	84	-	-	84	-	84
5.	Թազաբենդ	100	85	-	28	85	28	113
6.	Օաղաթ	85	53	11	24	64	24	88
7.	Ելլար	115	85	-	36	85	36	121
8.	Սհուր	26	22	-	14	22	14	36
9.	Առինջ	106	47	-	-	47	-	47
10.	Ավան	101	44	27	-	71	-	71

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 28, թ. 1-7:

² Նույն տեղում, թ. 13:

³ Նույն տեղում, թ. 22:

1	2	3	4	5	6	7	8	9
11.	Ջովեձ	102	96	-	-	96	-	96
12.	Հանաթեռ	218	89	-	-	89	-	89
13.	Նովոնիկոլայևա	28	7	8	-	15	-	15
	Ընդամենը՝	1204	126	46	406	112	406	1178
	Արամուսի գյուղական համայնք							
14.	Արամուս	265	68	-	59	63	59	137
15.	Աղազոր	40	-	27	7	27	7	34
16.	Ջառ	65	-	-	78	-	78	78
17.	Կամոնից	230	50	-	79	50	79	129
18.	Մաթողան	221	48	-	22	48	22	70
19.	Թեփրաբաթ	150	27	-	15	27	15	42
20.	Բաշքենդ	150	68	49	61	117	61	168
	Ընդամենը՝	1111	261	76	321	337	321	658
	Բաշգզանի գյուղական համայնք							
21.	Բաշգզանի	302	-	-	117	-	117	117
22.	Գյոլ Ախոր	50	-	-	68	-	68	68
23.	Գողթ հայկական	70	-	-	17	-	17	17
	Ընդամենը՝	472			202		202	202
	Ծիրաբաթի գյուղական համայնք							
24.	Ջաֆարաթա	41	54	-	-	54	-	54
25.	Ծիրաբաթ	122	80	-	26	80	26	106
26.	Վարմազիսար	52	54	-	18	54	18	72
	Ընդամենը՝	215	188		44	188	44	232
	Նորագավթի գյուղական համայնք							
27.	Թազաբենդ	202	89	-	107	89	107	196
28.	Նորագավթի	108	45	-	70	45	70	115
29.	Ներքին Ծեմգավիթ	34	5	-	32	5	32	37
	Ընդամենը՝	344	139		209	139	209	348
	ԸՆդ. գավառում՝	3296	1314	122	1182	1436	1182	2618

1915 թ. մարտի 14-ին Իգդիրից ստացված մի հեռագրից իմացվում է, որ Բասենի գավառի բնակչությունը հասել է Բալագետ: Աբեղան պատմել է, որ սրի է քաշվել 13 գյուղ: Ներկայացնում ենք գաղթականների թիվն ըստ գյուղերի՝ (տե՛ս աղ. 6): Գաղթականների կուտակման գիտավոր կենտրոններ էին դարձել Երևանն ու Էջմիածինը, որտեղից էլ նրանց տեղաբաշխում էր կատարվում: Երևանի հանրակացարաններում տեղավորված գաղթականների թիվը 1915 թ. մարտի 17-ին հասնում էր 2600 մարդու, իսկ Իավաղումն 1915 թ. հունվարի 22-ին նրանց թիվը 950 էր, որոնցից 800-ը՝ ասորիներ, 150-ը՝ հայեր, նրանք էլ տեղաբաշխվել էին այսպես. Դավաղուով՝ 700 մարդ, Ռեհանլուում՝ 100 մարդ, Արագաղայանում՝ 150 մարդ²:

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, թ. 132-148:

² Նույն տեղում, թերթ 62-111:

Գյուղեր	Ընտանիք	արական	իգական	աշխատունակ	մինչև 3 տարեկան	Ընդամենը	Գաղթից հետո մահ.	Տանկատար ճուճ մնացից
1	2	3	4	5	6	7	8	9
Էջեպար	25	84	90	31	25	174	21	25
Իշխա	22	62	73	29	20	135	12	4
Քյուրա Քյո	20	68	72	31	15	140	8	7
Խոտրկավան	13	46	32	15	12	78	10	-
Եաղան	9	33	32	15	6	65	9	2
Ռայի Բարա	7	16	11	8	1	27	5	4
Գոմաձոր	6	14	16	6	4	30	1	-
Գրդարա	4	22	8	7	3	30	2	3
Թողովխան	4	12	9	5	2	21	4	1
Հարոնի քառ	4	8	10	4	3	18	-	2
Կարինից Քյոթակ վերաբնակվածներ	2	6	7	2	2	13	1	1
Տոտի	1	4	1	2	-	5	-	-
Խորասան	1	2	5	-	1	9	-	-
Ալիկարակ	1	2	2	-	1	4	-	-
Ընդամենը	119	381	386	156	95	149	14	49

Գաղթականների հոսքը շարունակվում էր, նրա ինտենսիվությունը կախված էր Առաջին աշխարհամարտի ռազմական գործողությունների ընթացքից, մասնավորապես ռուսական զորքերի առաջխաղացումներից ու նահանջից:

Հայաստանի «Եղբայրական օգնության» հանձնաժողովների 1915 թ. ամռանը անց կացրած հաշվառումները բացահայտեցին գաղթականների քանակի ավելացման փաստը: Բերենք մի քանի օրինակներ, տեսնելու, թե որքանով էր ավելացել փախստականների թիվն անցած 5-6 ամիսների ընթացքում: 1915 թ. հուլիսի 23-ի գիշերը (ինչպես նշվում է զեկուցագրում) գաղթականների ճոր հոսք էր ստացվել Ջուլֆայում: Նահանգապետի համաձայնությամբ գաղթականները տեղաբաշխվում են այսպես. 5 հազար մարդ տեղավորվում է Նախիջևանում, 3 հազարը՝ Ծարուրում: Նրանց ազգային պատկանելիության մասին փաստաթղթում նշված է. «Վ մասնավորի հավաստիացայ աս տեղեակն՝ ճոջայն ասորի լիմելն»:

1915 թ. փետրվարի 10-ին կազմված մեկ այլ ցուցակով Ալաշկերտի գավառի գյուղերից գաղթել ու Էջմիածնի շրջանի Գեշլյուր գյուղում են հաստատվել 54 ընտանիք կամ 395 մարդ,¹ իսկ Արտաշատի շրջանի Այասլու գյուղում փետրվար ամսին բնակվում էր 41 ընտանիք կամ 177 հայ գաղթական:² Երևանի գավառի Նորագավթի գյուղական համայնքում, ըստ փետրվարի 20-ի տվյալների, հաստատվել էր 278 ընտանիք 1055 շնչով: Միայն կանանց ու երեխաների թիվն անցնում էր 800-ից:³

1915 թ. մայիսի 15-ին մեկ այլ փաստաթղթում, որը կազմել էր «Եղբայրական օգնության» Երևանի կոմիտեի նախագահ Խորեն Եպիսկոպոսը, ներկայացվում է Երևանի և Նոր Բայազետի գավառներում բնակություն հաստատած գաղթականների թիվը:

Երևանի գավառ		Նոր Բայազետի գավառ	
1. Քանաքեռի գյուղ. համայնք	1230 մարդ	1. Ռնդամայի գյուղ. համայնք	191 մարդ
2. Արամուտի գյուղ. համայնք	820 մարդ	2. Չիրիքի գյուղ. համայնք	302 մարդ
3. Բաշգանի գյուղ. համայնք	229 մարդ	3. Ախտայի գյուղ. համայնք	357 մարդ
4. Շիրաբաթի գյուղ. համայնք	202 մարդ	4. Նոր Բայազետի գ. համայնք	160 մարդ
5. Նորագավթի գյուղ. համայնք	359 մարդ	5. Աղբրիի գյուղ. համայնք	104 մարդ
		6. Կալիկարդաշի գյուղ. համայնք	94 մարդ
Ընդամենը	2841 մարդ	Ընդամենը	1208 մարդ

Ծարուր-Դարալագյազի Ալաքլիհի գյուղական համայնքում հաստատվել էին 1194 փախստական, Ուլյա-Նորաշենի գյուղական համայնքում՝ 259, իսկ Զեյվայի գյուղահամայնքում՝ 307, ընդամենը՝ 1760 գաղթական:⁴

Բերված թվերը ցույց են տալիս, որ 1914 թ. վերջերից մինչև 1915 թ. կեսերն ընկած ժամանակահատվածում, հայ և այլ լազգի գաղթականների (փախստականների) ներհոսքը Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի զանազան բնակավայրերից ոչ միայն չի դադարել, այլև ավելի է արագացել: Ասկայն նույնը չենք կարող ասել 1916 թ. կատարված փնտնագրության տվյալները վերլուծելիս: Այստեղ աճը կամ չնչին է, կամ էլ գաղթականների թիվը նվազել էր, չհարմարվելով տեղի պայմաններին, տղամարդիկ տեղափոխվում էին Ռուսաստանի և Անդրկովկասի խոշոր քաղաքներ՝ աշխատանք փնտրելու:

Գրեթե մեկ և կես տարի անց, 1916 թ. հուլիսի 19-ին կատարած փնտնագրության համաձայն, Քանաքեռի գյուղական համայնքում տեղավորված գաղթականների քանակն արտահայտված էր հետևյալ թվերով (համեմատության համար տե՛ս աղյուսակ 6-ը)⁵ (աղ. 7):

No	Գյուղերի անվանումը	Անձինք, որոնք սննդամթ. չեն ստացել	Անձինք, որոնք ստացել են օգնություն տղամ. կից երեխան.	Աշխատող մարդկանց թիվը	Ծանոթություն		
1	2	3	4	5	6	7	8
1.	Քանաքեռ	47	58	154	230/28	47	Աշխատողների մի մասը գտնվում է հայրենի օթախներում
2.	Զոլմեծ	22	48	109	96/12	22	
3.	Ավան	33	32	87	122/9	33	
4.	Առնթ	17	20	55	68/18	17	
5.	Պողոնի	8	11	28	38/0	8	
6.	Աղոնի	3	3	8	16/2	3	
7.	Մհոթ	1	11	17	22/3	1	
	Ընդամենը	131	183	458	592/112	131	

¹ Նույն տեղում, թերթ 209:
² ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 28, թ. 69-76:
³ Նույն տեղում, թերթ 156:
⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 28, թ. 157:

⁵ Նույն տեղում, թերթ 162:
² Նույն տեղում, թերթ 163:
³ Նույն տեղում, թերթ 151:

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ Քանաքեռի համայնքում փախստականների թիվը նվազել է 87 մարդով (աշտեղ հաշվի չեն առնվել Արզնի և Մհուր գյուղերը, որոնք Աղյուսակի 5-ում չկան): Գաղթականների թիվն ավելացել էր Քանաքեռ և Ավան բնակավայրերում, նվազել էր Զրվեծ, Առինջ և Պտղնի բնակավայրերում:

Որպես ամփոփում վերը շարադրված թվային տվյալների, 1916 թ. կեսերին կատարված վիճակագրության համաձայն, Արևելյան Հայաստանի տարածքում ապաստան էր գտել ավելի քան 95 հազար փախստական: Աղյուսակի ձևով ներկայացնենք այդ տվյալներն ըստ գավառամասերի (տե՛ս աղ. 8)

Աղյուսակ 8

No	Գավառներ ու գավառամասեր	Տղամարդ	Կին	Երեխաներ	Աշխատունակ տղերի	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
1.	Երևանի գ. ի 1-ին մաս	372	2182	2825	301	6180
2. 2-րդ մաս	542	854	1458	290	3144
3. 3-րդ մաս	715	984	1918	549	4166
4.	Էջմիածնի գ. ի 1-ին մաս	3206	4284	4179	1168	12837
5. 2-րդ մաս	1987	2759	638	699	6083
6. 3-րդ մաս	470	568	1316	186	2540
7.	Գրամիսյի գյուղ համ.ք	310	440	489	281	1520
8.	Սուրմալուի գ. ի 1-ին մաս	-	-	-	-	640
9. 2-րդ մաս	1017	1234	-	-	2251
10. 3-րդ մաս	-	-	-	-	1094
11.	Նոր հայազետի գավառ	3111	3816	3540	-	10467
12.	Ծարուր-Դարայագյազի գ.	46	78	108	-	232
13.	Նախիջևանի գավառ	87	153	253	55	548
14.	ք. Երևան	3887	5078	9142	-	18107
15.	Ալեքսանդրապոլի գավառ	2505	7565	10045	3155	25970
	Ընդամենը	21455	29995	35911	6684	94045

Եթե Աղյուսակ 8-ի տվյալները համեմատենք 1915 թ. հունվարի 30-ին կայացած հաշվառման տվյալների հետ, կտեսնենք, որ ընդհանուր առմամբ գաղթականների թիվը զգալի ավելացել էր: Այսպես. Երևանի ու Էջմիածնի գավառներում փախստական բնակչության թիվն ավելացել էր մոտ 3,4 անգամ. հսկայական էր Նոր հայազետում հաստատված բնակիչների թվի աճը՝ 12.7 անգամ, փոքր աճ նկատվել էր նաև Սուրմալուի գավառում (1.3 անգամ): Տարակուսանք է առաջացնում Ծարուր-Դարայագյազի և Նախիջևանի գավառներում հաստատված գաղթականների թիվը: Այն ոչ միայն չի աճել մեկ ու կես տարվա ընթացքում. այլև նվազել էր 9-10 անգամ: Այստեղ պատճառները կարող են լինել շատ տարբեր: Արժանին հատուցելով վիճակագիրների կատարած աշխատանքին, նշենք, որ Նախիջևանի գավառը հանդիսացել է գաղթականների կուտակման վայր. որտեղից նրանց տեղաբաշխել են տարբեր շրջաններ:

Որ հիշյալ գավառներում փախստական հայերի ու հատկապես ասորիների թիվը մեծ էր, կարելի է համոզվել նախորդ էջերում շարադրվածից: Մեր կարծիքով, վերը նշված երկու գավառներում գաղթականների թվի անկումը 1916 թ. կեսերին, պայմանավորված էր քաղաքական ու սոցիալ-տնտեսական անտանելի իրավիճակով, որի հետևանքով էլ փախստականների մեծ մասը թողնում հետևում էր դեպի հյուսիս՝ Խուսաստանի, ինչպես նաև իրենց հայրենի եզերք: Այս մասին է խոսում հետևյալ փաստը. 1916 թ. օգոստոսի 13-ին «Վերաբայական օգնության» կոմիտեին հաղորդվում է, որ «... ներկայումս ք. Երևանում ապրում է 13865 գաղթական:

Եշեմ, որ ռուսական զորքերի վերջին նահանջը թուրքական ճակատում, հանգեցրեց նրան, որ Երևան են վերադառնում այն փախստականները, որոնք մեկնել էին հայրենիք, նրանց թիվը աստիճանաբար կարելի է ենթադրել, որ օգոստոսի վերջերին Երևանում կլինի ոչ պակաս 18000 փախստական»¹:

Աղյուսակից պարզվում է, որ փախստականների մեջ հիշատակվում են նաև թաթարներ, որոնց թիվը փոքր է և հայտնի չեն նրանց տեղաբաշխման վայրերը:

Հայտնի է, որ փախստականներն ապաստանել են Արևելյան Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, իհարկե, տարբեր խտությամբ: Աղյուսակ 7-ը լրացնելու նպատակով ներկայացնենք Ղարաքիլիսայի գյուղական համայնքի 27 բնակավայրերում տեղաբաշխված փախստականներին վերաբերող որոշ տվյալներ:²

1916 թ. օգոստոսին Ղարաքիլիսայի գյուղական համայնքում ապաստան էր գտել 753 ընտանիք, 1060 տղամարդ, 1334 կին, 2081 երեխա, ընդամենը՝ 4475 մարդ, որոնցից նպատ էին ստացել 4191 մարդ, իսկ աշխատանքով ապահովված էին ընդամենը 284-ը: Այս տվյալներն ավելացնելով աղյուսակի ընդհանուր արդյունքին, կտեսնանք 1916 թ. կեսերի համար գաղթականների մոտավոր մի թիվ, որը հավասար էր 100 հազարի և որի 50 տոկոսը բաժին էր ընկնում վասալորականից, Մյուշից, Բիթլիսից ու հարակից վայրերից գաղթած բնակչությանը:

Փախստականների անկանոն տեղաշարժերը երեք խոշոր տեղությունների սահմանամերձ տարածքներում շարունակվում էին: Եթե արաբական անապատներ քվյոդ հայերը հիմնականում ենթարկվում էին ֆիզիկական բնաջնջման, ապա կոտորածներից հազիվ փրկված ու Արևելյան Հայաստանի տարածքում ապաստանած փախստականները զոհ էին դառնում սովին ու համաճարակին:

Ինչպես ասվեց, Երևանը և հատկապես Էջմիածինը փախստականների կուտակման կենտրոններ էին ու այդ տեղերից էին տեղաբաշխում կատարում: Մեծ թվով գաղթական հայերի համար էլ դրանք դարձան վերջին հանգրվան: Դառնալով

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, թ. 146:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, թ. 148-149:

³ Армянский вопрос, Энциклопедия, Ереван, 1991, с. 77.

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 28, թ. 153:

բնական ու սոցիալական ահապոր պայմանների զոհ, նրանք իրենց մահկանացուն կրեցին Ար. Էջմիածնի շրջակայքում ու Երևանի կայսրանում: Էջմիածնում միայն 1915 թ. օգոստոսի վերջերին սովի ու համաճարակի զոհ դարձան 2613 մարդ, իսկ մեկ տարի անց, 1916 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 8-ն ընկած ժամանակահատվածում Էջմիածնի վանքի տարածքում տեղավորված 32 հազար գաղթականներից նույն պատճառներով զոհվեցին 4595 մարդ, Երևանում ապաստանած 20 հազարից՝ 867-ը:¹

Հետագա տարիները նույնպես մռայլ էին հայ ժողովրդի համար: Արդեն 1916 թ. վերջերին Կովկասում էին հաստատվել 373.5 հազար գաղթական, նրանց օգնելու համար ստեղծվում էին օգնության ու բարեգործության կոմիտեներ ու գրասենյակներ, որոնք սակայն անկարող էին լիովին հոգալ ծով տառապանքի մեջ գտնվող տարագիրներին:

Երբ 1917 թ. Ռուսաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, ռուսական զորքերը թողեցին Արևմտյան Հայաստանի գրաված տարածքները ու հետ քաշվեցին: Օգոստեմբերի այդ հանգամանքից և իսխությունից 1917 թ. Երզնկայի հաշտության համաձայնագիրը, թուրքերն ամբողջ ճակատով անցան հարձակման, նպատակ ունենալով հետ գրավելու ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև ամբողջ Անդրկովկասը:

Արդյունքում հայրենիք վերադարձած գաղթականների մի մասը կոտորվեց, փրկված մասն էլ կրկին դարձավ փախստական ու անցավ Ռուսաստանի սահմանը: Իրանց թիվը հասնում էր 150 հազարի:²

Թափառական հայերի թիվը ստվարանում էր, իսկ տարածման աշխարհագրությունը՝ ընդլայնվում: Օսմանյան կայսրության տարածքում բնակվող 2.5 միլիոն արևմտահայերից կենդանի էր մնացել միայն 850 հազար մարդ, դրանցից 200 հազարը մի կերպ իր գոյությունը պահպանեց Թուրքիայում, շուրջ 200 հազարը, գլխավորապես կանայք ու երեխաներ, բռնի մահմեդականացվեցին, 250 հազարը ապաստան գտավ Ռուսաստանում ու Անդրկովկասում, իսկ 200 հազարը տառապում էր Միջագետքի ու Սիրիայի ճամբարներում, որտեղից էլ նրանց մի մասը 1916-1917 թթ. անցավ Լիբանան, Եգիպտոս, Ֆրանսիա, ինչպես նաև Ամերիկա մայր ցամաք և այլուր:

Կովկաս ու Ռուսաստան գաղթեցին հիմնականում ալաշկերտցիներ, բայազետցիներ, վանեցիներ, մշեցիներ, ինչպես նաև կարսեցիներ, արդահանցիներ ու արդվինցիներ: 1918 թ. նրանց թիվը հասավ կես միլիոնի, որի մի մասն էլ տեղավորվել էր Արևելյան Հայաստանում:

¹ Ա. դր. Մեծ դեպքերը Վասպուրականում, 1914-1915 թթ. Երևան, 1917, էջ 485:

² Հայ ժողովրդի պատմություն, Բ. 6, Երևան, 1981, էջ 576:

³ Զ. Կորկոտյան, Մերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Երևան, 1929, էջ 31:

⁴ Армянский вопрос, Энциклопедия, Ер., 1991, с. 77.

⁵ Հայ ժողովրդի պատմություն, Բ. 6, Երևան, 1981, էջ 576:

⁶ Նույն տեղում, էջ 575:

Թուրքական զորքերն առանց մեծ ջանքերի, նորից տեղադրվելով Արևմտյան Հայաստանին, 1918 թ. ներխուժեցին Անդրկովկաս, այս անգամ նոր ավեր սփռելով արևելյան հատվածում: Իրենց հայրենի օջախներն էին լքում ու փախչում Անդրկովկասի ու Ռուսաստանի զանազան վայրեր, տեղացի ու գաղթական հայ բնակչությունը: Այսպես՝ Բաթումի շրջանից արտագաղթեց 20 հազար մարդ, Կարսի մարզից 120 հազար, Ախալցխայի գավառից՝ 30 հազար մարդ, Ախալքալաքի՝ 80 հազար, Ալեքսանդրապոլի՝ 60 հազար, Էջմիածնի ու Սուրմալու գավառներից՝ շուրջ 80 հազար, Երևանի, Գարուրի ու Նախիջևանի գավառներից՝ մոտ 100 հազար մարդ: Նույն թվականի ՀՀ կառավարության հոկտեմբերի 11-ի նիստում գեկուցվում է, որ ռուսահայ գաղթականների թիվը հասել է 180 հազարի, թուրքահայ գաղթականությանը՝ 150 հազարի, ընդամենը՝ 330 հազար մարդ: Գաղթականներն, ըստ սոցիալական վիճակի, բաժանված էին երեք կարգի. ա) նրանց ավելի քան 30 տոկոսը ունի սեփական միջոցներ և կարող է ապրել առանց օգնության, բ) 62.5 հազար գաղթական կարող է ապրել սեփական աշխատանքով, գ) մնացած մասն առանց պետության օգնության չի կարող գոյությունը պահպանել և ստորաբաժանվում էր հետևյալ խմբերի. որբեր՝ 10 հազար մարդ, անճարներ՝ 25 հազար, «անգլյակներ»՝ 1000, մասնավոր օգնության կարիք ունեցողներ՝ 26.5 հազար մարդ:

Ընդհանրացնելով վերը բերված բոլոր տվյալները գաղթականների քանակի մասին, ճշման, որ 1918 թ. Հայաստանում կային ավելի քան 400 հազար արևմտահայ գաղթականներ ու որբեր, որոնցից հենց միայն սովից ու բազմաթիվ համաճարակներից զոհվել էին շուրջ 180 հազար մարդ, իսկ 1919 թ. միայն սուաջին 5 միլիոններին Երևան քաղաքում մահացել էր 3972 մարդ:³ Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, մասնավորապես 1919 թ. կատարված մարդահամարի տվյալները (վիճակագիր՝ Հանրապետության վիճակագրության բաժանմունքի կառավարիչ՝ Բ. Իշխանյան) հանգամանակից արտացոլում են թուրքահայ գաղթականների տեղաբաշխման պատկերը: Ընդհանուր պատկերացում կազմելու՝ և նախորդ տվյալների հետ համեմատելու հնարավորություն ստանալու նպատակով ներկայացնենք այդ աղյուսակ գաղթականներին վերաբերող հատվածները (տե՛ս աղ. 9):

¹ Նույն տեղում, էջ 575:

² Հայաստանի կենտրոնի հասարակական քաղաքական հետազոտությունների ինստիտուտի արխիվ, Կառավարական լրագրեր, 1918 թ. հոկտեմբեր 12, էջ 2:

³ Հ. Ու. Մելիքեյան, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, Երևան, 1975, էջ 57:

⁴ Զ. Կորկոտյան, ճշվ. աշխ., Աղյուսակ 2:

Գավառներ	Գաղթականներ							
	հայ		մահմեդական				այլը	
Երևանի	15426	3201	18627	4260	4260	-	-	-
Ալեքսանդրապոլի	31929	2342	34271	-	-	-	-	-
Էջմիածնի	31272	7580	38852	9495	9495	-	-	-
Նոր Բայազետի	3418	519	3937	-	-	-	-	-
Ղարաքիլիսայի	21439	1136	22575	-	-	-	-	-
Դիլիջանի	7484	35	7519	335	335	194	194	-
Դարալագյազի	429	3002	3431	600	600	-	-	-
Սուրմալուի	938	535	1473	-	-	-	-	-
Ընդամենը Երևանի նահանգում	112335	18350	1306585	14690	14690	194	194	194
Կարսի	22429	2552	24981	1151	2046	050	1379	2429
Ադրաբանդի	162	-	62	2652	4278	6930	3891	3891
Կաղզվանի	589	23	612	254	781	1035	968	968
Ընդամենը Կարսի մարզում	23180	2575	25755	4057	1105	11162	018	5270
Չանգեզուրի	4502	1102	5604	-	-	-	-	-
Ընդամենը Հայաստանում	140017	22021	162044	18747	1105	25852	018	5462

Վերջին երկու աղյուսակների բաղադրումը ցույց է տալիս, որ նախ նրանք տարբերվում են իրենց ընդգրկումով: Նախորդ աղյուսակում չեն արտացոլված մի շարք գավառների սվլյակներ, որը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու Արևելյան Հայաստանի գաղթական բնակչության թվի ու տեղաբաշխման մասին, իսկ աղյուսակ 9-ում ներկայացված է միայն Հայաստանի Հանրապետության տարածքը, բացակայում է Նախիջևանի գավառը՝ Ծարուրի հետ միասին, հետևաբար մեր վերլուծությունները կարող ենք կատարել գավառ առ գավառ:

Երեք տարվա ընթացքում (1916-1919) Հայաստան աշխարհի այդ փոքր տարածքում (Արևելյան Հայաստանի) անասն-լի աղետների ենթարկվեց հայ բնակչությունը: Բավարարվեց դրանց թվարկումով: Առաջին աշխարհամարտ, որի ժամանակ թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստանի տարածք՝ ավեր ու ավար սփռելով իրենց ճանապարհին: Նույն 1918 թ. սեպտեմբերին նրանք իրականացրին Բաքվի հայ բնակչության ջարդերը (կոտորվեց շուրջ 30 հազար մարդ), իսկ հաջորդ տարիներին նոր ջարդեր սկսեցին Ղարաբաղում և հարակից հայաշատ բնակավայրերում: Այս ամենին էթե ավելացնենք համատարած աղքատությունն ու սովը, համաճարակային բազմաթիվ հիվանդությունները, իսկ արդյունքում՝ մահացությունների մեծ տոկոսը և զանգվածային արտագաղթը, պատկերը միանգամայն պարզ կդառնա: Ինչպես հայտնի է, այդ տարիներին ամբողջ Անդրկովկասում բնակչության թվի ընդհանուր անկում էր արձանագրվել, բնականաբար դա անդրադարձել էր նաև գաղթական բնակչության թվի վրա, սակայն ընդհանուր ամսմար էրեք տարիների ընթացքում ներգաղթի նորանոր հոսքերի հետևանքով, նրանց քանակը չնչին ան էր ունեցել (5360 մարդ): Ըստ գավառների, մեխանիկական ան էին ունեցել Էջմիածնի, Դարալագյազի ու Ալեք-

սանդրապոլի գավառները, իսկ անը բացասական արժեքներ ունեցն Երևանի, Սուրմալուի և Նոր Բայազետի գավառներում:

Վերջին աղյուսակում բերված երևանի նահանգի պունակի թվերն արտահայտում են Հայաստանի Հանրապետության տարիներին Անդրկովկասի և Ռուսաստանի հայաշատ վայրերից ներգաղթած բնակչության քանակը: Ինչպես երևում է աղյուսակից, գաղթական հայերի հետ միասին, Արևելյան Հայաստանի տարածքում հաստատվել էին նաև թուրքեր, քրդեր, եզդիներ ու ռուսներ, որոնք կազմում էին գաղթական ամբողջ բնակչության ավելի քան 20%-ը:

Պանթուրքիստական համոզմունքներով տոգորված թուրքական կառավարող շրջանները, չբավարարվելով արևմտահայերի հրեշավոր կոտորածներով, ամեն կերպ աշխատում էին պատերազմ սանձազերծել Հայաստանի Հանրապետության դեմ:

1920թ. կեսերին սկսվեց թուրք-հայկական պատերազմը, թուրքական բազմապատիկ զորքերի դեմ անկարող հայկական զորամիավորումները մի քանի անհաջող մարտերից հետո հետ քաշվեցին, և հաշտության բանակցությունների սրդյունքում Հայաստանը վերջնականապես զրկվեց իր տարածքների և բնակչության զգալի մասից /Կարսի մարզ, Սուրմալուի և Նախիջևանի գավառներ/: Կորուստը հսկայական էր, որն էլ ավելի մեծ թափ հաղորդեց բնակչության չտեղաշարժերին: Այս պատերազմի զոհ դարձավ 198 հազ. մարդ:

1918-1923 թթ. քաղաքական ծայրահեղ բարդ ու լարված պայմաններում թուրքերին հաջողվեց հրի ու սրի օգնությամբ, իրենց հատուկ վայրագությանը ամապացնել ամբողջ Կիլիկիան: Մեծ եղեռնի ժամանակ մի կերպ փրկված ու տարբեր երկրներում ապաստանած, սակայն վերստին հայրենի օջախներ վերադարձած շուրջ 160 հազար հայեր նորից կանգնեցին բնաջնջման փաստի առջև: Հրաշքով փրկվածները հանգրվան գտան Սիրիայում ու Լիբանանում:

1921 թ. Թուրքիայի արևմտյան շրջաններում իրականացված սպանող հայերի բնաջնջման վերջին ակտն էր, որով էլ ավարտվեց հայ բնակչության ջարդերի շրջանը, որը սկսվել էր դեռևս սուլթան Համիդի օրոք 1894-1896 թթ.:

Հայ բնակչության վիճակն էլ ավելի վատթարացավ Հայաստանի Հանրապետության անկման շրջանում (1921): Համատարած սովի ու թշվառության պայմաններում ավելի քան 10 հազար հայ գաղթականներ, թողնելով իրենց գույքն ու կայքը, մեկնեցին Պարսկաստան:

Հայաստանի Հանրապետության տարիներին մահմեդական բնակչությունը անցնում է Ադրբեջանի տարածք, սակայն Խորհրդային իշխանության հենց առաջին ամիսներից պայմաններ են ստեղծվում, որպեսզի նրանք վերադառնան իրենց բնա-

¹ Армянский вопрос, Энциклопедия, Ереван, 1991, с. 274.

² Հայկական Սովետական հանրագիտարան, Սովետական Հայաստան, Երևան, 1987, էջ 164:

կավայրերը: Նրանց թիվը հասնում էր 100 հազարի, որն էլ էական դեր խաղաց բնակչության էթնիկ պատկերի վրա:

Խորհրդային շրջանում կազմակերպվեց մաս աշխարհով մեկ սփռված հայերի հայրենադարձությունը, որը կատարվեց երեք փուլով.

Առաջին փուլը ընդգրկում է 1921-1936 թթ., որի ընթացքում հայրենադարձվեց 42.2 հազար հայ, հիմնականում Իրաքից, Իրանից, Հունաստանից, Թուրքիայից, Ֆրանսիայից ու Բուլղարիայից:

Երկրորդ փուլը ընդգրկում է 1946-1948/49 թթ. որի ժամանակ ամենից մեծ ներգաղթը տեղի ունեցավ, հայրենադարձվեց 89.7 հազար հայ 12 երկրներից (Իրան, Հունաստան, Լիբանան, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա, Եգիպտոս, Պաղեստին, Իրաք, ԱՄՆ և այլն): 1950-ական թվականներին հայրենադարձվեց ընդամենը 4000 հայ:

Երրորդ փուլը սկսվեց 1962 թ. և երկու տասնամյակի ընթացքում հայրենիքում հաստատվեցին 32.5 հազար հայ, աշխարհի գրեթե 30 երկրներից (Իրան, Սիրիա, Թուրքիա, Կիպրոս, Իրաք, Հունաստան, ԱՄՆ, Արգենտինա, Ֆրանսիա, Բուլղարիա, Հորդանան, Ուրուգվայ, Իտալիա, Լիբանան և այլն):

Այսպիսով, 1920-1980 թթ. սփյուռքից հայրենիք դարձավ շուրջ 170 հազար հայ:

Գաղթավայրերի, նրանց կազմավորման, նրանցում եղած հայերի թվի փոփոխությունների մասին մեզանում շատ է գրվել և հրատարակվել: Չժամայվելով, ճշեմք միայն, որ մինչև 1915 թ. սփյուռքի հայերի թիվը (առանց Ռուսական կայսրության) հասնում էր 175 հազարի, որից 25 հազարը՝ Բուլղարիայում, 10 հազարը՝ Ռումինիայում, 20 հազարը՝ Եգիպտոսում ու Հարեջստանում, մնացյալները՝ Եվրոպայի ու Ասիայի երկրներում: Նրանց շարքերը ստվարանում էր Առաջին աշխարհամարտի տարիներին ու հետո, այսպես, միայն Սիրիայում ու Լիբանանում 1920 թ. կար 150 հազար հայ, ԱՄՆ-ում, Կանադայում՝ 125 հազար, Եվրոպական երկրներում՝ 168 հազար: Երկու տարի անց 1922 թ. վերջերի տվյալներով, Եգիպտոսում, Սուդանում ու Հարեջստանում ապրում էր 28 հազար հայ, Պարսկաստանում՝ 50 հազար, Հնդկաստանում, Մավայում, Ավստրալիայում ու Միջագետքում՝ 15 հազար, Թուրքիայում՝ 281 հազար հայ: 1920-1922 թթ. գաղթօջախներում բնակվող հայերի թիվը հասնում էր 870 հազար մարդու (բացի Ռուսաստանից): Ահա հիմնականում այս գաղթավայրերից է, որ վերը նշված փուլերի ընթացքում հայ բնակչությունը հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան:

Այժմ կանգ առնենք վերոգրյալ փուլերի ընթացքում հայրենադարձված բնակչության քանակի ու նրանց տեղավորման աշխատանքների վրա, միաժամանակ ճշելով այն երկրները, որտեղից գաղթել են մեր հայրենակիցները:

Խորհրդային կառավարությունը 1921 թ. վերջերից ձեռնամուխ է լինում աշխարհով մեկ սփռված հայերի ընդունման գործին: Առաջին քարավանը Բաթումի նավահանգիստ է հասնում 1921 թ. դեկտեմբերի վերջերին:

Միջագետքից գաղթած 3000 հայերի մեծ մասը տեղավորվեց Ալեքսանդրապոլի, Բասարաբեյի ու Ղամարուլի շրջաններում: Հայրենադարձ հայերի երկրորդ քարավանը 3000 մարդով տեղ է հասնում 1922 թ. հունվարի կեսերին ու ժամանակավորապես տեղավորվում է Ղամարուլի գորանցներում՝ զարնանը վերջու շրջան տեղափոխվելու նպատակով (Հայաստանի կառավարությունը պատրաստ չէր միանգամից այդքան գաղթական ընդունելու՝ հատկապես ձմռանը): Հետագա ամիսներին նույնպես շարունակվում է հայրենադարձությունը, որոնց թիվը 1922 թ. սկզբներին հասնում է 9 հազարի:

1923 թ. շուրջ 100 մարդ վանից, Պարսկաստանից ու շրջակա վայրերից ներգաղթեց Խորհրդային Հայաստան:

1924-1925թթ. Հունաստանից, Միջագետքից ու Թուրքիայից Հայաստան են գաղթում 10 հազար մարդ: Պոլսից ու Միջագետքից հայրենադարձված հայերը տեղավորվեցին հիմնականում Երևանի ու Լեհնականի գավառների գյուղերում: Գաղթականների թշվառ ու աղքատ վիճակի մասին վերը շարադրվել է: Նշենք միայն, որ նրանց թիվը գնալով աճում էր, անցնելով 9 հազարի սահմանը:

Միայն 1925 թ. Բաթումով ու Ջուլֆայով Հայաստան հասան 5016 մարդ, այդ թվում՝ Հունաստանից 1098 ընտանիք (3651 մարդ), Կ. Պոլսից՝ 201 ընտանիք (780 մարդ), Բաղդադից եւ ընդհանրապես Միջագետքից՝ 160 ընտանիք (385 մարդ):

1925 թ. նոյեմբերին Հունաստանից գաղթած 3016 հայերը ցրտերի պատճառով տեղավորվեցին Երևան ու Լեհնական քաղաքներում, իսկ 1500 մարդ՝ Արազդայանում (նախատեսված էր բոլորին տեղավորել Արազդայանում), հիմնականում Արազդայան, Արմաշ, Սուրենավան ու Մոտ գյուղերում:

1921-1925 թթ. ընթացքում գաղթած հայերի ընդհանուր քանակը ներկայացնենք աղյուսակով, որը վերցրել ենք Հ. Մելիքսեյանի գրքից (տե՛ս աղ. 10):

Աղյուսակ 10

Տարեթիվ	Որտեղից են ներգաղթել	Ընտանիքների թիվը	Ներգաղթածների թիվը
1	2	3	4
1921	Միջագետքից		3000
1922	Միջագետքից, Իրանից, Կ. Պոլսից և այլ վայրերից	2001	6552
1923	Վանից, Իրանից և այլ վայրերից	258	953
1924	Հունաստանից, Կ. Պոլսից, Միջագետքից և այլ վայրերից	783	4167
1925	Հունաստանից, Կ. Պոլսից, Միջագետքից և այլ վայրերից	1459	5016
	Ընդամենը՝	4507	19688

¹ Армянский вопрос, Энциклопедия, Ереван, 1991, с. 274.
² Հ. Ու. Մելիքսեյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ., Երևան, 1975, էջ 119-126: Ա. Ալյուդանյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Ա-Գ, 1941-1955, Ե. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիր հայ գաղթավայրերի պայմանության, հ. Ա-Բ, Երևան, 1964-1967:
 Հ. Ու. Մելիքսեյան, նշվ. աշխ., էջ 110-115:

Աղյուսակից պարզորոշ երևում է, թե որ վայրերից ինչքան մարդ է գաղթել, սակայն հստակ է այն, որ գաղթականների ընտանիքների անդամների միջին թիվը հավասար է 4.4 մարդու, որ գրեթե կրկնակի քիչ էր ավանդական հայ ընտանիքների թվից/գաղթի, տարագրության ու փախուստի ճանապարհին ընտանիքի անդամների թիվը զգալիորեն նվազել էր կոտորածի, սովի ու համաճարակի պատճառով/:

Գաղթական հայերի նոր հոսք է սկսվում Խորհրդային Հայաստան 30-ական թվականների սկզբներին: 1932-1933 թթ. Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից մայր հայրենիք գաղթեցին շուրջ 8007 մարդ:

Զգալի թվով (6926 մարդ) հայեր էլ այս ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (1926-1936 թթ.) ներգաղթի ուղին բռնել էին անհատապես, այդ ընթացքում հայրենադարձվեց 22598 մարդ: Ամփոփելով 1921-1936 թթ. արդյունքները, ստանում ենք մայր հայրենիք դարձած հայերի թիվը՝ 42286 մարդ: Ներգաղթած բնակչության մի մասը (1932-1933 և 1936 թթ.) տեղավորվեց նրանց համար կառուցված ավաններում, հատկապես Երևանում ու նրա շրջակայքում, Լեհինականում, Կիրովականում, Անի-Պեմզայում, Իջևանում, Ստեփանավանում, Լամբալուի սովխոզում և այլն, սակայն գյուղական վայրերում տեղավորված գաղթականները, չհարմարվելով տեղի պայմաններին, մեկնեցին ու բնակություն հաստատեցին Երևան ու Լեհինական քաղաքներում:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայրենադարձների հոսքը գրեթե դադարել էր, այն վերսկսվեց պատերազմի ավարտից անմիջապես հետո: Սփյուռքում սկսվեց հայրենիք դառնալու մի հզոր շարժում: Այդ մասին են վկայում այն քաղմաթիվ հայտերը, որոնք ուղարկվում էին Խորհրդային իշխանությունների հասցեով: Բելրուսի նավահանգստից առաջին քարավանը Բաթում հասավ 1946 թ. հունիսի վերջերին՝ 1806 մարդով: 1946 թ. հուլիսի կեսերին հայրենիք ճանապարհվեցին 1100 ռումինահայեր ու 4383 բուլղարահայեր: Նույն թվականի աշնան ամիսներին 4974 մարդ ներգաղթեց Հունաստանից: Իրանից 1946 թ. ընթացքում հայրենադարձվողների թիվը ամենամեծ էր, ավելի քան 20.5 հազար մարդ: Ուրեմն միայն հունիս-հոկտեմբեր ամիսներին Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Բուլղարիայից ու Ռումինիայից Խորհրդային Հայաստան անցան 10801 ընտանիք, կամ 50945 մարդ: 1946 թ. ներգաղթած հայերը տեղավորվեցին 32 քաղաքներում ու շրջաններում: Քաղաքներում հաստատվեց 21004 մարդ (այդ թվում Երևանում՝ 14 հազար), շրջկենտրոններում՝ 3994, կոլտնտեսություններում՝ 17863, սովխոզներում՝ 3185, այլ բնակավայրերում՝ 4198 մարդ:

Հայրենադարձների մեջ գրեթե 21 հազարը աշխատունակ էր (ամբողջի 41 տոկոսը), այդ թվում գյուղացիները կազմում էին աշխատունակ հայրենադարձների 45 տոկոսը, բանվորներն ու արհեստավորները՝ գրեթե 30, այլ մասնագիտություններով զբաղվողները՝ 25 տոկոսը:

1947 թ. երկրորդ կեսին (հուլիս-դեկտեմբեր) հայրենիք դարձան ընդհանուր առմամբ 8521 ընտանիք կամ 35401 մարդ:

Ներգաղթի լավ կազմակերպվածության մասին է խոսում այն փաստը, որ միայն Սիրիայից ու Լիբանանից մի քանի ամիսների ընթացքում հայրենիք մտավ հինգ քարավան, յուրաքանչյուրում՝ 2.5-3 հազար մարդ:

1947 թ. ընթացքում հայրենիք ներգաղթածներից բնակություն հաստատեցին քաղաքներում՝ 21719 մարդ, շրջկենտրոններում՝ 2250, բնակավանդներում՝ 1624, կոլտնտեսություններում՝ 7344, սովխոզներում՝ 2464 մարդ: Աշխատունակներ էին՝ 15100 մարդ, որից արհեստավորներ էին աշխատունակ հայրենակիցների ավելի քան 47 %-ը, բանվորներ՝ 28, երկրագործներ՝ 18, մտավորականներ ու այլ զբաղմունքի տեր անձինք՝ 17%-ը:

1948 թ. Եգիպտոսից, Ռումինիայից ու Չինաստանից հայրենադարձվեց ընդամենը 897 ընտանիք կամ 3092 մարդ, իսկ ԱՄՆ-ից ներգաղթեց 93 ընտանիք կամ 162 մարդ:

Այժմ աղյուսակի ձևով ներկայացնենք 1946-1948 թվականների ընթացքում հայրենադարձված ընտանիքների ու շնչեկների քանակն ըստ երկրների (տե՛ս աղ. 11):

Աղյուսակ 11

Երկրի անվանումը	1946թ. ընտ.թ.	1946թ. մարդ.թ.	1947թ. ընտ.թ.	1947թ. մարդ.թ.	1948թ. ընտ.թ.	1948թ. մարդ.թ.	Ընդ. ընտ.թ.	Ընդ. մարդ.թ.
Սիրիա Լիբանան	3794	19253	2525	12985	-	-	6319	32238
Բուլղարիա	1248	4483	-	-	-	-	1248	4383
Իրան	3870	20597	-	-	-	-	3870	20597
Ռումինիա	517	1738	-	-	308	1046	825	2784
Հունաստան	1372	4974	4478	13241	-	-	4850	18215
Ֆրանսիա	-	-	1518	5260	-	-	1518	5260
Եգիպտոս	-	-	486	1669	580	2023	1066	3692
Պաղեստին	-	-	243	1260	-	-	243	1260
Իրաք	-	-	177	856	-	-	177	856
ԱՄՆ	-	-	88	151	-	-	88	151
Չինաստան	-	-	6	16	9	23	15	39
Ընդամենը՝	10801	50945	8521	35403	897	3092	20219	89475

Աղյուսակում չենք ընդգրկել 1949 թ. տվյալները, քանի որ գաղթականներ են գրանցվել միայն մեկ երկրից և որի տվյալներն ավելացնելով ու ամփոփելով երկրորդ փուլի տվյալները, 1946-1948/49թթ. համար կատանանք ներգաղթած ընտանիքների թիվը 20312, իսկ մարդկանց թիվը 89637 (այլ տվյալներով՝ 20646 և 89750): Հետաքրքիր է նշել, որ միայն Սիրիա-Լիբանանից ու Իրանից գաղթած հայերը կազմում են հայրենադարձածների ավելի քան 59%-ը:

Հայրենադարձության երրորդ փուլում՝ 1962-1982 թթ. ընդհանուր հաշվով գաղթել է 6795 ընտանիք կամ 31920 մարդ, ըստ որում, ամենից շատ ներհոսք է եղել 1969 (896 ընտանիք, 4516 մարդ), իսկ ամենից քիչ 1981 թ. (35 ընտանիք, 140 մարդ): Քսան տարիների ընթացքում, ավելի քան 30 երկրներից հայրենադարձածների քանակն ըստ երկրների հետևյալ տեսքն ունեն. Իրանից գաղթել են 5039 ընտանիք, 24283 մարդ, Սիրիայից համապատասխանաբար՝ 889, 4848, Եգիպտոսից՝ 275, 727, Թուրքիայից՝ 125, 547, Կիպրոսից՝ 134, 505, Լիբանանից՝ 113, 378, Իրաքից՝ 75, 291, Հունաստանից՝ 31, 53, ԱՄՆ-ից՝ 22, 50, Ֆրանսիայից՝ 33, 71,

Արգենտինայից՝ 18, 49, Իսրայելից՝ 6, 25 և մնացյալ 34 ընտանիքները կամ 93 մարդիկ՝ աշխարհի տարրեր ծայրերից:

Հայրենադարձները տեղավորվեցին Հայաստանի 20 քաղաքներում՝ 5933 ընտանիք, 27092 մարդ և Արարատի, Արտաշատի, Աշտարակի, Հոկոտեմբեղյանի, Էջմիածնի, Նաիրիի, Թալիսի, Հրազդանի ու Ղափանի 27 սովխոզներում, ընդամենը՝ 862 ընտանիք կամ 4828 մարդ: Երևանում բնակություն հաստատեցին 339 ընտանիք կամ 807 մարդ, Լեհնականում՝ 1278, 5935, Կիրովականում՝ 1020, 4729, Հրազդանում՝ 762, 3775, Արոյանում՝ 780, 3720, Չարենցավանում՝ 594, 2828, Էջմիածնում՝ 262, 1224, Մասիսում՝ 212, 1004:

Ներգաղթած ամբողջ բնակչությունն ըստ սեռի ուներ այսպիսի տեսք. 16807-ը տղամարդիկ էին, 15113-ը՝ կանայք, ըստ տարիքային կազմի. մինչև 18 տարեկաններ՝ 44%, մինչև 45 տարեկաններ՝ 38%, 46-ից բարձր՝ 18%: Կրթություն ուներ միայն 26%-ը: Աշխատունակ բնակչության գերակշռող մեծամասնությունը՝ արհեստավորներ, երկրագործներ, բանվորներ և այլն. տեղավորվեցին աշխատանքի:

Ամփոփելով վերը շարադրվածը, նկատում ենք, որ դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներից սկսած արևմտահայ բնակչության կոտորածները շարունակվեցին և ավելի հրեշավոր ձևեր ու չափեր ստացան 20-րդ դարի առաջին քսանամյակում: Բնաջնջվեց շուրջ 2 միլիոն հայ, իսկ հրաշքով փրկվածները ստեղծեցին ու համարեցին Սփյուռքը: Իրանց թիվը հասնում էր 800-850 հազարի: Մեծ եղեռնի ընթացքում և հետագա տարիներին, մինչև Հայաստանի խորհրդայնացումը, ջարդերից փրկված բազմաթիվ ընտանիքներ հաստատվեցին Անդրկովկասի ու Ռուսաստանի տարածքներում, մասնավորապես՝ Արևելյան Հայաստանում: Միայն 1916 թ. վերջերին Կովկասում հաստատված հայ գաղթականների թիվն անցնում էր 373.5 հազարից: 1914-1920 թթ. ընթացքում Արևելյան Հայաստանի տարածքում հաստատվեց մոտավոր հաշվարկներով, գրեթե 200 հազար գաղթական, որոնց գերակշռող մեծամասնությունը /150 հազարը/ հայեր էին, իսկ 1920-1980 թթ. Սփյուռքից հայրենիք վերադարձան գրեթե 170 հազար հայեր:

Վերջում նշենք, որ հողվածում վեր հանած հարցերի շրջանակները բավականին ընդգրկում են, հատկապես նախախորհրդային շրջանը դեռևս կարոտ է հանգամանալից ուսումնասիրության:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆ - Պանթուրքիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում.....5

ԻՌԻԲԵՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ - Եղեռնը և բուլճերիզմը.....21

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ - Արևմտահայերի գաղթը արևելյան Հայաստան 1915 թ. հետո.....36

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՄԱՌՆԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ

Մաս 3

**Հրատարակչության
խմբագիր և սրբագրիչ՝ Դ. Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Ստորագրված է տպագրության 1995 թ.
Չափսերը՝ 84x108 1/32: Թուղթ՝ տպ. № 1: Տպագրության
եղանակը՝ օֆսեթ: Հրատարակչական 5,1 մամուլ:
Տպագրական 3,125 մամուլ – 5.25 պայմանական մամուլի:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 181

Ազգային հարցի և գեներոլիյի ուսումնասիրման կենտրոն

Երևան, Մարշալ Բուդրանյանի պող. 24 ^Դ

Ծարվածքը՝ ԱՀԳՈՒԿ

Երևանի համալսարանի «Ռոտապրինտ» արտադրամաս,
Երևան, Ալ. Մանուկյան փ. 1

ԵՊՀ Գրադարան

